


1 to

1238

1 9 9 9

ՍԱՐԿ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՃՈՒՂՈՒԻՔԱՆ

ՄՈՌԱՑՈՒՄԸ ԼՂԻՄԲԸ



Թ Ի Յ Լ Ի Ս

Արագածոտիկ տպարան ՄՆ. Մարտիրոսեանի

ՄԻՔԱՑԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, ՏՈՒՆ № 81.

1 8 9 6

ՀԱՅԿԱՆ ՄԱՅՆԱԳՐԱԿԱՆ ԲՆԱՅՐԱՆ

ՀԱՅԿԱՆ ՄԱՅՆԱԳՐԱԿԱՆ ԲՆԱՅՐԱՆ

Дозволено цензурою. Тифлисъ. 26-го Июля 1896 г.



41238-60

38. 1242

ՀԱՅԿԱՆ ՄԱՅՆԱԳՐԱԿԱՆ ԲՆԱՅՐԱՆ
1896 թ. 26-րդ Իուլի
8081

մարմինն զվարճալ հարապիրտք բնիճ գոյրաճ
միմիարմն առաջ խոստատար տղամեծն լամաճազ
ին նաեւադատ շանք բնիճն հարապիրտք բնիճն միմի
արա բնիճն լամաճազն առաջ գոյրաճն նախ փոքրաճ
լուսնիճն լամաճազն զվարճալ լամաճազն լամաճազն

ՔԱՀԱՆԱՅԻ ԸՆԾՐՈՒԹԻՒՆԸ ԳԻՒԴՈՒՄ.

Ա.

Տէր-Հայրապետի մահից յետոյ խաչ գիւղի հայոց եկեղեցու զանգակի ծրնկոցը երկար ժամանակ կտրուել էր։ Զինականներն ամիսը կամ երկու ամիսը մի անգամ հազիւ թէ քահանայ էին տեսնում և կամ զանգի ձայն լսում ու երեսները խաչակներում։

Խաչեցիներին տեղական գործակալի կարգադրութեամբ իբր թէ հովուում էր այդ գիւղից ինն վերստ հեռաւորութիւն ունեցող Զէն գիւղի ժողատէր քահանայ տէր-Քոսակը։ Այս քահանային կարծես թէ Աստուած պատժել էր կամ սաթայէր նորովի։—Ողորմելու փորումը ոչ այստեղի կտոր կար, ոչ գլխին խելք և ոչ ծուռ ճիւղիկ մորուս։ Նա քահանայութիւնը քող աշուղի պէս էր անում, միայն, այն զանազանութեամբ, որ սազ (չոնգուր) չունէր. այսինքն իւր նախորդից ականջով ինչ լսել էր, այն էր երգում ու բերան կարգում, կղկզացնում և ոչ այն, ինչ որ գրուած կամ տպուած էր ճաշոցում և շարակնոցում։

Հարիւր ծխից բաղկացած խաչեցիք սեփական քահանայ չունենալու պատճառով շատ նեղութիւն էին կրում: Գիւղում՝ ծնունդ, մահ, տարածամ, մի խօսքով՝ ուրախ կամ տխուր ծէս ու խորհուրդ պատահած ժամանակ խեղճերը ձմեռուայ ցրտին—լոյսով թէ գիշերի կիսին Խաչից ոտով կամ ձիով սըրտապատառ դուրս էին ընկնում գնում դէպի Ձէն և անկանոն ճանապարհին հարիւր ու մի տեղ քիթ ու պոռնոգները խփելով հասնում էին տէր-Քոսակի խրճիթի դուռը և բալխում ու կանչում.

—Տէր-տէր, տէր-տէր . . .

—Էրէցկի՛ն, ըհը՛, էի՛ եկան հա:

—Տէր-տէր, տէր-տէր, էհէ տէր-տէր . . .

—Տէրտրակին, ջլիս սո՛ւս տաղ արա, ձէն չհանես. թող մը քիչ էլ գոռայ,—ձեռը տիրուհու բերանին դնելով ասում էր Քոսակ բաբան:

—Տէր-տէր, էհէ տէր-տէր...—չարունակ լըսում էր դուքսը:

—Ա՛ էրէց, դէ բոլ ա է՛ ինչքան որ սուս կացար, կարելի ա մի վռազ բան ունի, մեղը ա, փորը պտառեց, հէյ արա,—մարդու կողքին բզելով ասում էր ողորմած տիրուհին:

—Էտ ո՞վ ես, ա՛ղա, էս վախտիս ի՛նչ խաբար ա,—վերջապէս դուռը բանալով ներսից հարցնում էր «Քոսի ապին», որին այդպէս էին անուանում քահանայանալուց առաջ՝ մկրտանութեան ժամանակ:

—Ա՛ տէր ջան, թէ քու որդու արեւը կը սիրես,

լեզ արա, փարաջէդ կեց, որ գնանք. աղպէս դժար հիւանդ ա:

—Վայ, աղպէր ջան, վայ . . .,—լալով շտապեցնում էր լքացած գիւղացին:

—Ըհ, հարամդադա, գալ չեմ. իշի պէս քնել էք, քնել ու գիշերան կիսին գալի՛, գնա՛, կորի, որ մեռնի էլ, գալ չեմ,—դուռը վրադնելով ասում էր Քոսին:

Տէր-տէր, քի մատաղ, տէր-տէր, կեց որ զընանք, աղպօրս հոգեվարք եմ թողել՝ անհաղորդ կլի:

—Ջհանդամի է սի ատակին թէ անհաղորդ կլի, ես ո՛նց անեմ...

—Տէր-տէր ջան, ես մեղայ Ասծու, տէր-տէր, մեր տունը սուգ ու շիւանի մէջ ա, տէր-տէր,—խեղճ աղքատը անօրէնին ալաչող անգօր գերու պէս վիզն ուսովը ձգած աղիկտուր պաղատում էր պատի տակ:

Քոսին երբեմն հաղիւ թէ գիջանում էր գիւղացու աքտասուահեղձ պաղատանքին. հոգաթափները ոտներն առնելով՝ պատառոտուած վերարկուն ուսերն էր քաշում, որ գնայ խաչեցի հիւանդին հաղորդի:

Հիւանդատէր խաչեցին անլեզու ձիւ գլխին ու կողբերին չոր ճիւղտով անդադար խփելով տէր-Քոսինի առաջն էր ընկնում և անհամբեր սրտով պաղատելով շտապեցնում նորան, իսկ նա փորաքաւ ընկած քեօխովի պէս շարունակ ոտնակախում էր: Գիւղացին հասկանալով տէր Քոսինին, դարձաւ նրան և ասաց.

—Տէր-տէր ջան, ճակատդ քսած մեռոնին մատաղ, ձիդ լեզով քշի, վախէ՛ մի, լաւութիւնդ վրէս

չեմ թողալ, հլէ հեշ օլմասա մի գօծի էլա կտամ:

Դիւղացու այդ խոստումը միայն արագացնում էր Քոսինի ձիու քայլերը: Այնուհետև նա խաչեցու ետևից ընկած՝ էլ քարուփոսի մէջ ընկնելու չէր մըտիլ տալիս, այնպէս շտապում էր: Սակայն, յաճախ պատահում էր, որ թրքմփալէ ընկնելով ձիուց, փոսի մէջ վիզը տակովն էր լինում ու ցեխում թաղւում:

Այդպէս մի անգամ ևս մի ցարուտ հանդով Ձէն գնալիս Քոսինի ձին թփի տակից փախչող նապաստակից խրտնեց և նրան փշերի ու ցաքիների մէջ ձգեց. բայց դրանով Քոսին անվտանգ չմնաց, այլ մի սուր և ամուր փայտ դաշոյնի պէս աչքումը ցցուեց ու սախատեց նրան:

Տէր-Քոսին իր վարձն ստացաւ,—այնուհետև տէր-Քոսակի փոխարէն անունը քող Քոսի մկրտուեցաւ: Դիւղացիներից ով չարանում էր վրան, հէնց աչքին էր հայհոյում:

Բայց, Քոսին ամեն անգամ չէր կարողանում հասնել ու հաղորդել խաչեցի հիւանդ հոգեվարքին. րոպէական մահը շատ անգամ չէր համբերում նրա գնալուն—անհաղորդ էր անում հիւանդին:


Այդ այդպէս...

Մի անգամ էլ ծաղկազարդի կիրակին մօտենում էր: Խաչ գիւղի պառաւները շաբաթ երեկոյեան տան բոլոր անգամների համար պատրիքներ էին ոլորել, հարսնացուների համար ծաղկէ մոմեր ու ընծաներ էին պատրաստել և անհամբեր սպասում էին տէր-Քոսինին, որ գայ աներէց գիւղում ծաղ-

կազարդի տօն կատարի, որ իրենք էլ, ըստ սովորութեան, մոմավառութիւններով և կանաչ ճիւղ ու ոստերով ուրախանան Աստուծոյ և հայրենի տաճարում: Բայց, ինչպէս ասում են, խեղճ խաչեցոց մուրազը փորներումը մնաց, աչքները ջուր դարձաւ այն օրը, իսկ տէր-Քոսին կորաւ, չեկաւ, չերևաց:

Խաչեցիք հարց ու փորձ արին, իմացան, որ Ձէնցիք տէր-Քոսակի հետ շատ թիւնդ կռուել են—չին թողացել, որ Խաչ գայ, սպառնալով թէ՛ «Եթէ մեր էրէցն ես, պէտք ա մեր մէջ մնաս, մեզ հըմար ժամ ասես, մեզ հըմար մկրտես, թաղես... մենք քեզ խու խաչեցոց համար չենք օխնել տուել. չես ուզըմ, մեր գեղիցը դուրս լի. մենք մեզ հըմար ուրիշ տէրտէր կճարենք...»:

Խաչեցիք այդ անգամ էլ անպատարագ մնացին:

—  —

Բ. Մի ուրիշ անգամ անցնում էր մեծի պահոցը. ամբողջ գիւղական համայնքը պաս ու ծոմ էր: Խաչում ոչ մի պատարագ չէր արուել ապաշխարութեան օրերում: Ծաղկազարդի և այլ ուրախ տօնախմբութիւնները կրկին տխուր էին անցել խաչեցոց համար: Հոգևոր մխիթարութիւնը երկար ժամանակ բացակայում էր նրանց միջից:

Ջատկի ագիգ շաբաթն էր. պառաւների ու ծե-

րերի առամի տակ պատառ հաց չէր ընկնում: Նրանք կոկորդները չորացրած ամբողջ օրերով ծոմ էին. օրական միայն մի անգամ էին սննդւում, որպէս զի աւելի արժանի լինին սուրբ հաղորդութեան խորհրդին:

Աւագ ուրբաթն էլ անցկացաւ, խաչեցիք Քրիստոսի սուգին էլ հասրաթ մնացին, թէև տէր-Քոսին Զատիկին նրանց պատարագ էր խոստացել, սակայն կասկածում էին, որ Զատիկի մեծ տօնին էլ անմխիթար, անհալորդ են մնալու. ուստի ծերերը վճռեցին մարդ ուղարկել Ձէն գիւղը՝ տէր-Քոսինին պատարագի հրաւիրելու:

— Բա ում զրկենք, ով կը գնայ, ում անգամն ա օխնուած, — հաւաքուած գիւղացիների մէջ աչք ածելով հարցրեց ծերունիներից մինը և մտերմաբար մօտենալով երկու երիտասարդի, ձեռի ափը թիկունքներին տալով ետ մտիկ արաւ և ամբոխին մատնացոյց անելով ասաց բարձր ձայնով. «սրանցից զոչադ տըղէրք էք ուզըմ, հրէս, հրէս. սրանց ջանին մատաղ, մինը մնիցն աւելի իգիթ են. սրանք կը գնան, այ, սրանք...»

Երիտասարդները ծերունու գովասանքից քաջալերուեցին. իսկ ծերունին նրանց դառնալով կրկին քաջալերեց.

— Մակի, Ղուկաս ջան, դուք իմ հիւներն էք, ձեզ հրմար էն՝ դայդի սիրուն հրնացուք ճարելու եմ, որ եթէ ըրեգնակէ դարին կաղնին, նրա լուսը խաւարացնեն: Դէհ ձեզ մատաղ, տեղներիցդ վե կա-

ցէք, չուխերնիդ հանեցէք ուսներդ պցեցէք ու նի հառէք, որ բերէք ըռաւօտը մեզ հրմար պատարագ անի... դէ հա, դէ հա, վե կացէք, ամա էնտեղ եղանաք ոչ, վրակրնկներիդ ետ եկէք:

Տղերքը տեղներից վեր կացան, պատրաստուեցին և զեռ ճանապարհ չ'ընկած հարցրին ծերունուն:

— Քիբի ամի, որ գնանք ինչ ասենք:

— Ըրիցի տունը խու գլիդար:

— Գիւղանք, հա:

— Դէ որ գլիդար, ձեզ մատաղ, առաջ կը գնար գռանը կը կաղնէք ու կը հրցնէք թէ՛ էրէցը տանն ա, ետոյ մարդավարի փափախներնիդ վե կուռէք, ըրիցի ձեռը կը համբուրէք, ըրիցկնկայ հետ էլ բըրդութին կանէք (կը բարկէք) ու կասէք, տէր-տէր ջան, մեր գեղի խալխը՝ մեծ, սլուճուր, ծեր, պառաւ, մէր մանուկ, մի խօսքով ամենն էլ հաղորդուելու են ու քե են մնըմ, մեր քեօխվայ-քեաղխուղէքը խնդրուեցին, որ էգուց գաս խոստովանես ու սրբութին տառ խալխին. մացաք:

— Հա, հա:

— Դէհ էլ կաղնիլ միք, ձեզ մատաղ, վագ տուէք:

— Մակի, Ղուկաս ջան, հա դէսը մտիկ արէք, հրէս հա, ախկ, թիւ, տափին թըրմ եմ, հլէ չուել թըրիս ցմարիլը դուք խաբարը պէտք ա ետ բերէք...

Քիբի ամինի ազրէյիլ հիւները թռան դէպի Ձէն. նրանք այնպէս էին գնում, որ կասէիր ոտների տակից կրակ էր թափւում:

Գիւղացիները դարձեալ շարունակում էին խօսակցութիւնները:

—Քիբի ամի,—ասաց մէկը,—տղերանցը զրկեցիր, ամա ըրիցին թողալու չեն թէ գայ:

—Խի, օ Մուս, (Մուսէս):

—Նհէ, որ ձէնըցիք մեր էն տարուայ հանդի դաւուց (վէճից) դէսն ա ծուռն աչքով են մտիկ անում մեզ, հետեւերս մուռ (ոխ) են անում...

—Հա, դրուստ ա ասում, մըհետ հետը կռիւ ին գցել թէ՛ խաչ մի գնալ, մենք նրանց հետ աչքով աչքը չունենք, որ տեսնուենք...

Լսողներից սկսեց խօսիլ մի ուրիշն էլ, բայց այդ խօսակցութիւնից դեռ մի քանի ժամ չանցած յանկարծ բոլորի ուշադրութիւնը գրաւեցին վերադարձող երիտասարդները:

—Պահ, հրէ գալիս են տղերքը,—ասացին ամենքը և աչքները ձէնից եկող ճանապարհին գցեցին:

Քիբինի հիւնները քրտինքում մզում էին. նրանք եկան, փայտները տափովը տուին և կանգնեցին կալի ափին:

—Այ իմ դոշաղներ, թուրս հլա ցմաքել չի,—ասաց Քիբի ամին, նայելով թքած տղիին.—դէ, աւէցէք, տղայ էք, թէ աղջիկ:

—Աղջիկ ենք, աղջիկ,—ժպտալով ասացին հիւները:

—Խի, ասեց գալ չեն:

—Հա, ասեց «գեղացիք թողում չեն, էգուց չաբաթ ա, մեզ հըմար դեմ սպտարագ անիլ...»:

—Թիւ, այ նրա լած-չլած (եղած) միւրուքն էլ վեր գայ...,—անիծեց ծերունին, տեղը նստեց և դառնացած լռեց:

—Բա սուս ես կենում թէ ինչ անես, Քիբի ամի. խալիսը չէ որ ծոմ են:

—Ինչ անեմ, այ որդի:

—Ինչ դես անիլ, էլի դու խաթրով մարդ ես, վե կաց, գնա, միւննաթ արա բալի հլէ կիրակի օրն էլա գայ, մեղք են էս խալիսը մի սաղ տարի ա տուանց սրբութիւն են մնացել... ջահելի խօսքին ինչ կը լսեն, որ զրկեցիք:

—Էհ, իլլաջս ինչ, էլի ես գնամ, տենամ ինչ եմ անում,—ասաց Քիբին:

—Քիբի ամի, եթէ ըռաւօտը գնաս ու էրէցը չգայ, ձիուդ ըռէիսը թեքի գնա, գործակալին գանգատ արա, ասա տէր-Քոսին հրամանդ լսում չի...

—Հա, էտ խու կանի ու կանի:

—Մթամ ըռանց գործակալի գալու չի, որ ես գնամ:

—Կը գայ, թէ որ լաւ մհանայ գտնէք:

—Ինչ մհանայ, դէ ամենդ էլ միտք արէք տենանք:

—Թող գնայ ասի թէ՛ ծննդկան հիւանդ կնիկ կայ, արի հաղորդի:

—Հա, ես իմ Աստոծը, էտ որ անի անպատճառ կը գայ:

—Գրանից աւելի լաւ մհանայ ես գիտամ:

—Ասա տենանք:

—Թող գնայ ասի թէ ննջեցեալ կայ, արի թաղի, հոտըմ ա՛... —

—Հա՛... էլ խօսալ մի՛ր, լաւ ասեց Գալուստ ապին, մուրի անըմը որ տաք կը գայ, թէկուզ չէնըցիր թողան էլ ոչ։ Ես իմացել եմ, որ Կանաքատորից հրաման կայ, թէ՛ «որ քահանան որ մեռելը հոտացնի՝ ութ տարի Սևան կըղրկենք»։

—Դա լաւ ասեց, դրանից կը վախի, կը գայ,— ասացին նրանք, և արդէն մութն էր, ցրուեցին։

Քիբի ամին, իւր համագիւղացիների խնդրի համաձայն, առաւօտը շատ վաղ վեր կացաւ, նոր չուսեն հագաւ, ուսերին նայելով լծկերը ետ ծալեց, քեաղխուղական մեծ ու բրդոտ փափախը փայտով թափ տուեց, դրեց գլխին ու ձին հեծաւ ձէն գնաց։

Ձէնի նոր կանաչող բլրից, որտեղով թանձրամորուս ամին գիւղը պիտի իջնէր, երևում էր տէր-Քոսինի խրճիթն ու կալը, ուր երէցը տափակ գըլխարկը մի կողմը ձգած, շաղախուած մորուսով, մի ֆէս կատարին, կարկատորած կապի փէշէրը հաւաքել գօտին էր խրել, անդրաւարտիկը սղածիճների տակովն էր արել և մի կացին ձեռնին մի աճարի գերանի վրայ շէք արած՝ մեծ եռանդով կրակափայտ էր ճղոտում։ Ճղոտովի արած փայտից նրա հարսն արդէն մի գիրկ ներս էր տարել վրատուել կրակին, որի ծուխը հետըզհետէ մզանալով ու խտանալով վեր էր բարձրանում։ Քիբի ամին դիմաց գուրս գալուն պէս ծուխն ու տէր հօրը երբ նկատեց, ինքն իրեն ասաց.

—Էրէցը մսի թիրա ա ճարել հա... —

Բայց մինչև նրա կալն իջնելը Քոսի հօր քամակից տնցնող մի անճանաչ գիւղացի բարեկեց նրան բարձր ձայնով։

—Բարի աջողըմ քե, ապէր,— ասաց գիւղացին։

—Աղա, էտ սրտեղացի ես, ա՛ էչ, ա՛ ընկամազ, քօռ խու չես, խալխի «ապէր»-ը սհենց ա ըլըմ. տենըմ չես որ տէրտէր եմ,— մորուսը ցոյց տալով ասաց նա գիւղացու ետեից։ Գիւղացին ամօթխած լռեց ու գնաց. իսկ Քիբին միւս կողմից իջնելով ձիուց և խօսքը յարմար տեղին խփելով ասաց հանաքով.

—Վալլահ, տէր-տէր, բրիցի տարած փրաջէդ որ կեցդ չի, եթէ ձէն չիր հանել, ես էլ դի բարի աջողըմ ասիլ օխնեատէրի փսխանակ։

—Հա, դու, դօրթ ա քեաթխուղա ես, ամա խելքս քեանից էլա էտ թափուր բան կտրըմ. այեամըս (ժամանակս) խարաբ ա լել...

—Է՛, բա որ խարաբ լած չլի, մեռելներս տանը կը հոտացնեն,— առանց որևէ կասկածի նշան ցոյց տալու, այդ արդէն լրջօրէն ասաց Քիբին։

—Հահ, հահ, հահ, ի՛նչ,— քմերծիծաղ տալով հարցրեց Քոսին։

—Քեանից մուրտէրը գանգատ ա տալու, եթէ ձեռաց մեր գեղը չհասնես։

—Քիբի ապէր, հլէյի թէ հանաք անելիս չլես։

—Ի՛նչ հանաք, մարդի մեռելը երկու օր ա մընացել ա թաղելու...

—Վահ, ա՛, ո՛նց թէ թաղելու։

— Ես քեւ ասում եմ, որ քեանից գանգատ են պատրաստել, որ կանստորը զրկեն:

— Խի՛, ի՛նչ եմ արել, իմ մեղքն ի՛նչ ա:

— Է՛ն, որ մարդ ենք զրկում կուշտդ, իմաց ենք ապլի, գալիս չես:

— Տօ էն մարդի հէրն անիծած, նա որ եկաւ խի՛ չէր կարգին ինձ ասում թէ՛ մեռել կայ, քանց ասում էր՝ արի, որ պատարագ անես. թի՛ւ, թի՛ւ,— թքեց Քոսին ու զայրացած կացինը գետնովը տուեց և գնաց գոմից ձին դուրս քաշեց, տուն մտաւ թուխ մորթուց կարած մեծ ու տափակ գլխարկը մինչև ականջները գլուխը կոխեց, պատռուած խուճի վերարկուն հագաւ, չոր տղափ դարձած չուստերը ոտներն առաւ և աւանակի չափ փոքրիկ ու ցածլիկ ձին նստեց ու ճիպոտով անդադար ետևը թակելով եօրթ-հա եօրթ գնաց խաչեցոց եկեղեցու դրանն իջաւ:

Խաչեցիք շտապով եկան տիրոջ ձին տարան գոմը քաշեցին, իսկ նա բարձր ձողի ծայրից կախած գանգակները մի քանի անգամ ծնգծրնգացնելուց յետոյ՝ փեշէրը պատատեց ու տխուր, տրտում մի քարի վրայ նստեց, որ մինչև ժողովրդի հաւաքուելը փոքր ինչ հանգստանայ:

Ժողովրդի ծեր ու պառաւները նկատելով տէր-Քոսինին, գիւղի ամեն կողմից՝ չալիկները (ծայրը կէռ ձեռնափայտերը) դիմհար տալով՝ ծլլաշար ընկած եկան եկեղեցի և մօտենալով երիցին, կանայք ամօթխած՝ երեսները ծածկելով և տղամարդիկ գըլ-

խարկներն առնելով՝ մէկ-մէկ գլուխները դէմ արին՝ «օխնեա տէր, օխնեա տէր» ասեցին. իսկ նա ձեռքը գլխներին դնելով՝ «Աստօծ օխնի, Աստօծ օխնի» արաւ մի առ ժամանակ:

Քոսին օրհնութիւնը վերջացնելուց յետոյ մորուսի գեղնացած ծարերը քամուն տալով տեղից վեր կացաւ, պատի կէռ մեխին վրատուած կանէփի զանգաթելերը ետ տուեց և գիւղական մանրիկ զանգերը կրկին մի քանի անգամ ևս տի՛նտօ, տի՛նտօ—արաւ ու ներս մտաւ:

Այստեղ պէտք է խոստովանել, որ այդ երկրորդ անգամն էր ապաշխարութեան օրերում, որ անտէր-տէր Խաչում զանգակի ժամ հրաւիրող ձայն էր լրսւում:

Հաղորդութեան կարօտ գիւղականները՝ արու և էգ ժամ շտապեցին և բոլորն էլ համեստ հարս դարձած՝ լուռ ու մունջ կանգնեցին Աստուծոյ տաճարում, ուր երկու տիրացուները բացակայ էին և միմիայն ականջը կախ Քոսինի անկանոն և դուրբ-ռան ձայնն էր լսում: Նա ամեն բան—գիրք, սաղմոս և այլն իրար գլխով տուեց... Գլուխը մեռածը հօ չէր կարգում կամ երգում, ճիշդ քոռ աշուղի պէս խաղ էր կանչում:

Անշուք, անդարդ, մինչև անգամ փոշիով ծածկուած էին եկեղեցու թէ՛ յատակը, առաստաղը և թէ՛ սրբազան գրքերն ու անօթները. սակայն այդ ամենի փոխարէն եկեղեցուն աիրում էր հաւատքը և յոյս ու սէր էին արտայայտում աղօթողների դէմքերը:

նրանց անմեղութիւնն ու ջերմեռանդութիւնն օրինակելի էր այդ զգացում ժամին. նրանք քահանայի ամեն մի նշանի հետ կամ խաչակնքում կամ ծունր էին չորում՝ հողը համբուրում, գնչները տափը քրտմըսում և կամ իրենց վաստակաւոր ձեռքերն ու աչքերը երկինք անբառնում ու անվերջ մրմնջում իրենց կեանքի, գոյքի, զաւակների, անդ ու անդաստանի համար երկնաւոր հօրից յաջողութիւն խնդրում...

Ես էլ էի տաճարում. նրանց ջերմեռանդութիւնը տեսնելով իմ հաւատն էլ շարժուեց սրտումս. էլ չէր կարելի չոր փայտի նման կանգնել. մի քանի ծունր էլ ես չորեցի ու խաչակնքեցի: Բայց մինչդեռ աչքերս յառած նայում էի պատերին, վարազուրի վրայ նկարագծուած Յիսուսի ազատարար խաչին, բազմաշարշար Լուսաւորչի և այլ հայ անմահ սրբոց պատկերներին, միտքս էի բերում նրանց կատարած գործերը ու յուզւում, ճմլւում էի ներկայ անմխիթար դրութեամբ, տեսայ, որ մենմենակ ժամասաց Քոսին ամեն բան շիրտփլաւի պէս խառնելով ժամերգութիւնը վերջացրել և փիլօնով ծածկած աջը դէմ է արել ժամաւորներին, որ համբուրեն: Գիւղականները մէկ-մէկ, իրար կրօնէկ կոխելով մօտեցան համբուրեցին ու պատատակերը քաշուելով լուռ կանգնեցին, որ խոստովանուեն պատարագին հաղորդուելու համար:

Սակայն, քահանան, որ մի կոպիտ, տգէտ և բարկացկոտ գոհհիկ էր, երբ իմացաւ թէ իրեն խաբել են, ննջեցեայի անուշով են կանչել ձէնից, ուր նրա սեփական ժողովուրդը դժգոհ էր մնացել, վա-

ռօղի պէս պայթեց, սաստիկ բարկացաւ, թքոտեց դէս ու դէն, փիլօնը մի, շուրջառը միւս կողմը չը պրտեց ու դուրս ընկնելով եկեղեցուց, դիմեց դէպի գոմը, որ ձին հեծնի ձէն փախչի: Ժամաւորները մէկը միւսի ետևից ձագ տուող մեղուների պէս դուրս թափուցին և տէր հօր առաջն ընկնելով՝ ոկսեցին աղաչանք-պաղտտանք անել...

— Տէր-տէր ջան, գլուխներս քարովն ենք տուել, որ քե խաբել ենք, արի էս անգամ մեզ բախչի, խնդրւմ ենք...

— Տէր-տէր ջան, ախր ուր ես գնրմ, ախր քե գոռով ենք ըստեղ հսցրել. տէր-տէր ջան, հաղորդուելու, թաթախուելու ենք...

— Տէր-տէր ջան, արի դու փեշիցդ քարը վերածա, մեզ խրչտառակիլ մի, ամօթ ա.., էտ ա եկել ես, էլ գնալ մի...

— Տէր-տէր, քե մատաղ, քե դուրբան... — փեշից բռնած պաղատում էին մեծ ու փոքր, բայց նա ձեռքներից դուրս ընկաւ իւր պոչը կտրուած փալանած ձիուն հասաւ, սանձը բերանն անելով ոտը վրա բերեց, հեծաւ ու խաչեցոց գլխին անէծքներ թափելով, ձիու տողին խփելով բշեց դէպի ձէն:


— Օհ օհ, օհ, էս տունը չքանդուած էրէց-ները հէնց էնա՝ ուզրմ են թէ կողոպուրտ տանեն էլի, թիւ...

— Տէր-տէր, տէր-տէր, էհէ տէր-տէր, հէ՛յ... ա, ետ արի, ետ, կասենք, որ քու խաթեր հըմար մի մարդ մեռնի, մի մարդ մեռնի... — կանչում էր

մէկը: Մի ուրիշ աւելի հանաքչի մարդ էլ թեքուել էր մի կողքի վրայ՝ մի ձեռքը դիմհար տուել տափին միւսը դէպի Քոսին մեկնել ու կանչում էր.

— Տէր-տէր, էհէ տէր-տէր, հլա ետ մտիկ արա, հրէս, հրէս. վեր եմ ընկնում մեռնեմ, վեր եմ ընկնում մեռնեմ . . .

Քոսին ամենեկին ետ չնայեց. նա հեռուում գընում էր արճնգի տալով:



Գ.

Քոսակի տրճգի տալուց յետոյ ժողովուած գիւղականների միջից լսում էին հետեալ խօսակցութիւնները.

— Թիւ, թիւ . . , տենում ես դու շաշ խելքիս ինչ պատահեց. սաղ օրն ատամիս հուպ տուած ծում պըհեցի, որ հաղորդուեմ, էնէլ փուստ դուս եկաւ. թիւ հա . . ., ասա ա խմախ, փորդ բեհտին տեղից խի իր սովըցնում, խի չիր ուտում, բա գիղում չիր, որ ուրիշ գեղից եկած տէրտէրն լտենց արտնգիպուպուղ ա ըլեմ, այիէ, այիէ . . .— վայ նրա միւրուքը վեր գայ, տեհաք գլխըներս ինչ բերեց, տեհաք մնց տրճնգի տըւուց:

— Էհէ՛ց, շաշ Միդի, սր մի աչքդ էլ խուփ ես անում եգոյ խօսում, թիւն խի՞ ըրիցին, խի չի ձեր սև ըրիսին. հարիւր տուն գեղ էք, խի էք

աներէց կտորւում. խի չէք գլուխ դնում, թուղթ չինրմ—մի լաւից-օսալից տիրացու օխնիլ տալի ձեզ հրմար . . .

— Ես իմ Աստօծը, տեղն ասեց, մեր հախն ա. լաւ, էս ինչ բիաբուշութին ա, որ մենք իշի մրտիրոսի պէս քաշում ենք, բա ամօթ չի մեզ, ա խալխը՛, հը՛ . . .

— Է՛հ, բիաբուշութին ասեա ու թողա՛ս. ըսօր ութ-իննը դանգիկ տարի ա մեր ողորմածիկ էրէցը ռխճանուել ա, մենք էլ՝ ձմեռուայ ծակը մտած օձի պէս հանիրնիս մեզ ենք քաշել ու սո՛ւս տաղ արել, իրար չենք ընկնում մի էրէց օխնիլ տանք, որ մեր մեռելը թաղի, մեր սաղն օխնի, պսակի, եա թէ չէ՛ մեզ մի բարի խօսք ու զրից անի, որ միշտ իշի ընգաճըմը քնած չմնաք . . .

— Բա ի՛նչ . . . : Տէր-Քոսուն մեղադրում էք. նա ի՛նչ անի, մեղաւոր ա. մեղաւորը մենք ենք, որ օրը մհեո որսկանի թաղու պէս ըստիան ձէն ենք վաղ տալի թէ՛ արի էս թաղի, էն կնքի . . . : Նա էլ՝ ուրիշ ժողովրդի տէրտէր ա, գլուխը ո՛ր քարին տայ. Ասծու տըւած մի ջուխտ աչք ունէր, ընէլ՝ մինը մեր գեղի ճամպին բոռացրեց, էլ ի՛նչ անի, հը՛ . . .

— Մենակ է՛տ. քոսոտ չէնցիք էլ խեղճ ըրիցի հետ մեր խաթրու կուուել, դիւժմանացել են թէ՛ «թէ մեր էրէցն ես, օսալ չորանի պէս խի՛ ես ուրիշի ոշխարն ըրըցնում, թէ մեր կովն ես, կաթդ խի՛ ես ուրիշին տալի. խաչեցիք խու չեն օխնիլ տուելքե . . . »:

— Ա՛, էլ ո՛ւր էք նրանց ասածը հըմբարբում, էնա

ասեցէր Ասծու պատիժը մեզ ա հասել էլի. բա տե-
նըմ չէք մեր գեղի հալն ի՞նչ ա՛. սհենց որ մենք
ենք, հլա շատ գենք չըշարուիլ, շատ..., — Ասծու պա-
տիժ չի բա ի՞նչ գահրումար ու զխկրթու ա. էս
տարսէն մարգիկ ենք, ով էր տեհել, որ շաղ անձ-
րեի տեղ անըմը կտրուած կարկուտ զար արտերը
տանէր, բաղերը քարուքանդ, քոլերը ճղնճան անէր
ու մեզ բար ու պտղից հասրաթ թողար... Ա՛, եա-
նի սուտ ա ասած թէ՛ «Աստօծ սարը կտենայ, ձինը
կգնի». սնց որ մենք ենք, նհէնց էլ Աստօծ ա մեզ
մտիկ տալի էլի...

— Ես իմ Աստօծը, որ Հանէս ապինի խօսքերը
սրբի պիրանից են դուս գալի. սուտ խու չի ասըմ,
բա տենըմ չէք մեր էն հալալ գեղը սնց ա լլկուել,
փշացել. դօրը (որ կողմը) մտիկ ես անըմ՝ գողու-
թին, պէղութին, չկամութին, խրբաբզանութին,
լկտածութին ու անհամութին ես տենըմ... է՛հ,
որ մինն ասեմ մէկէլը թողեմ, գեղըմս էլ ոչ հէրը
հէր ա, ոչ մէրը մէր, ոչ որդին որդի, ոչ էլ հարսը
հարս—պատրոնն իրան տեղը չի, կեսօրն իր, մեծը
պուճուր ա դառել, պուճուրը մեծ. մինը-մնին հա-
կառակուել են—ամօթը վերացել, փիտութինը աւե-
լացել ա: Հմի կասէք թէ՛ խի՛, էս խի՛ ա սհէնց.
նրա հըմար՝ որ Ասծու վերնէյին պատիճը մեզ ա հը-
սել: Փառք նրան, ձեր աչքի տեսածն ասեմ,—ութ
ինքը տարի ա սերմը ցանըմ ենք, կնանչըմ չի—
եա կտրըմ ա ծըմը, եա թէ չէ, մուկն ա քաշըմ.
թէ որ կնանչըմ էլա, ընէլ՝ երկինքը Ասծու կապա-

ծի պէս կապըմ, տուպ չի կաթըմ, ըրեզնակն էլ
կրակ ա դառնըմ դժոխքի մեղաւորի պէս արտն ու
արօտն էրըմ-խրովում. եա թէ չէ՛ ամպերը տրաք-
տրաքըմ են վերնուց կարկուտ թափըմ՝ սալ ու սա-
լաւ անըմ ամեն ինչ սրբըմ տանըմ, մեզ ըսենց
խեղճ ու նաշար թողըմ: Հը՛, սհէնց չի, ինչ կասէք,
ա խալխը,—դժգոհ հայեացք ձգելով ամենի վրայ
ասաց մի նիհար գիւղացի, որ գիւղում ճգնաւոր մա-
կանունով էր յայտնի:

— Ի՞նչ ասենք, ապէր, մթամ պակաս տեղ թո-
ղեցիր. գրանից աւելի ի՞նչ պէտք ա լի. քանի որ
մենք ինքներս Ասծու արդար ճամպիցը դուս. ենք
եկել ոտնի ճամպէն ընկել, էլ ումնից նեղանանք,
Քոստակից: Ըսօրւայ օրը մենք խի՛ բզի մի հոգեւոր
տէր—մի էրէց չունենանք, որ դժար տեղը մեզ հը-
մար աղօթք անի, եա թէ չէ՛ զանգակին տայ, որ
Ասծուն մտներս բերի:

— Էն պատիճին, որ մենք քաշըմ ենք, դառ
հլա քիչ ա մեզ հըմար. մեր մեղքը մեր շինքին հը-
լա շատ դի նստիլ, շատ: Միտներդ ա՛, մի խեղճ
էրէց ունինք, լաւ թէ օտալ եօլա էր տանըմ մեր
գեղը. ամա նրան էլ հլեչուել սոված պըհեցինք, որ
վեր ընկաւ մեռաւ՝ ջանն ազատեց մեզանից:

— Հա՛, հա՛. մենք նրան հոգով ու մարմնով
պարտական մնացինք...

— Ապէր, դու էլ իր ընտեղ հա, միտդ ա՛. իմ հէնց
միտս ա, որ կասես թէ սօրւայ օրն ըլի,—ասաց մի
ուրիշը,—մ՛հեա խեղճ էրէցը այսօրու պէս խուրջինն

ուսին գնաց որ Չատինի տղիցն իր կալահացն ուզի.
էն մուհալն էն զայդի բիաբուշուծին գրեց խեղճ
ըրիցի գլխին, որ թողեց ու գոլ փախաւ...

— Զն, միտս ա, ասըմ ին ըրիցին մի քանի
հետ էլ փետով տուել էր, հմ:

— Տալը գիդըմ չեմ, ամա պիճ հարամձատէն
միւրքիցը մի խելի (բաւականաշափ) ձիգ էր տուել
դէս ու դէն:

— Պա, դօրթ ես ասըմ:

— Բա ինչ...

— Օ... նրա տեղաք որ սլորիչ էրէց լէր, ան-
պատճառ սողիին գանգատ կտար, ամա լիսահոգին
դինջ, անգաճը կախ մարդ էր, ով չու էր ասըմ, ջան
էր լսըմ նրանից:

— Զն, խեղճ տէր-հայրապետը լաւ էրէց էր,
ամա մի բան պակաս էր:

— Ինչ էր պակաս, ամի:

— Ասծու տըւած խելքը:

— Բհհհ, հահ, հահ. լաւ քիչ բան ա լել պակաս:

— Աղա, սոլս, սուս, ամօթ ա. տնայրանդ ոչ,
էլ հանաք չգտա՛ր, որ մեռած մարդուն ծաղրատեղ
ես չինը՛մ. ամօթ, ամօթ..., — նախատեցին շատերը,
խակ մի ուրիշ ծերունի, որ երկար ժամանակ լուռ
գիտում էր այն բոլորին, մի սառը և լուրջ հայեացք
ձգելով դարձաւ ժողովին և ասաց.

— Այ որդիք, լսեցէք..., — ամենքը միանգամից
լռեցին, որովհետեւ խօսողը գիւղին յայտնի ճարտար
Միխակ ապէրն էր:

— Որդիք, տակից-գլխից անզգամ հարսի պէս
ասիւով ու ծիծաղիւով բան չէք առաջ գցիլ. գեղ
էք, գեղավարութիւն էք, ամօթ, այիւր ա. հաղիր
հըւաքւած էք, եկէք մի ըրիցացու գտէք օխնիլ տանք,
որ էս զայդի բիաբուշուծենից պըծնենք...

— Միխակ ապի, մեղ որ նախատըմ ես, ով
օխնիլ տայ. մենք գեղի ընչըմն ենք, գլուխներս ո՛ր
քարին տանք, մեր ձեռին ի՛նչ կայ. էրէց օխնիլ
տալը քեասիբի բան ա: Դա գեղի առաջաւոր մըրկե-
րանց — քեօխվա-քեադխուղի բան ա, խի՛ չես նրանց
նախատըմ. խի՛ չեն նրանք օխնիլ տալի, — միամտա-
բար ասաց քեասիբներից մինը:

— Խի՛, խի՛ ա նրանց բանը, բլբլղան ու-
տողի տղայ, մեղ մարդի տեղ չես դնը՛մ. էրէցը
մենակ նրանց մուլքերը դի թաղիլ, էտ ի՛նչ ես դուս
տալի, գիժ ես:

— Բա խելօքն էդ զայդի բան կասի:

— Այի է, հա ի՛նչ էք նեղանըմ դրանից, ի՛նչ.
դրա հէրը կարէր դրանից լաւ տղայ հանի՛...

— Անձող (ածուխ) ուտողի տղայ, լալը (ծաղրը)
մարդ չի սպանիլ, ամա դուք ըռանց քեօխվի բան չէք
գլուխ բերիլ, — պատասխանեց բլբլղան ուտողի քոլեն,
որին օգնութեան հասաւ, իւր հարեան քաշալ Աթոն:

— Ա, մարդի վրայ խի՛ էք լաղ անըմ — ծըծա-
ղըմ. սուտ ա ասը՛մ, մենք ըռանց նրանց կտրանք ըրի-
ցացու ջոկենք, եա օխնիլ տանք, — այստեղ մէջ ըն-
կան ևս մի քանի ուրիշները, որոնք պաշտպանելով
ուզում էին քեօխվին դուր գալ:

—Ա, էտ ի՞նչ էք ասում, ըռանց քեօխվի խի՞
չենք կարալ. էտ էլ խու կոռ ու բէգիառը չի, որ
քեօխվեն իրաւունք բանացնի. դա որ կայ, հոգևոր
գործ ա, քեօխվեն էլ մեզ պէս մի մարդ,—այս և
այն կողմից նկատեցին քեօխվի հակառակորդները և
նրանք, որոնք տրամադրուած էին կատարել Միխակ
ապօր առաջարկը և անմիջապէս զբաղուել այն խնդրով:

—Դէհ, դէ միաբանւեցէք տենանք. էլի մի
սկսէք զօրբա-զօրբա վեկոտրատել. գիտեմ, որ խե-
լօք փլըսօփաներ էք,—կրկին նկատեց Միխակ ա-
պին և ինքն առաջին օրինակը տալով՝ մի կողմը
կանգնեց ասելով.

—Էս ես, աղպէր, ով ճւղըմ ա, թող էս դո-
լեն կաղնի:

—Ես էլ կաղնեցի:

—Ես էլ . . .

—Ես էլ, աղպէր:

—Բա հլէ ես չեմ կաղնի՞լ:

—Միթամ ես մնամ ինչ անեմ...,—այդպէս մէ-
կը միւսին հետեւելով բոլորն էլ վեր կացան և Մի-
խակ ապօր առաջնորդութեամբ խմբովին շարժուե-
ցին դէպի մի ուրիշ կալ, ուր ըստ սովորութեան հա-
մախմբուած էին գիւղի առաջաւոր կոչուած մարդիկ:

Դ.

Այն կալում առաջաւոր մարդիկը գետնին նըս-
տոտելով վաղուց մի շրջան էին կազմել, որի գլխին
մի կիսակոճղի վրայ ոտն աղայաբար ոտովը ձգած
նստած էր մի գիւղացի, որն արտաբոստ հագուս-
տով միայն զանազանուած էր շրջապատողներէ:

Նա հագել էր կրունկները պայտած լեզուաքիթ
մաշիկները (քօշեր կամ սօլեր) և տափագործ շալ-
վարի փոխկերը վրան վայր թողել: Լաստիկ արխալ-
ղի կոճակները մէր էր ածել մինչև բուզը ու այ-
նուհետև մնացածը բաց թողել, որպէս զի տակից
սալիտակակուլ սև քլած շապիկը տեսնեն հարսնե-
րը...: Տափագործ *) չուխի թեքերը ետ էր ծալել
ափերի կարմիր աստառը նոյնպէս բաց արել. կըրժ-
նուտ մորթուց կարած մեծ փափախը թեքն էր
ծածկել, թաշկինակը կողքնուվայր գօտկից բաշ արել,
մտրակի կոթը մի կաշուէ օղակով կուռն էր ձգել,
սևահատիկ համրիշը (տէրոյորմիան) ձեռն առել և
վիզը գըրզացրած հպարաութեամբ ձգուած էր կէնտ-
կէնտ ու նազով այնպէս նայում շուրջը, որ կասէիր
թէ ամբողջ աշխարհն իրենն է:

Այդ հպարտը խաչ գիւղի տանուտէրն էր: Նա
չատ շնչին մարդ էր և զգուելի գիւղական տիպ: Մի

*) Տափագործ չուխն ամեն մարդ չի կարողանում
հագնել, նա աղքատի բան չի: Աղքատը միայն պսակուե-
լիս է հագնում:

քանի ամիս առաջ նա թողնելով իւր պարզ, այսպէս ասած՝ ռամկական հագուստը, քեօխլի ժամանակաւոր տարազ էր մտել և չտեսի նման տրաքուելու չափ փրուել, գոռոզացել էր։ Սակայն, ըստ աշխարհի քոռութեան այդ տղէտ անձից էր կախուած գիւղական հասարակական գործերին այսպիսի կամ այնպիսի ընթացք տալը. նրա ձեռին էր իշխանութիւնը՝ գիւղական դատարանը, կառավարութիւնը...

Տանուտէր Սաքիւլի կողքին դուղղունների (գիւշակեր թուշունների) պէս շարուածները նրա քեադ-խուղաններն էին, որոնց հետ նա մինչև իւր իշխանութեան գերեզման մտնելը խիստ սիրով ու համերաշխ էր։ Մօտեցող խմբին սոված դայլերի պէս նայեցին նրանք և փսփսացին իրար հետ։

Քեասիրները քաշուելով եկան կանգնեցին նրանց առաջ։

— Միխակ ապէր, աղաք կաղնի, դու էլ, Սիմօն ապէր. աղաք կաղնեցէք ամենիս տեղաք էլ խօսեցէք, — ասացին նրանք։

Երկու ընտրեալները մօտեցան քեօխլա-քեադ-խուղաններին և ասացին։

— Քեօխլա ջան, քեադխուղէք — Քիբի ամի, Մուրէլ, Սարբէգ ապի, դուք ամենիդ էլ լաւ գիղաք, որ մենք ութ-իննը տարի ա էրէց չունենք։

— Հա, գիտանք, ետոյ։

— Որ գիտաք, բա խի էք տաղ արել. մենք ամենս էլ ձեզ ենք մտիկ տալի, խի չէք մեր գեղի հրմար մի էրէց օխնիլ տալի, որ անհաղորդ, անգա-

տիկ ենք մենք, հլեչուել եք անէրէց մնանք. ամօթ չի մեզ հրմար, որ մուլի հոգին տալիս Ձէն ենք վազ տալի։

— Կաց մի, կաց, — ընկերներին ընդհատելով առաջ կաղնեց Սիմօն ապին և կրակոտ աչքերը շուռ ու մուռ տալով սկսեց իւր ճառը։ — Մեզ հրմար սա ինչ նամուս ա, որ քոսոտ շէնքիք էրէց ունենան ու պատահած վախտն էլ վրերնիս լաղ անեն ծծաղեն թէ՛ «պատարազի հասարած խաչեցիք էք դուք»։ Լաւ, էտ էլ թողանք, բա դուք ուզում չէք Աստու գիւղում ջաւիցն աղատուել, դուք ուզում չէք, որ մեր գեղը մի աղօթարար վի...

— Այ, բոլ ա, բոլ, հա խի չենք ուզում, քրիստոնայ չենք։

— Դէ որ քրիստոնայ էք, Աստօծ կեանք տայ ձեզ. խնդրում ենք, որ մի էրէց օխնիլ տաք, խեղճ ենք։ Քեօխլա, ամօթ էլա տսիլը, համա դէ ինչ արած, հեռի ձեր սուրբ յարգիցը մի լակոտ կնքել տալու հրմար բրիցի ետիցը հլեչկել եօրթ ենք տուել, որ խոնջաններս կտրուել ա..., — Սիմօնը երբ խօսքերը վերջացրեց, տանուտէրը նախ հազաց, քեղերը սղալեց և ապա խիստ խորամանկութիւն արտայայտող աչքերը ճաճալացնելով հարցրեց։

— Հը՛, էրէց էք ուզում։

— Հա, բոլ էր, քեօխլա ջան, գանակը բուզներս ա հասել, էլ հնար չկայ։

— Լաւ, ումն էք ուզում, գեղմս ովքեր կան տէրտէրութեան արժանի, — գլխակախ, աչքերը տա-

փը կթած և համրիչի հատիկները մէկ-մէկ լծողներով ասաց տանուտէրը և աչք գողանալով աչքով արաւ իւր քեաղխուղաներին...

Հէնց այդ հարցմունքի ժամանակ հանդի կողմից մեծ փափախի մի կողքն այրուած, ցարհատը գօտին խրած, ձեռնուրաղը տոռաղը թակելով մի գիւղացի վերեւից իջաւ, եկաւ ժողովին «բարի աջողում» տուեց ու մի քարի վրայ շրջուիւ արաւ նըստեց: Սիմոն ապին անմիջապէս դառնելով ուրաղաւորին, ձեռք մէջքին տալով, ասաց բարձրաձայն.

— Հրէս-հրէս. սրանից էլ լաւ բրիցացում, ա՛ խալիսը, հու գիտէք, որ ամեն բան էլ ձեռիցը գալիս ա . . .

— Հրէր, դու հրէ դրան ես ասում, միժամ սա պակաս էրեց կլի, — Սաքիւլ քեօխվից աւելի մի խորամանկ քեաղխուղա մի այլ նախընտրու հաստ ու կոպիտ ուսին ձեռք դնելով, աղաղակեց միւս կողմից:

— 2է, Մինաս ապէր, դա սրա հետ գալ չի, սա տէրտէրի թոռն ա, սրա կարգմունքը շատ կլի, — համոզիչ խօսքերով պնդեց Սիմոն ապին:

— Հահ, հահ, հա. ա, էտ լինչ ասեցիր, Սիմոն ապի. մենակ բճրրբուցն ա թի չինւր՝մ, թէ ուրիշ ծառից էլ:

Հմի քու խելրովը թին ու էրեցը մէկ էն:

— Ղօրթ ա, մէկ չէն, ամա ես օրընակ եմ ասում. պատասխան տուր, թիկենուցն էլ թի ա դուս գալի, թէ չէ:

— Դուս ա գալի, — նեղն ընկած պատասխանեց Սիմոնը:

— Հրէր, դորմի քօօրը, դէ էլ ուր ես ասում թէ՛ «սա բրիցի թոռն ա»:

— Զուր դէս ու դէն միք ընկնիլ, դէս ու դէն, սա հանիս էրեցութենի հրմար ա ստեղծուած:

— Ո՞նց:

— Նհէնց, որ՝ եթէ գլխին թովամախով էլ ծեփես, ձէն չի հանիլ, — մէջ ընկաւ մի այլ քեաղխուղա, որին նոյնպէս աչքով էր արել քեօխվին:

— 2է, դուրը դուք էք ասում, մեր բրիցացուն սա ա, — միասին պնդեցին Միխակն ու Սիմոն ապին: Տանուտէրը կրկին նշան տուեց, որով հասկացրեց, թէ մի կողմի մնալը վնաս է, մի բանիսդ անցէք միւս կողմը: Քեաղխուղաներից խաթխաշ ուտողի տղայ Մարկոսը շուտ գլխի ընկաւ, թէ բանն ինչումն է. նա իսկոյն անցաւ և Սիմոնին ու Միխակին սկսեց պաշտպանել:

— Հա, Սիմոնի ասածն ա, սա լաւ ա, սա տէրտէրի թոռն ա, սրան ջոկենք...

— 2է, չէ. զուր էք գո՛ր. սա ա լաւ, — աղաղակեցին միւս քեաղխուղաները: Իսկ Սաքիւլ քեօխվին խարդախ կատուի պէս մարուղ էր մտել և լռել: Գիւղը բաժանուեց երկուսի. այդ էր քեօխվի նշանների հետեանքը կարծես: Մի խումբը Սարգսի, միւսը տիրացու Անդրէասի օձիքը պինդ բռնած ցոյց էր տալիս խորամանկ տանուտէրին և առաջաւորներին:

—Հրէս, հրէս. էհէյ, սրան օխնիլ տանք, սրան,— հետզհետէ բորբոքուելով ազազակում էին նրանք: Սաքիւլն անտարբեր դեռ էլի չէր միջամտում, իսկ նրա գայլատամ քեաղխուկաները մէկ-մէկու աչքով անելով դեռ էլի ուղում էին լաւ վառել ամբոխին:

Խաչեցի տանուէր Սաքիւլը, որ կաշառակեր, կոպէկի համար հոգին վաճառող, մի բաժակ օղիով, մի գօճու խաշլամով, կամ մի գառան մորթով անգամ, անմեղին ցաւի մէջ ձգող, մեղաւորին արդարացնող, արդարին մեղաւորացնող մի զգուելի անձն էր, անիրաւ և անխիղճ դատաւորներին յատուկ կառավարչութեան այդ սիստեմն ունէր. փուշ կենդանին ամենից առաջ կռուածադիկ էր ստեղծում, ապա աշխատում էր ամբոխին կռուացնել. դրանից յետոյ ինքը ետ էր քաշւում ու քեաղխուկաներին կատաղի շների պէս քիս տալիս և թողնում, որ վէճը տաքանայ մինչև այն աստիճան, որ մարդիկ իրար հայհոյեն, ջարդեն, գլուխ պատռեն և ապա իրեն գանգատուեն—կաշառք խոստանան: Գործի, կռուի մինչև այդ դրութեանը հասնելը Սաքիւլը գանգատ եկողներից ոչ որի, ինչպէս ասում են, բեղամաղ չէր անում. ամենին էլ՝ «հա, լաւ կլի, լաւ ես տսըմ. ես նրա միտն իրան կուտացնեմ, ես նրա կաշին տիկ կհանեմ ու գլխովը թառ կտամ...» ասելով բանը ձգձգում էր և ապա՝ երբ մէկ կամ միւս կողմից ստանում էր գլխին հարամ—նզովեալ կաշառքը, արդարութիւնը չտեսնելու համար բորբոք աչքերը քոռ աշուղի պէս խփում էր և գաղանացած, վայրենու

պէս՝ ծեծում կաշուհան էր անում ուժը պատածին և այդպէս մտրակի ծայրով «չէ»-ն հա և «հա»-ն չէ էր շինել տալիս:

Ճէնց այդ սիստեմն ունէր և քահանայի ընտրութեան ժամանակ: Նա կողքի վրայ հանգիստ պառկել էր, իսկ նրա աչք ու ունքը հասկացող կաշառքներ քեաղխուկաներն արդէն վասն գրպանի և փորի արխի միջի մեծ-մեծ գորտերի պէս պղտորում, տլոտում էին ամբոխի միտքը:

Հարամ լծիքի համար սատկող Սաքիւլը աչքերը կապիկի պէս ճաճաղացնելով սպասում էր, որ գիւղացիներն իրար դմփեն և ահա՝ դաւմազալն ընկաւ:

Ե.

—Մեր տիրացուն ձերիցն արժանաւոր ա,— պնդում էին Անգրէասի կուսակիցները:

—Ընչո՞վ, ընչո՞վ գգողի տղայ:

—Խի, գիղւմ չէք:

—2է:

—Ճէ ամենան բանով:

—Տօ էն ամենը գլխիդ ու քթիդ դիպչի, մինն էլա ասա տեհանք էլի, ընչո՞վ հը, ընչո՞վ...

—Բոյով էլ, բուսաթով էլ, հլէ կարդմունքով ու գրիլով էլ. հմի մացար էտ խուլ ընդճներովդ:

—Ագա խուլը բու պապն էր, բու. ասա, ի՞նչ

ա գրում, որ Սարգիսը կարում չի, ասա, ասա . . .

— Տէր Աստօծ, անգա, խի՞, դու էս քարուքանդ գեղիցը չե՞ս, գիտում չե՞ս, հիւ՛ն մին-մին աչքիդ բզտի դեմ տալ որ տենամ:

— Տօ աչքիդ էլ բզտի տամ ու խզիտակիդ էլ, ասա էլի, որ էս խալխն իմանան:

— Խլանաս, դէ լսի ասեմ. նա գրում ա սա- նաթ, բարաթ, պարովակիր, գանգատ, արդա... հը՛, էլ ասեմ, էլ ես ուզը՛մ . . .

— Ըհահ, հահ, հա. ա խալխը, տեհա՛ք, լսեցի՛ք. պահ, անդահ, մանդահ, լարդահ . . . օհօօհօ. ա, էն ա ասա Անդրեասն իրան ձախիկ-ծուռտիկ արգէքովը աշխարի սրբաականներին ետ ա բերել ընտրան ըլի:

— Ա՛, հանէս ապի, դու սրբատեղիցն ես ա- սըմ, ասըմ են Թիփիղայ մէջն էլ արդա գրող չի ճարւում, բոսպարել են, որ Անդրեասը գնա իրենները պարզ անի, թէ որ չգնաց, օ, Աստօծ հեռու տանի, շատ մարդ կիշանայ, շատ...

— Ըհահ, հահ հա..., — արհամարհական ծիծաղի աղաղակներ բարձրացան:

— Ա՛, խի էք տաղ անում, մի կուշտ ծիծաղեցէք, կուշտ:

— Ըհահ, հահ, հա... հահ, հահ հահ..., — ծիծաղը նորից կրկնուեց, որով աւելի տաքացան հա- կառակորդները, որոնցից մինը կռացած և այրուե- լու չափ վրէժխնդրութեամբ դարձաւ դէպի մի աւելի եռանդով ծիծաղողի և հայոյելով ասաց.

— Էհէյ, էհէյ. ա թամբած իշի տղայ, հմի դու

ըռէխդ որ ծռել ես ու լաղ անում, ծծաղում, լիլ չի՞, որ եաբուի վրայ թարս նստողի տղայ Սարգսի լաու- թենիցը խօսա՛ք. նա ընչով ա բարձր Անդրեասի- ցը. հը՛ . . . :

— Նա՛, լաւ ժամ ասիլ գիղայ, լաւ էլ ձէն ունի:

— Դէհ, դէհ, ա խալխը, դէ եկէք շները կապեցէք ու ինձ թող արէք: Ասըմ ա Սարգիսն Անդրեասիցը լաւ ա ժամ ասըմ. էտ դայդի էլ անամօթ սուտ...:

— Էհէյ, ա թնագողի, տղայ, մի հէր էլ ունէիր արջի պէս քոլիցը տուն չէր գալի. դու էլ էնքան մոխոխ ես կերել, որ ժէներդ լծան պոտոքնի են դառել. ա, խի չես խղճմտանքով խօսըմ. բա էտ խաւար միտդ չի՞, որ մեծ պասի պատարագն սկսե- լու վախտը Սարգիսը կրացաւ ո՛չ փոխն տոլի. միտդ չի՞, որ քոռ Քոսին էլ մոմով գլխին տըւուց ու վրէն չրացաւ թէ՛ «կորի, կոր. եքա իշի չափ մարդ ես ողորմիան էլա կարում չես ասես»: Ընդուր հըմար չէր, որ տէր-հայրապետն էլ դունչը մինգամ մոմով դաղեց: Բա քոռ իր, տեհար ոչ որ Սարգիսը դունչը կապած մողու պէս գրքակալի դաքին տաղ արաւ: տեհար ոչ որ Անդրեասը վրանկաւ ու ջաղացի պէս ոօրոր տալով անցկացաւ սաղ ժամագիրքը՝: Անա- մօթ, անամօթ. սա էլ Անդրեասին չի հաւան:

— Գիրօ, էհէ Գիրօ, էտ թող, էտ. դրան հլա մի կամաց-կամաց հրցրու, թէ՛ քօսակ Սարգսին ո՞նց էք օխնիլ տալի, էրէցն անմիւրուք կլի՞, — նրանց ընդհատելով մէջ ընկաւ ուշ-ուշ խօսող, բայց լաւ հանաք անող մի գիւղացի:

— Հա՛, քոռ. Վալինի տղայ, նրա ասածին ինչ պատասխան ես տալի, անմիւրուք տէր-տէր կլի՛:

— Խի, խի՛ չի լիլ, հրէ՛ Ուզում թալի էրէցն անմիւրուք չի՛:

— Տօ՛ ուր ես Ուզում թալա վաղ տալի. ասա խելքը գլխի մէջ ա՛, թէ միւրքի՛:

— Դէհ, գէհ, դէ հու էսա տրաքւում եմ, դէ էս-ղաղար համբերութիւն. — պատի տակից անղաղար փնթփնրթում էր մէկը: Նա չկարողացաւ դիմանալ. յանկարծ, ամեն ինչ մոռացածի պէս ամբոխը պատ-ռեց և բազուկներով ամենին ետ-ետ անելով առաջ կանգնեց և դռագոռաց:

— Ա՛, տօ տնաքանդեր, գողին էրէց չինել կլի՛....

Այդ կատաղի մարդու դիմացը գուրս եկաւ յաղ-թանգամ ազդուն Սարոն, կնճռոտած դէմքով յարձա-կողական դիրքով կանգնեց, և, ձեռը թրածն ճակտին դնելով, զարմալալը տարացրեց:

— Գողն ո՞վ ա, աղա:

— Անդրեասը:

— Ո՞վ:

— Քառ ես, Անդրեասը:

— Քառը դու ես, դու, ի՛նչ ա գողացել:

— Խոզ, հաւ, մողի, ո՞ր մինն ասեմ...

— Քունն ա գողացել:

— 2է:

— Տօ դու մեր իծի պարկը փչէ, բա որ քունը

չի գողացել, մարդին խի՛ ես գող ասում:

— Ա՛ շաշի տղայ, ուրիշինը որ գողացել ա գող չի՛:

— Ըհահ, հահ հա... — ծիծաղն անվերջ էր այս անգամ:

Անդրեասի գողութիւնն ապացուցուած էր հրա-պարակով, ամենքը գիտէին. Սարգսի հակառակորդը լաւ տեղից բռնացրեց. և, երբ առաջինի տեղը նե-ղացաւ, պատասխանեց ակամայից:

— Որ ասում ես, միթամ Սարգիսը գող չի՛:

Այստեղ արդէն Անդրեասի կողմնակիցները իրար գլխով դիպան և միանգամից աղաղակեցին:

— Սարգիսն էլ ա գող, Սարգիսն էլ ա գող, նա էլ դարման ա գողացել, դարման ա գողացել...

Ջնաճանճերի նման դուս թափուեցին Սարգսի կողմնակիցներն ևս, և, կոուց-կոտի խփած կռուան արաղաղների պէս՝ այստեղ, այնտեղ սպառնացին իրար. ոմանք ափտակ էին պատրաստում, ոմանք բռունցք և այլը դապանակ ու արացի:

— Աղա, ո՞վ ա գող, Սարգիսը՞:

— Հա՛, Սարգիսը, բա չունը՞:

— Տօ հարամ թոխում, հոգուդ խի՛ ես մեղք անում, սուտ խի՛ ես խօսում, հը՞, սուտ խի՛ ես խօսում:

— Սուտ չեմ խօսում:

— Սուտ ես:

— Սուտը դու ես, դու:

— Այիէ՛, հրէս ըռխին ծեփիլ դեմ առամնին փորն անիլ հա, — զայրացած հակառակորդը բռունցք-ներից մինն իջեցնում, միւսը բարձրացնում էր մեխով ընկած ձիու ոտի պէս և սպառնում հարուածելու, իսկ երկրորդն իրեն կոմիքական դիրք տուած՝ նոյն-

պէս զայրացած ոտը գետնին պինդ դէմ էր տուել, դունչը ծռած համարձակ դէմ արել նրան և ասում:

— Դէ ծեփի, ծեփի, բռունցքդ խի ես ետ քաշըմ, ծեփի, ծեփի, էս իմ ըռէխն ըտէլ քու ձեռը, դէ ծեփի, ծեփի... Է...

— Ծեփեմ:

— Հա, ուր ես հրցնում, էս իմ ըռէխն ըտէլ քու ձեռը, ծեփի. ծեփի ու տես որտեղիդ ա վրա գալի դըղանակա... աս

Առաջինն էլ չկարողացաւ համբերի. բազուկը ետ տարաւ ու վրաբերեց և այնպէս շրխկացրեց, որ հակառակորդը երեք անգամ վրա-վրա դժբուռեց ու բերանից արիւնն սկսեց ծկլակի տալ. նրա ետեւից մի քանի դադանակներ տիպան իրար, բայց ծերունիներու միջամտութիւնը շուտով արիւնահեղ դադանակամարտութեան առաջն առաւ: Սաքիւլ քեօխվեն դեռ անտարբեր յենուած գերանին կռուեցնում էր ամբոխին. միայն մէկ-մէկ, իբրև թէ տիրաբար ցոյց էր տալիս իւր իշխանութեան ներկայութիւնը—կեղծ-կեղծ բարկանում էր սրա նրա վրայ՝ ասելով. «հը, հը». հարամձագէք, տենում չէք ըտեղ եմ. խելօք կացէք թէ չէ, միսներդ կկտրեմ ըռխներիդ դէմ կանեմ...

Վերջին դմիոցի ժամանակ նա վերկացաւ փայտ ու քար վերցնողներին մտրակով մի քանի անգամ կըրփացրեց, կամ ինչպէս ասում են, փէշների փոշին թափ ատուեց. միշտ այդ էր մեր Սաքիւլի սխտեմը, պոլիտիքան:

— Հարամձագէք, ինչ էք իրար ըռէխ կռծում, ամեն դարդակ բանի հըմար քեալլա ճղըմ, թողէք իրիցփոխը վնա ժամիցը մի աւետարանից-զատից բերի՝ տիրացուներն երկուսն էլ կարդան, որն որ վարժ կարդայ, լաւ երգի, նրան էլ ըրիցացու ջոկեցէք, — ասաց Սաքիւլն և էլի աչքով արաւ քեաղ-խուզին:

— Հը, ինչ էք տաղ անում, լաւ չի ասում քեօխվեն, ա խալխը, — ասաց խորամանկից խորամանք քեաղխուզան:

— Օ... լաւից էլ լաւ ա ասում, արդարից էլ արդար, թող տհէնց լի:

— Դէ որ լաւ ա ասում, պարոն իրիցփոխ, ջափա քաշի վնա մի ժըմբգորից, աւետարանից-զատից բեր փորձ անենք, էս բանը մի զոլ կտրենք անց կենայ գնայ:

Երեցփոխը բանալին առաւ գնաց, բայց տիրացուները խիստ կարմրատակել և դէմքներն ամօթախառն երկիւղ էր արտայայտում:

2.

Գիւղացիները փոքր ինչ հանդարտուած սպասում էին երեցփոխի վերադարձին:

— Տիրացուք, Սարգիս, Անդրեաս, չուեղ իրիցփոխի գալը դէսն աղաք կաղնեցէք մի թուղթ տաս

կարդար՝ տենանք ինչ ա գրած, — հակառակի պէս ձեռք գրականը տանելով ասաց Սաքիւլ քեօխվեն, որ շատ, թէ քիչ գրագէտ էր:

Բայց, տիրացուների գրութիւնը հետզհետէ խրդալի էր դառնում. ժողովրդի հետաքրքրութիւնը ճնշում էր նրանց, ուրիշի ձեռագիրը խիստ մեծ դժուարութեամբ էին կարդում...

Սաքիւլ քեօխվեն գրականից հանեց դեղնած, կեղտոտուած թուղթը նախ տիրացու Սարգսիւն տուեց: Միջանկեալ ասեմ, որ թղթում այս էր գրուած. «Ընդ սմին ուղարկելով ձեզ ժապաւինեալ մատեանս վասն գրելոյ ՚ի սմա...»:

Տիրացու Սարգիսը նախ քրտնեց, պինդ-պինդ հազաց, քիթը հարկւր անգամ վերխմեց, սրբեց և ապշածի պէս սկսեց նայել ու դողդողալ. օրհնուածին կարծես թէ այն թղթի կտորը կծելիս լինէր՝ այնպէս երկիւղած բռնել էր ձեռքին: Ողորմելու քրթի երկու կողմով գոլորշու կաթիլների նման կաթիլներ հոսեցրեց դեղնած թղթի կտորը, որի վրայ նա լաւ նայում էր երկար ժամանակ և նամազ անող թուրքի պէս պնօշները պրպրտացնում:

— Ո՛վ վէ, հալուեց, հալուեց...

— Դժար ա հա...

— Հըհը, բա հիշ հարսի պէս գլուխդ կոկել ես, որ էրէց օխնուես:

— Ա՛դա, վախիլ մի, գիրկապ արա, գիրկապ...

— Է՛... միթամ կարըմ ա ու չի անըմ...

— Տա՛ղ արէր, տա՛ղ, աւելի էք չչկացնըմ...

— Դիզացողը կը չչկուի... — իրար աչք պահելով կամաց չնշում էին թէ նրա կողմնակիցները և թէ հակառակորդները, բայց Անդրէասն էլ հալին չէր. նրա գոյնն արդէն հատնում էր...

Վերջապէս լուռ պրպրտող շրթունքների հետ Սարգիսն սկսեց նոր սովորող երեխի պէս կրկնացնել այսպէս. —

— Ը՛...ը՛, ը՛ն, ը՛ն, նը՛դ, ընը՛դ, ը՛նդ. սը՛, սը՛, սըմ՛, մի՛...ի՛...ին. սը-մը՛-ին, ընդ սմին: Ո՛ւ, ու...դ, ուղ-նւղ, ուղտ-ուղտմ-տմ-տե՛, ուղտատելո՛ւ, լւ-լւ՛ւ: Ը՛նդ սըմին ուղտատելով:

— Տղերք, կարդաց հա, — ասաց մէկը:

— Օ՛... դա գիր կապիլըմը շատ պոչաղ ա, — գովեց միամիտ կողմնակիցը:

Սարգիսը գլխին սև մնացած «ուղտատելով»-ից անցաւ «ժապաւինեալ» երկնից պատուհանին: Նա այդ բառը կարդալիս քող պառուելի պէս հարկի արդէն մօտեցրել, թղթին էր կայցրել և պրպրտել անջում էր այսպէս:

— Ը՛նդ սըմին ուղտատելով ժա՛, ժա՛, ժա՛. չէ, չեղաւ, ժա չի: — Ժէպ, ըժ-ըժ, չէ, ժապ ա, ժապ Ժապ, ժապ...

— Է՛, չեղաւ, չեղաւ. տհէնց չի. չիմ սղալ ես կարդըմ: Տիրացու Անդրեաս, ձեռիցն առ դու կարդա, ձեռիցն առ դու կարդա տենանք ուղտատելով ժէպ ա, թէ ուղարկելով... — հրամայեց Սաքիւլ քեօխվեն:

Անդրէասը ոտն առ ոտը մօտեցաւ, Սարգսի

ձեռքը թուլթն առաւ, նայեց-նայեց և՛ օգտուելով քեօխի հարցմունքից, շուտով և արհեստական վրստահութեամբ բարձր ձայնով գոչեց.

— Քեօխ, ուղարկելով ա գրած՝ ոնց որ քու հրամանիդ ասեց. սա սղալ էր կարգըմ:

— Ապրես, դո՛չադ, տհէնց ա. մնէլ կարդա տե նանք:

— Ընդ այսը՛մ ուղարկելով:

— Ապրես, հոռոյ:

— Ետոյ. կաց տենամ, քեօխ ջան:

— Տիրացու Անդրեաս, կարդա, դո՛չադ կաց, մեր ըրիցացուն դո՛ւ ես, վախիլ մի... թող քու գիւշմանին (թշնամիները) կուրանան:

— Հը՞, ոնց ա, ա խալիսը. հմի տեհմք, հաւատացիք մեր ասածին. որ ասըմ ինք Սարգիսը քու ուղուք ա. գէ հմի թըմաշ արէք տիրացու Անդրեասին, — Սարգսի հակառակորդները գովելով իրենց ընծայացուի յաջող քննութիւնը, բարկացնում էին միւսներին, իսկ Սարգիսը կարմրատակած սպասում էր ընկերի անյաջողութեանը:

Անդրէասն էլ ուշ ձայն հանեց...

— Հը՞, էտ խի՞ եղացրիր, կարդա է, — Գոչեց տանուտէրը: Անդրէասն սկսեց սկիզբը տեղ հասցնել և շարունակել այսպէս.

— Ընդ սըմըհին ուղարկելով ժո՛... ժո՛. չէ, ժը՛ ա. ժը՛-ժը՛... Այստեղ բաւական լոց կրկին և կասկածաւոր հնչումով «ժը»-ն փոխեց և կարդաց. — «Ժո՛ւ .. ու... ժո՛ւ-ժուլ, ժա՛... ապ: Այիէ,

անտէր լի սա, քեօխ, էս ի՛նչ գէշ թուլթ ա, կարդըմ չի, լաւ չի գրած. ուղարկելովիցը ետոյ գիտըմ չեմ ժըլ ա, թէ ժուլ, — պարզ գրուած թըլթին երբ մեղադրեց ընծայացու Անդրէասը, Սարգսի կոմնակիցները բարձրաձայն և խիստ ախորժակով ծիծաղեցին տանուտէրի հետ միասին: Այս ծիծաղովը Սարգիսը կարծես, թէ սրտապնդեց. նա կամաց-կամաց մօտենում էր, որ թուլթը ձեռքին առնի:

— Ըհահ, հահ, հա. ադա Սարգիս, առ, առ, էլի դո՛ւ կկարդաս, առ:

Անդրէասը դեռ ժըլ, ժուլ անելով կզկզացնում էր. Սարգիսը մօտեցաւ և առաց.

— Ադա, ինձ տուր, ինձ. ի՛նչն ա ժըլ, որ ժըլ ես անըմ:

— Բա էս ժըլ չի, — մատով ցոյց տալով կրկին Անդրէասը:

— Էս ժըլ ա:

— Բա ի՛նչ ա:

— Էս խու պը՛ ժ ա:

— Այիէ, մթամ դու ինձանից լաւ կարդացիր. ո՛րն ա պը՛ ժ. ի՛նչ խի՞ պը՛ ժ սհենց ա լը՛մ:

— Բա ո՛նց, տենըմ չես պոչը ջուխտակած ա. դէնը, մի դէնը, — Անդրէասին հրելով մի կողմը, նորից վրաճնկաւ թղթին և յանկարծ բացականչեց.

— Գտայ:

— Կարդա, գէ որ գտար կարդա, — շտապացրեց խորամանկ տանուտէրը:

— Ընդ սըհըմին ուղարկելով պը՛ ժ տեալ մատ-

ներս. վան, վան, վան, վան. ան...ան, վան... սուս...

— Ըհահ, հահ, հա. ադա, ինչ, պըժըտեալ մատները՞ս:

— Հա, քեօխվա ջան, տհենց ա գրած, — ասաց նա և շտապեց մօտեցնել տանուտէրի աչքին:

— Ադա, դէնը տար, ախմախ, պժըտեալ խօսք կլի:

— Պըժըտեալ, ըհահ, հահ, հա...

— Հահ, հահ հա..., — վերջին պժըտեալի վերայ տանուտէրն ու հասարակութիւնն այնպէս պինդ-ծիծաղեցին, որ ուսներից փոշի բարձրացաւ, իսկ ես այնքան ծիծաղել էի, որ էլ ծիծաղ չէր մնացել ինձանում, այսինքն ծիծաղամանս բոլորովին դատարկուել էր:

— Դէ լաւ, ձեր պըժհապժովն ու պըժըտեալովը սաղ գեղը խայտառակեցիք, բերէք, բերէք թուղթըն ինձ տուէք. ես էս ձեռս կը կտրեմ, որ ձեր «պրիզօրին» ձեռք չեմ քաշիլ, — կեղծ լրջութեամբ ասաց Սաքիւլ քեօխվեն, որովհետեւ այդ էր նրա կառավարութեան սիւտեմը:

— Զրանալ մի, քեօխվա ջան, օնչինչ չկայ, խամ ձեռագիր էր, հրէս իրանց սերտածը լաւ կկարդան, ներողութիւն արա, — ասաց նրա աչք ու ունքին նայող քեաղխուղաներից մինը և հետը միասին թերաշ տալով-յետեները պահելով, խոտանոցի քամակն անցան և առանձնական խորհրդաւոր փսփսոց սկսեցին թմների տակ:

Մի քանի ըոպէից յետոյ երեցփոխն աւետարանը ձեռին վերադարձաւ եկեղեցուց: Աւետարանը

տուին տիրացու Սարգսին և ապա Անդրէասին: Այստեղ էլ նոյն պժհապըժը սարքեցին: Բաց արին Ղուկասու ժե գլուխը և սկսեցին հրէաների պէս չարչարել, տանջել խեղճ աւետարանը, այնպէս որ՝ եթէ Ղուկաս աւետարանիչն այն ըոպէին մօտեցրը լինէր, աչքները մի բնով կհանէր: Փուշ կենդանի ընծայացուները «Եւ էին մերձ առ նա ամենայն մեղաւորը և մաքսաւորը լսել ի նմամէ: Տրանջէին փարիսեցիքն և դպիրք...» նախադասութեան մէջ «մաքսաւորը»-ը «միւրքաւորը», տրտնջէին»-ը «տուրտնջի» շինեցին, իսկ «փարիսեցիքն» բառը «փսփոսացին» կարդացին: Այնուհետեւ էլ չեմ ուզում ասել, թէ թարգմանութիւնից ու մեկնութիւնից ինչպէս հարցաքննուեցին, ընթերցողը. միայն պարտքս եմ համարում ասել, որ Սաքիւլի սիւտեմի հետ լաւ ծանօթանաք. նա աւետարանի ընթերցանութիւնից գոհ մնաց:

Բո՛լ ա, բո՛լ (բաւական է) ասելով ընդհատեց տիրացուներին և դառնալով կոյր ու խաւար ամբխին, ասաց. — Ես խալխը, դէ որ անէրէց չէք ուզըմ մնալ, գնացէք թուղթ, «պրիզօր» շինեցէք, ձեռք քաշեցէք ու բերէք դաւերիտ անեմ (հաստատեմ) զըրկենք կանսստօրը, թող նրանք որին արժան համարեն, նրան ձեռնադրեն մեզ համար, հրսկացաք:

— Հրաման քե, քեօխվա ջան, հրսկացանք, չնորհակալ ենք, որ անտես չես անըմ մեր խնդիրը, — գոհ մնացին ընտրողները և խումբ-խումբ հեռացան:

Է.

Գիւղական ժողովի ցրուելու ժամանակ քեօխովի հաւատարիմ եղբայր քեաղխուգաներն իրար աչքով արին ու ոտնակախեցին:

Սարիւլ քեօխովեն մի պատի տակ քաշուեց և իրանց հետ երկար քշփշաց:

— Արգման, — ասում էր նա, — դու էս ըրիկու անպտտճառ գնա Անդրեասի հրօղբօր (տուն) կուշտն ու ասա թէ՝ «քեօխովեն Անդրեասի քահանայութենի թղթին փեշատ տալու կամք չունի, ամա որ մի թուժան տաք, զլուխ կբերեմ»։ զիտաս էլի, մանէ-թից արասին քունն ա:

— Հատ լաւ, — ուրախացած ասաց Արգմանը:

— Կարապետ ապէր, դու էլ գնա Սարգսի հօր կուշտն ու ասա նրան թէ՝ «Քեօխովեն Անդրեասի թղթին փեշատ տալու միտք ունի, ձերին ոչ. թէ կարաք, մի զատ տուէք ըռէխը գցենք, բալի ձերին էլ տայ»։ մացար:

— Հա:

— Ամա խելք բանացրու հա, հէնց անես ոչ, որ աշխարս իմանայ:

— Աչքիս վրայ, ամա, որ տասնըհինգից աւել առնեմ իմն ա հա, քեօխովա:

— Հա, հա. գնա, ինչքան աւել պուկես, քեզ ըլի:

— Քեօխովա, թող աշխատեն մի-մի դօնաղղ էլ չընքներին գնեն:

— Հա, լաւ, ըտէլ թող Մուսի ապինի դամաղն ըլի, գնացէք, — երկուսը գնացին:

— Դհէ բան որ անեն, ագաթին քեաղխուգէք կլեն հու, — նկատեց չորրորդը:

— Քեօխովա, մենք քե հրմար շատ բան անիլ կտանք, միայն թէ, երբ նրանց կուշտդ զրկենք, ոտքդ պինդ դէմ արա, ունքերդ, ոնց որ գիտես, կախ գցի ու հէնց մի բերան ասա թէ՝ լիլ չի, փեշատ չեմ տալ:

— Շո դայդէն լաւ զիտամ, դուք արխէյին կացէք. հինգ տարի Կարապետ քեօխովին զուր տեղը հու չեմ աշակերտութիւն արիլ, — հպարտութեամբ պատասխանեց տանուտէրը և բաժանուեցին իրարից:

Ը.

Քեաղխուգա Կարապետը մթնելուն պէս գիւղի ներքեի կողմը գնաց, և, չորս կողմը զգուշութեամբ զիտելով, մտաւ Սարգսի հայր Արթին ապօր տուն:

— Բարրիկուն, Արթին, ոնց ես, ոնց.

— Ասծու բարին. գիտըմ ես էլի, թէ ոնց կլեմ:

— Է՛, արխէյին կաց, ես ըստի չեմ:

— Աստօժ կեանք տայ, բա ո՞րտի ես:

— Դէ ասա տենանք է:

— Ի՞նչ ասեմ:

— Վայ քունը տունը չշինուի. ա, դու ջլիս իշի ընգաճըմը քնած ես ըլիլ մգեմք:

— Խի՛, Կարապետ ջան։
 — ՆՏէ՛, որ ուզըմ ես աղնուծինը, թագաւո-
 րուծինը (—քահանայութինը) ձեռիցդ բաց թողես։
 — Աստօծ մի արասցէ։
 — Էլ սրտի մի արասցէ, որ Անդրեասի հրօղբե-
 րը հրէ գեղն ընկած մարդիկ ա պատրաստըմ, քեօխ-
 վին բան ա խոստանըմ, իսկ դու տուէն ես մտել ու
 սո՛ւս տաղ արել։
 — Բա դու սրտեղ ես, աղբէր ջան. իմ յոյսը
 խու դու ես. քեանից էլ ինձ մօտիկ, բարեկամ մարդ։
 — Ես ի՛նչ անեմ.
 — Վա՛ւր՛ն, ո՛նց թէ ինչ անես, քեօխվեն քու
 ասածից խու դուս չի գալ, — ասաց Արթին ապլին։
 — Դրուստ ա, իմ ասածից դուս չի գալ, ամա
 դէ հարկաւոր ա գնալու վախտն էլ մի իրեստեղ
 ունենալ է՝ — խու գիտես որ ըռանց ըռէխը բան գը-
 ցիլու բան չի գլուխ գալի։
 — Բա հըրցրել չե՞ս, ի՛նչքանով ա դաբուլ։
 — Տասնուծ մանէթից պակաս փեշատ չի տալ,
 պէտք ա տաս, թէ չէ նրա բանը գլուխ կրերի ու
 ձերը կթողայ։
 — Տօ քսան էլ կտամ, քսանըհինգ էլ, դու ասա
 մեր բանը չինի և Անդրեասինը խարաբ անի։
 — Դու գիտաս, որ ատած ա թէ՛ «ով չուշտ,
 նա կուշտ»։ Ի՛նչքան եղացնես, բանդ կթարսուի-
 լեղ արա, ժաժ արի...
 — Հա, լաւ ես ասըմ, գնամ տենամ։
 — Ո՛ւր ես գնըմ։

— Քեօխվի տուն։
 — Դարդա՛կ։
 — Ասըմեմ գնամ առաջուց ռիմն (միտքն) իմանամ։
 — Դու զուր ես գնըմ, բան խարաբ կանես. ինչ
 որ ասեցի տուր ինձ, ես աշխատեմ։
 — Ի՞նչքան տամ։
 — Ասեցի էլի. տասնըուծ։
 — Ա՛ կնիկ, մի քսան մանէթ հանի, — Արթի-
 նը դարձաւ կնոջը, — դէհ, Կարապետ ջան, էս տաս-
 նուծը նրա տակը դի, էրկուսն էլ դու վեկալ. էտ
 էլ թող քու ջափահախն ըլի, ամա աշխատիր, որ
 փաշխուծին չանի...
 — Պա՛. էտ մինն ասեցիր, էլ լիզուդ պոնգովդ
 չտաս, մզեար ես սխտոր ուտողի տղայ Քսափոն եմ,
 որ քեօխվեն կրենայ ինձ հետ փաշխու բան բռնի։
 — Դէ ես մեղայ Ասծու, Կարապետ ջան. մեղա-
 տեղս դու ես...
 — Ա՛րթին ապէր։
 — Համմէ, Կարապետ ջան։
 — Դու գիտաս որ գեղի քեօխվեն ու էրէցը
 արաղի զօռօվն են ջոկւըմ։
 — Հրաման քե, ո՛նց չը գիղամ։
 — Գիտաս որ առանց նրան մինակ փողը բան
 չի չինիլ։
 — Լաւ ջիւս...
 — Դէ որ գիտաս, գիշերս ձիդ տաղ արած
 թամբի, նի ըլի ու գնա Քրվըսրիցը էրկու-իրեք թուն-
 գի արալ առ բեր բոլ-բոլ խմացրու, որ քեփների

չաղ վախտը թղթին իշտահով ձեռք քաշեն: Էտ էտ. թէ կարաս, հաւից սավահի մի էրկու որց էլ մորթի ու քեաղխուգաներին քեօվխի հետ միասին ջոկ կանչի պատիւ տու... .

—Տօ հաւերն էլ քե դուրբան, որցերն էլ ու գառներն էլ. հլա թէ կուգես գոմէշ էլ կմորթեմ, դու ասա թէ տղէս էրէց գառնայ,—խօսքը հանարի փոխելով պատասխանեց Արթին ապին:

—Դէ ես գնրմ եմ, դո՛ւ գիտաս:

Կարապետը մտի կտոր գողացած կատուի պէս չորս կողմը պահելով շտապեց դէպի Սաքիւլը, Արթին ապին իսկոյն տիրացուին սարը վաղցրեց որցեր բերելու, իսկ ինքը ձին քշեց, գնաց Քարվանսարի խանութներից մի կարոն (տիկ) օղի գցեց խուրջինն ու վերադարձաւ:

—Այդ միեկոյն ճանապարհով գործում էր և՛ Անդրէասի հօրեղբայրը: Սակայն, խորամանկ քեաղխուգաներն այնպէս էին կարգադրել, որ իւրաքանչիւրի հրաւէրը զանազան ժամանակում լինի:

Միւս գիշերն Արթին ապօր տանն արդէն ընթրիքը պատրաստ էր:

Հրաւիրուեցին Սաքիւլ քեօխվեն, Կարապետը, Արզմանը, որ արդէն Կարապետի դերը կատարել էր Անդրէասի տանը, Պռատի տղայ Մխիթարը, Լակ ուտողի տղայ Սիմոնը, միշտ մէջքի վրայ քնողի տղայ Յուսիանը... և բոլոր թոխմախաւոր գլխերները:

Սաքիւլը, չափարի նեղ անցքով այգին մտնող գօճամայր խողի պէս, Արթին սրահը քաշեց իւր գալակեր քեաղխուգաներին:

—Կարո՞նն ուր ա, Արթին ապէր,—ոտը չեմ քակապին դնելով հարցրեց Սաքիւլը և դէս դէն նայելով հոտ քաշեց պատատակերից: Քեաղխուգաները ծիծաղեցին հանարչու վրայ, իսկ դեղնամորուս Արթինն իսկոյն տուեց նրա պատասխանը:

—Հրէ, հրէ, քեօխվա ջան, հրէ մնի տակին պրտըվեր պրանել եմ:

—Է՛ն ա՛, պահ, հլէյի թէ բրդի ջլալ լի. ի՛նք, ես մատաղ էն պտղի տկոքուն, որիցն որ դու քամւել ես. որ ըռանց քե բան չի գլուխ գալի,—տկճորի ունկը բռնելով բացականչեց տանուտէրը:

—Օ՛, քեօխվա ջան, որ գիդենաս, խեղճը չուել գալի քեզ հրմար նստած սուգ էր անըմ:

—Ղօրթ:

—Աստօժ վկայ:

—Դէ որ տհէնց ա, բեր, բեր գաւերը խաթրն առնենք:

—Աչքիս վրայ. մին-մին անոշ արէք չուել սուփրի գցիլը:

—Ա՛խ, իմ բալիկ ջան, ո՛նց թէ լաց ես լել դո՛ւ. կաց մի արտասունք սրբեմ,—ձեռք իւր որդի կարոնին քսելով վզի թելը ետ արաւ Սաքիւլը, մի բաժակ լցրեց և դառնալով իւր եղբայրակիցներին, օրհնեց.

Հարազատ քեաղխուգէր, մեր ոտնամուտը շընհաւոր լի, գործերնիւ միշտ աջողութին լի. Աստօժ մեզ գեղի, գեղն էլ մեզ հրմար սաղ պըհի...

—Ամմէ՛ն, տէր Աստուած,—գոչեցին նրանք,

խիստ տանուտէրը մի հարուածով անցկացրեց օդին, գլուխը դիժ եղան պէս թափահարեց, լեզին լեզուին պիտակածի նման նախ բերանին հուպ տուեց և ապա թքեց ու ասաց.

— Ախի, թիւ. ջեջի ա հա:

— Հէր օխնած, որ ջեջի ա, մթամ թէ ըստը քանի տակը բան թողեցիր, գէսը տու մի տենանք, — բաժակն առան քեաղխուղաներն և մէկ-մէկ էլ իրենք կուլ տուին:

Օջաղի շուրջը քեշաներ գցուեցին սփռուցի հետ միասին և կերակրները՝ խաշուի, խաշլամի, իւղի, կարագի և այլ ամանները շարուեցին հիւրերի առաջ, որոնք նստելուն պէս սոված գայլերի նման իսկոյն ոսկր կռծեցին:

— Արթին, դէ հմի ածա տենանք:

— Արթին, քեօխովին արաղ թաւաղա արա, խու գիտաս, սնր ու ձոր...

— Ասա էլի. քեօխովի...

— Փնր:

— Ըհհհ, հհհ, — ցնծալով ծիծաղեց Սաքիւլը և ոսկրը շարտելով շան առաջ, բաժակն առաւ:

— Արթին:

— Համմէ, քեօխովա ջան, — ձեռը սրտին դնելով լսեց Արթինը:

— Հրամանքդ չատ. խմրմ ենք քու աղիդ որդի Սարգսի տէրաւթութեան համախօսական թղթի կենացը. Աստօծ տիրացուն իրան սուրբ մուրաղին հըսցնի, բախտաւոր հէր լես Սարգսի հըմար...

— Ամմէն:

— Ամմէն. — գոչեցին նրանք, կուլ տուին և կրկին ոսկրները ձեռք առան:

Բայց հետաքրքիր տեսնելու բանը ասիական որկր կռծելը չէր, չխրթմա ուտելն էր. նրանք ալամթ եղած բեխներն ու դնչները հօ մենակ չուխաների փեշովը չէին սրբում, այլ և իրենց բրդոտ մեծ-մեծ փափախներով: Օրհնուած քեաղխուղա Կարապետն էլ իւր նոր փափախը չղմշելով՝ կռացաւ կողքին գրած փետրալից փարձովը սրբեց: Սակայն բանն այն է, որ ոչ որ այդ արարքի վրայ չէր ծիծաղում:

— Ըսէլ Աստօծ սաղ պըհի ինձ ու իմ սիրելի քեաղխուղաներին:

— Սաղ լես, քեօխովա ջան, Աստօծ միղալդ համեշա ճտիդ պըհի:

— Ամմէն, տէր Աստուած, ամմէն:

— Ամմէն:

— Ամմէն...

Այդ ընթացքով կերան, խմեցին, Արթինն էլ մի քանի շիշ օղի վերցնել տուին, դուրս եկան և դէպի Սաքիւլի տուն ուղղուելով՝ գգրին պատուէր տուին:

— Սաքո, գնա գեղի ներքի ծէրիցն սկսի ու մեր գիտեցած տներից մի-մի մարդ զրկի տուն:

— Աչքիս վրայ:

— Ադա, Սաքո:

— Համմէ:

— Կաղնի մի, — մօտենալով կամաց ասաց Արզմա-

նր:—Կանչուողներին չասես թէ ինչի հրմար ես կանչում. որ հրրցնեն, ասա քեօխվեն՝ ձեզ բան բղի հըրցնիլ. մէկ էլ էնպէս արա, որ թշնամի մարդ չը լսի. մացար:

—Հրաման քե:

—Գէ գնա:

—Տղերք, որ գան, ամենևին չասէք, թէ Սարգըսի թուղթն ա. ինչքան կարաք խաբեցէք հըրցնողին, —ընկերներին զգուշացրեց սուտլիկ Սիմոնը:

Գնացին Սաքիւլի տուն, շարուեցին վառարանի երկու կողմը՝ մեկնած թախտերի վրայ, մի աման մոթալի պանիր ու մի շիշ օղի դրին կողքներին և ապա քեօխվեն հրամայեց դռնապահ գլրին, որ եկողներին մէկ-մէկ ներս ու դուրս թողնի:

Միջանկեալ ասեմ, թախտերից մինի վրայ մանրունքի տապրակները կողքին դարսած նստած հանգիստաես էր Սաքիւլ քեօխվին ընծայով հիւր եկած մի երկարամորուս հրէայ հո:

—Բարրիկուն ձեզ, —ողջունեց առաջին ներս մտնողը:

—Աստու բարին, Արզման, արադ ածա:

—Էս սըհաթիս:

—Գէ վեկալ, խմի ու ըրաւունք տուր, որ տեղդ ձեռք քաշեն էս թղթին:

—Սաղ լէք, ուրախ լէք, —օրհնեց, խմեց եկողը և գրագէտ քեօխվուղաներից մէկին ձեռք տուեց. այդ նշան էր, որ համաձայն է գրուած թղթին:

—Բարրիկուն ձեզ:

—Աստու բարին, սո, խմի ու էս թղթին ձեռք քաշելու հրամայնութիւն տու:

—Էտ ինչ թուղթ ա, քեօխվա ջան, —ժպտալով հարցրեց երկրորդ մտնողը:

—Հա ինչ ես հըրցնում, ձեռք քաշի, ձեռք:

—Բա էլ խի էք թաղցնում, մթամ գիտում չեմ ինչ ա:

—Ո՛րտեղից. ինչ ա:

—Սարգսի իրիցութենի թուղթն ա էլի:

—Գէ լաւ, էտ ա գիտաս, ամա ոչովի չասես թէ քեօխվի տուն ի գնացել:

—Բարրիկուն ձեզ, օխնեա տէր, տէր-տէր, —երրորդ մտնողը նախ քեօխվուղաներին և ապա հրէային դառնալով, ուղջունեց բարձր ձայնով:

—Աղա, էդ սում ես օխնեա տէր ասում, էն հուշարչի ջհուղ ա:

—Պարհն. ըհահ, հահ, հա, ջհուղին էրէց չինեց Ախրը:

—Թիւ, սրա գինն անըծի, հէնց գիղացի թէ խլաթանց էրէցն ա, —ամօթիւսած պատասխանեց հո:

—Բան չկայ, բան չկայ, մեհակ դու չես. էնքան անտէրտէր մնացել ենք, որ խալխն էրագըմ էլ էրէց են տենում. սո, սո ձեռք քաշի. շատը գնացել ա քիչը մնացել —սօր-էգուց էրէց էլ կուենեանք, օխնեա տէր էլ, —ասաց Կարապետն և ապա թղթին ձեռք քաշեց նրա փոխանակ հո:

—Քեօխվա, սհենցով բան կ'երկարի, արի տասը-տասը կանչի ձեռք գնեն պրծներ:

—Այ թէ ասեցիր հա. թուրքն ասել ա թէ՛ «հայի եղի խելքն որ իմն ըլէր աշխարհ կրանդէի».
դէ ահէնց արէք, տհէնց արէք,—կանչեցին տաս-
տաս և բոլորի անգրագիտութեան պատճառով իրենք
զանազան գունի թանաքներով ստորագրեցին, կըն-
քեցին ու յանձնեցին Արթնին, որ կոնսիստորն ու-
ղարկի:

Այլ առակ լուարուք:

Սաքիւն իւր քեադիսուկաներով երկրորդ զիշե-
րն էլ տիրացու Անդրեասի օջաղի շուրջն էր հոտ-
հոտում: Նա սովորական կերութումից յետոյ վերա-
դարձաւ քեօխմատուն և օդին ու պանիրը կրկին
իւր տեղը դնել տալով, գրեց, պատրաստեց, ստու-
րագրել տուեց Անդրէասի համախօսականը ևս, որին
ստորագրեցին ոչ միայն նրան քահանայ ցանկացող-
ները, այլ և նրանք, որ անցեալ օրուայ աղմկալի
ժողովում գլուխ պատուելով գող և անառակ էին
անուանում նրան:

Քայց այս ամեննին զարմանալու չէ. օդին ու
կաշառքը մենակ այդպիսի հրաշքներ չեն գործում,
այլ և՛ մատնութիւն, սպանութիւն, դաւաճանութիւն,
սուտ վկայութիւն, երգմնագանցութիւն, բանբաստ-
ղութիւն և այլ այդպիսի կորստաբեր ախտերի ծնող
են նրանք մոռացուած աշխարհում:

Անդրէասը Սաքիւլ քեօխմի պարտքից արդէն
պրծաւ. մնացել էր հայր գործակալ տէր-Պեպանը,
որը կաշառք ուտելու կողմից պակաս փշացածը չէր:
Ընծայացուն առաւօտեան վաղ տեղից վեր կենալով,

տրեխների ծպները պինդ քաշեց, մի քանի լուբլի,
մի շիշ օղի գրպանը և քնքած ու վաւերացրած հա-
մախօսականն էլ փափախի ծալումը դրեց ու շտա-
յով ճանապարհ ընկաւ դէպի Խաչ-բաղար, ուր տէր-
Պեպանն ապրում էր իւր նախշունաչք, սեպտալ և
թխածամ խասայի (ապօրինի կնոջ) հետ:

Անդրէասը մի ժամուայ մէջ տասը վերստ ճա-
նարհ կտրելով հէնց այն ժամանակ նրանց կալը
դուրս երաւ, երբ Պեպան հայրը մի մեծ թաքախ առա-
ջը քաշած փթռուկ էր խփշտում:

—Օխնեա տէր:

—Սատօժ օխնի. էդ ո՞վ ես:

—Ես եմ, տէր-տէր ջան, ճնանչլմ չեմ:

—Օհ, դու ես, տիրացու:

—Հրաման քե:

—Համեցէք, համեցէք քեօմակ արա,—[Թաքա-
խը ետ քաշելով հրաւիրեց նա:

—Շնորհակալ եմ, ա՛ տէր ջան, ես վաղ բանի
եմ եկել, պէտք ա թէ՛զ ետ դառնամ:

—Ի՞նչ վաղ բան ա, որդի, ասա տենամ,—փրթ-
ռուկը թանձր մորուսի վրայ ծլծլացնելով հարցրեց նա:

—Էս թուղթը բերել եմ, որ կնստորն ուղար-
կես,—փափախի ծալից հանելով համախօսականը դէմ
արաւ նրան: Տէր-Պեպանն սկսեց կտրդալ՝ մի աշ-
քը [ծղթին ձգած՝ միւսը Անդրէասի գրպանին, ուր
օղու շիշը խոռոչից դուրս եկող սարեակի պէս գլու-
խը հանել, նայում էր նրան:

—Լաւ, էտ ինչ ա, տիրացու,—[Թուղթն այն

կողմը դնելով ցուցամատը մեկնեց գէպի տիրացուի գրպանը:

—Արադ ա, բերել եմ, որ օխնես, տէր-տէր ջան, համեցէք:

—Էս արադը, ուրիշ:

—Ուրիշ էլ սալու թինդ, — պատասխանեց տիրացուն և մի քանի րուբլի հարհարուած թուղթ դրամ դրեց ծնկանը:

—Է՛, որա բանը չի, քիչ ա, հանի տենանք, — գրամները ետ հրելով ասաց նա:

—Ըհը՛, տէր-տէր ջան, ըսէլ երկու մանէթ, հօլա տար, ուրիշ լաւութիւն էլ կանենք, — գրպանը թափ տալով ասաց տիրացուն:

—2է, լիլ չի, գրա բանը չի:

—Աստօծ վկայ, որ էլ գատ չկայ ձեռիս, տէր-տէր ջան:

—2է, լիլ չի:

—Ոչինչ չկայ, տէր-տէր, վեկալ, մի որց էլ կրերի, — գրամները տէր հօր գոգն ածելով բարեխօսեց գիւղական հարճը:


—Դէ որ ասըմ ես, իրիցկին, թող տիրացուն որցը քե պարտական մնայ:

—Փառոց կենաս, տէր-տէր ջան, տպրեն որդիքդ, տէրտրակին ջան, ձեր լաւութիւնը վրէս չի մնալ, — ասաց տիրացուն և երկուսի աջն էլ ծլրփալէ համբուրեց:

—Գնա, արխէ՛յին գնա, հէկց յայտարարութիւն գրեմ կանոստորին, որ իրեք ամիս չբաշած հրամանըդ գայ:

—Փառոց կենաս, ա տէր ջան, չնորհակալութիւն, — ասաց տիրացուն և ստրուկի պէս կրկին ամենախոնարհ գլուխ տուեց ու վերադարձաւ:

Ասած է թէ՛ «կաշաւը մութը տեղ լոյս կտայ»: Էլ ինչ ասել կուզէ, որ արժանամորուս գործակալ տէր-Պեպանը մի գովասանական գեկուցման հետ միասին համախօսականը կոնսիստորեա ուղարկեց և խնդրեց, թէ որքան հնարաւոր է շուտ տնօրէնութիւն արէք:



Թ.

Համախօսականը հիւանդ ճանապարհորդի պէս կոնսիստորումը բաւական քնեց, իսկ Անդրէասի ու Արթին ապօր աչքը ջրի սպասող հնձողի նման մընաց ճամպլին:

—Ա, տէր-տէր, բա հլէ ասըմ իր հրամանը թէզ կգայ, ի՞նչ ըլաւ:

—Հի, օրինուած, դու գինջ ձեր տանը ծլպատակ արած հրաման կգայ:

—Եանի շահի տալու էլի տեղ կայ:

—Բա ի՞նչ, անդամներին տեհել, պրծել էս:

—Վայ նրանց տունը չքանդուի, մզեար նրանք էլ են տենալ ուղըմ: Թիւ հա. մնէլ ըստիան ուխտ ցցած վեկենամ քաղաք գնամ: Հլէ մի ճանանչ (ծախօթ) մարդ էլա չունեմ, մի. էհ, ճարս ի՞նչ . . . :

—Ճանաչն ի՞նչ ես անըմ, ամսի 8-ին ես կան-

սրստորի եղերը պէտք ա տանեմ, հետս արի գր-
նանք Թիֆլիս...

—Այ փառոց կենաս դու, դէ տհէ ասա է: Բա
ինչ ու ի՞նչ չինեմ (պատրաստեմ), տէրտէր ջան, դու
լաւ կիմանաս, անդամներին լայադականն ի՞նչ ա:
—Օրինեալ, գիղըմ չէմ. ինչ որ մեր աղաթն
ա, ինչ որ նաշալնիկին, պրիստալին..., քեօխլին,
էն էլ նրանց:

—Գիւլամ, ա տէր ջան, ամա որ ասես, աւելի
լաւ կլի. մայ թէ ինչ որ հարկաւորն ա, էն թողեմ:

—Առաջինի համար կպատրաստես մի սաղ մօ-
թալ, մի պուլիկ (մի պղուղ) եղ, մի պուլճիկ (պը-
ղուղիկ) սիպտակ մեղր, մի ուշնակ դայմալս (քամած
սէր), մնէլ մի գառը:

—Ուրիշ:

—Ուրիշ ընչինչ, էտքանը նրան բոլ ա: Մէկէլի
(միւսի) համար էլ կպատրաստես էլի մի պուլիկ եղ,
մի պուլճիկ մեղր, մի հինգուհաւ, մնէլ մի տասնը-
հինգ լաւ մէջ դրած գաթա. թէ որ կարենաս Բա-
լինանց որսկան Ակոբին էլ մի քանի կազաւ սպա-
նիլ տաս, աւելի լաւ, թէ չէ հու պրծանք:

—Խի, բա հլէ երկու հոգի են անդամները:

—Զէ, էրկուսը չեն, ամա հան ու չէն նրանց
բերանըմն ա. եթէ նրանք ասեն մածունը սև ա,
մնացածներն էլ մեր գգիրների պէս կկրկնեն թէ՛
«հա, մածունը սև ա»:

—Հա, հասկացայ, փառոց, պաշտըմ-պատարագի
հաստատ լես համեշա: Դէ դու գնա, չուել գալի

ամեն բան կպատրաստեմ, որ իմաց տաս Ասծու
անըմը տանը ճամպայ ընկնենք, —յուսալից ձայնով
ասաց Արթին ապին և տէր-Պեպանից բաժանուե-
լուց յետոյ՝ տէրտէրակնոջ հետ միասին արագու-
թեամբ սկսեցին լուանալուն լուանալ, ածելուն ա-
ծել և կապելուն կապել:

Ճիշտ ամսի ութին գործակալ Պեպանը վան-
քապատկան իւղի պարկերը ձիերին բարձած Խաչ-
բաղարից ներքե իջաւ, ճալիցը ձայն տուեց Արթին
ապօրը. սա այս կողմից նա այն կողմից՝ երկու ջրե-
րի պէս իրար պատահեցին և Ուղ. կայարանում ձիա-
սայլ (ֆուրգօն) նստելով՝ կողքները թառերին, գը-
լուխները կամարակապ խէմքերին տալով հասան
Թիֆլիս և իջան Չաղինեանի քարվանսարում:

Արթին ապին առաջին անգամն էր տեսնում
Թիֆլիսը. խեղճը զարմանքով խիստ պաշարուել էր.
չոգած դուզողունի պէս բերանը բաց կալած միշտ
տների բարձրութեանն էր նայում և «պահ, պահ,
պահ. ես էս սրտեղ եմ, էրազըմ, թէ քաղաքըմ...», —
ասում էր ու անտառից գիւղն ընկած արջի պէս փո-
ղոցներում քալթի-քալթի անելով շուրջը խշկոտում:

Էլ ինչ ասել կուզէ, որ Թիֆլիսի աշրից մազ
հանող «ջիբգիրներն» էլ հէնց այդպիսի մի մարդ
էին փնտռում: Անպիտաններից ոմանք կովին հեծ-
նող ցուլերի և ոմանք ցուլ վարձող մողինների պէս
նախ Արթնի ետեիցն ընկան և ապա իշի հետ հա-
նաք անող գայլերի պէս սկսեցին յետ ու առաջ ընկ-
նելով խորամանկութիւնները հանաքի դնել:

—Տօ, որտղանցի ես, տօ էս ինչ պստի փա-
փախ ունես...—զլխարկը վերցնելով, միջին նայի-
լով ասում էին կինտոները:

—Արթին, ձեռք ջրիդ ըռխին պըհի,—ասում
էր տէր-Պեպանը: Բայց դուր—ինչ օգուտ, թէ Ար-
թինն աշտարակեցուց էլ անցնում էր աջ ու ձախ
հայհոյանքներ թափելով: Չիրգիրները նրա զրպա-
նի կողակները հանելուց յետոյ՝ մեծ ու բրդառատ
փափախն այնքան գետնովը տուին, որ էլ սաղ
տեղ չմնաց:

—Վա՛ ա...ան, տէր-տէր, փողս տարիլ ե՛ն,—
ջիրգիրների ցրուելուց յետոյ բացականչեց Արթինը:
—Ազա, փողդ էլ գտնելու չենք, միայն պինդ
պըհի, որ պուլճիկներդ էլ չը տանեն,—զգուշացրեց
տէրտէրը: Արթինը ախ ու վաշը բերանում, ջուրն
ընկածի պէս այնուհետև պինդ բռնեց իւր խուրճից:

Երեկոյեան ճրագվառոցին նա ուշնակն ուսին,
պուլճիկները կռնատակին հսկա տուած, մի վրացի
մշակ էլ մօթալը չալակած, ուղեցոյց տէր-Պեպանն
առաջներն ընկած մութ բաղադխանովն անցան և
բարձրացան դէպի քարափի թաղը, ուր բնակւում
էր կոնսիստորի կարմրաքիթ անդամը...

—Արթին, գործդ աջողելու ա, անդամը հետ-
ներս լաւ վարուեց. տեսա՞ր՝ չայներիս մէջ լիմոն էլ
զցել տըւեց:

—Տէր-տէր քան, հեռի քու սուրբ յարգիցը, ես
մտտալ լեմ մեր կարմիր կովերի կանանչ թրքին,
մզեար նրանց թրիքը ոսկի ա լե՛ր...

—Հա, նրանց հղի պուլճիկները շատ բան են
չինքմ, զօրթ ա,—պատասխանեց երէցը և քայլերին
արագացրին, մտան քարվանսարա և մի քանի րո-
պէից յետոյ էլ Հաւաքարի մէյդանում երկացին նոյն
պուլճիկներով բեռնաւորուած: Այստեղի կինտոներն
աւելի թուով շրջապատեցին Արթինն, բայց այսան-
գամ պղուղները րոպէսպէս պահ տուեց տէր հօրը,
և՛ «կաց մի սիրտս էլա հովացնեմ» ասաց ու փթա-
նոց բռնեցը մի կինտոյի գլխի այնպէս իջեցրեց,
որ նա իրեք անգամ իրար ետևից գլորուելով տեղից
հաղիւ կանգնեց: Այդ միջոցին հրապարակին նայող
տան պատուհանից մի տէրտէրի գլուխ էր երևում. նա
սովորական հայեացքով դիտում էր տէր-Պեպանին,
մինչև որ վերջինս զգուշութեամբ նրա զանգը ծրըն-
գացրեց մի քանի անգամ:

—Է՛հ, ջհանգամը, թէ շահիփարես տարան էլ, հլէ
գործս էլա աջողըմ ա:

—Հա, էլ մտածելու տեղ չունենք դա էլ խօսք
տըւեց. մի ամսից ետը ձեռնադրութեան հրամանը
կստանանք,—բնակարանի շէմրից փոքր ինչ հեռա-
նալով խօսում էին նրանք:

Արթինն ու տէր-Պեպանը մեծ յոյսով գիւղը վե-
րադարձան, բայց երկու ամսից յետոյ կարմրաքիթից
մի այսպիսի նամակ ոտացան. «... Մենք մեր
պարտքից պըծանք—ինչպէս կարգն էր, գործն առա-
ջարկեցինք սինօդ, բայց այնտեղ մեզ հակառակ մար-
դիկ շատ ունենք..., դուք գնացէք, որքան կարող
էք գործեցէք...»:

— 2է, քոռ ձիւս ըսէլսր հմի էլ դէնը թերեմ:
Արթին ապին, որ երգուել էր չուխէն էլ ծա-
խել Սարգսի ձեռնադրութեան համար, նամակը կար-
գալ տալուց անմիջապէս յետոյ մի քանի պուլճիկներ
ևս պատրաստեց ու ճանապահ ընկաւ դէպի Ս. Էջ-
միածին, ուր գործն աշոգուեց:

Էջմիածնից վերադառնալիս Արթին ապին
այնքան ուրախացել էր որդու բաղդաւորութեան վը-
րայ, որ Ելենովկայում ճանապարհը մոլորելով փո-
խանակ Դիլիջանի կողմը գալու, ձին քշել էր դէպի
նոր Բայազետ և Նորադիւզում հաղիւ էր ուշքի եկել,
որ ինքը մի անծանօթ գիւղ է հասել:

Վերջապէս Արթին ապին հասաւ իւր փափա-
գին: 187... թուին «պլոթ» Սարգսին տէր-Անտոն
անուռով ծխատէր քահանայ ձեռնադրեցին. այսինքն՝
խեղճ խաչեցոց զլխին նրան մի մեծ ցաւ, մի մեծ
գարդ ու բալա շինեցին:



Ո Ս Կ Ե Ս Է Ր Ի Պ Ս Ա Կ Ը.

Ա.

Քարվանսարի կողմից, նեղ ձորի միջով, դէպի
Դիլիջան չորս ձիանի մի սահնակ սառցածածկ խը-
նուղով այնպէս լծած գնում էր, որ զարմացած
կատէր թէ՛ դեռ երկու անգամ աչքս կօփ չարած՝
Դիլիջան է հասնելու: Բայց, ամրաջիլ կառապան
Սարոն յանկարծ և ուժգին «ը՛ռռ...» արաւ, սանձե-
րը քաշնց ու սահնակը Չար-խաչ կամ Ջառ-խեչ գիւ-
ղի առաջ՝ Աղստե գետի ափին պինդ կանգնեցրեց:

— Է՛հէ՛՛յ, աղա քնել էք, — ձայն տուեց կառա-
պանը թէ չէ, ցանկապատ խանութից մէկը միւսի
քամակից մարդիկ զուրս թափուեցին և բոլորէպէս
զլխարկներն առնելով, գլուխ տուին ու մօտեցան
սահնակին:

— Վահ, սրանք ո՞վ են, որ ճնանչեցին եկողներին:

— Ղարիր տղեք են, ընրւօտից չուել հմի եկող-
ների ճամպեն պհում են:

— Ընտանից դէսը:

— Հն:

— Բա հրցրիր ոչ, թէ ինչ մարդիկ էք:

— Հրցրի, չասեցին:

— Հալբաթ թագուհի ա, որ չեն ասել:

— Հրէ սղղանիցը (սահնակից) վեր եկան (իջան), մինն աղջիկ ա:

— Հա՛. ո՞րը:

— Ներքիւղիներ:

— Է՛ն, պահ. տնաշիները հէնց փթըթորել են, որ կասես թէ իրանց օրըմը ձմեռ տեսած չլինեն:

— Դու էդ ես ասը՛մ, թէ էն, հրէ, հրէ. կասես թէ մըմից լի չինած—կռները բռնըմ են, որ վեր չ'ընկնի, ըհհհհ, հհհ, հհ...

— Մըմից են, բա ընչից են քաղքի օղլուշալներն. մեր կնանոց պէս պաւարտ կաղնըքի հու չեն, որ քամու էլ դիմանան, կարկուտի էլ...

— Վայ գետը մեզ տանի. ադա, հլա մի ընտի մտիկ տըւէք, ընտի. մարդն էլա կուռը բռնըմ. վայ խեղճ իմ կնիկ, մթամ ես էլ զաղրըդ գիտամ. էնքան զարու ու ցոյնի ճաւնի եմ շալակըդ տուել, որ մէջքըդ ըղաքար կրող եաբուի մէջք ա դառել. դու էլ կասես մարդ ունեմ:

— Մատաղ մեր կնանոնցը կնանիք խու չեն, աղրէյիլնի են,—եկողների ամեն մի քայլն և շարժումըքը նկատողութեան առնելով, խօսում էին բարձր սրահների տանից նայող ջար-խեչեցիք:

— Հրէ դիւքեանիցը երկու ձի էլ դուռ բերին:

— Հն, խուրջինին վրերնին են գցում:

— Պահ-ը՛ն, ճըմպիցը գուս եկան:

— Այ տղայ, էս ուր են գնըմ սրանք:

— Ուզըմ են գետն անց կենան:

— Կըցէք, կըցէք մի տեսանք հլա խանըմն ինչպէս ա անց կենըմ:

— Կռնիցն էլի բռնեցին:

— Ըհը՛, վեր ընկաւ, ըհհ, հհ, հհ:

— Հը՛հը՛. ո՞նց ա, բա հլէ քաղքի սալած ուքարած ճամպէքն իր տեսել. էդա դհէ բան էլ կայ, է: Դէ, չըքի, պոլիկ, վերընկի, վեկաց:

— Ըհը՛, էլ վեր ընկաւ:

— Ըհհհ, հհ, հհ...—ծաղրում և ծիծաղում էին գիւղացիք և միևնոյն ժամանակ զարմանք յայտնում, թէ ուր են գնում նրանք:

Խանութից ընդառաջ ելողներից մինը Ղազախում յայտնի խաբեբայ Վայիս-բէգն էր, իսկ միւսները նրա ձեռքով վարձուած գիւղացի առողջ երիտասարդներ, որոնք առաջնորդելով խորհրդաւոր սահնակաւորների, գետն անցան և ընկան այնպիսի մի ճանապարհ, որը նրանց միմիայն Գօշ պիտի բարձրացներ:

Զմեռուայ եղանակն այն ժամին սաստիկ վատացել էր. թէև մեղմ, բայց ոսկրից էլ անցնող սառը քամի էր փչում: Սարերի ու անտերս անտառի վրայ, ինչպէս ասում են, անխնայ չողուն էր մաղում. սկզբում ձիւնը գնդակաձև և կամ բրնձի մանրիկ հատիկների պէս էր թափւում, բայց, երբ

քամին փոքր ինչ դադարեց, հատիկները խտական ձիւնի փոխուեցին և թերթեփր սալանի նման ծածկեց ամեն բան—բոլոր թփերը, ծառերն ու մացառկուտները ցրակալեցին զուգած նորահարսի նման։ Սակայն զուգարաց աշխարհի հարսնացած բնութիւնը միեւնոյն ժամանակ այրիացած էր աչքիս առաջ և սաստիկ տխուր սրտիս խորքում։—Ծաղկալից դարունը, աշխատառատ ամառը, զովասուն և պտղալից աշունն անցել, գնացել էին և իրենց հետ՝ գէօրայից վախեցած թխսի նման քաշել հեռացցել էին այդ աշխարհի, այդ անտառի սիրելի և հարազատ զաւակներին—չկային այլ ևս դարդարող կանաչ-կարմիր ծաղիկ և տերեւները և շունչ ու կենդանութիւն տուող ծլկան թռչունները. նրանք վաղուց թռել, չուել էին ձմրան դաժան երեսից դէպի հեռու-հեռու երկրներ և այնտեղ՝ իրենց հայրենի հողից ու անտառից դուրս էին կերակուր որոնում ու անդադար և անհամբեր սպասում նոր, երջանիկ վարնան գալուն։

Է՛հ, միայն նրանք։ Էլ ի՞նչ ասես, որ չէր ահաբեկուել զաժան ձմրան ժանգոտած երեսից։ Հաստամարմին արջն անգամ լահուլահու անելով գնացել չորեւ էր ծակի առաջ և մոռալէ իւր իւղալից թաթըն ըստել ու խորը չլայ էր մտել։ Որք անտառը ծակումուտ աղուէտներին ու ոռնուն գայլերին էր մնացել կարծես. խեղճ մկռօշներն ու առնէտներն էլ էին պինդ խռռչները խցկուել. միայն կէտ ու հատ նապաստակներ ու եղջերուներ կային. որոնք անզօր զառների նման՝ գայլերի ահից դողդողալէ

այս և այն կոճղին կամ քարափին ապաւինելով, ձիւն ու բուրից հազիւ պաշտպանուած՝ մինը կճղակներով, միւսը սառած դեշով ձեան թերթեփր ետ-ետ էին անում, հողը բացում ու փթած խոտերի արմատները՝ շուրջները պահելով կրծստում։

Թռչուններից մի քանի սևերես ագռաւներ միայն բայդուշի պէս կռկռալով պատում էին մեռած բրնձեան գլխին, իսկ ճրնճողուկներն արգէն՝ տղաթեւ էին—գոմ ու մարագների չէմբերում կամ սրահների փարդիների ծայրերին իրենց կողաբած տոտիկները բարձրաբաշի էին անում ու կառուցներն իրենց քաշած խեղճ-խեղճ ծւծւում։ Բայց ձիւնը մեծ-մեծ փաթիլների չէր փոխում, որ կտրուի, այլ հետգհետէ առաւել ևս չափանում, խորանում էր և ցուրտը սպստկանում։

Անտառի ճանապարհը խիտ դժուարագնաց էր ու սոթտուան. տեղ-տեղ զառիվայրերն այնպէս էին սուալուել ու սառցածածկուել, որ վարժես դիտմամբ ոտպնած լինէին. ազատ ոտք դնել չէր լինում. մինն առաջ փոխելիս միւսը անմիջապէս յետ էր սողում. տեղ-տեղ էլ փոսերն այնքան լցուել էին ձիւնով, որ մարդ պօտկադեցըհետ մէջն էր խրթւում դոյզ ոտով։ Անկանոն քամին կրկին սկսուեց և աջ ու ձախ վրդ-զացներով՝ ձիւնի հատիկները սկսեց մարդկանց աչք ու ունրին խփել պինդ-պինդ... Գո՛մ լաւացո՞ւց։

Այդպիսի եղանակին և այնպիսի տեղերում հեռու քաղաքից եկած ճանապարհորդները Վայիս-բեզի և այն երիտասարդների օգնութեամբ, երբեմն բեռ-

նաւորներին ագուց բռնելով՝ սառած, սգառած շա-
րունակում էին ճանապարհը, որը հարիւր ու մի
կռմաններ անելով էր Գօշ հասցնում մարդկանց:

— Տղէք, քոյր մտան, ամա թորան, թէ սալա-
մաթ տեղ հրանեն:

— Ո՞վքեր են դրանք, հալբաթ վաքին մատաղ
են խոսաացել, որ էս թաւուր վախտը եկել են քո-
լերն ընկել:

— Է՛հ, նրանց հէրն էլ անիծած, ոտներս սա-
ռաւ, եկէք ա՛.— ուսներն իրենց քաշած ասացին
ջառխեշեցիք և անտարբեր սրտով տուն մտան: Սա-
կայն, ուսուցիչ Սէթը չէր կարող չհետաքրքրուել
նրանցով: Նա հրացանն առաւ և այնպէս հարաքաթ
արաւ, որ մի ժամուայ ընթացքում կարողացաւ կէս
վերստ առաջ ընկնել: Նա Գօշի դիմացը դուրս եկաւ
և այն տեսաւ ինչ որ գրւում է:

Տասնութօթ տնից բաղկացած Գօշ սակաւաբնակ
հայ գիւղը պապական սիրտ տեղահան անող աւե-
րակների տեղում, մի ամրադիր անտառուտ ձորա-
կում ծովս է ծխում: Ապրուստի կողմից այն աղքատ
գիւղը գտնւում է Սեանայ լճի հիւսիսային լեռների
հտեում— Գիլիջան և Չարխաշ գիւղերից բաւական
հեռու: Այն վայրը բաղկաւոր է իւր անմահական օդ
ու ջրով և բնութեան ամեն տեսակ հրաշալիքներով:

Տարուայ երեք եղանակներում բնութիւնն ան-
մահութեան, կենդանութեան շունչ է փչում մար-
դու հոգուն ու մտքին: Մարդ սր կողմը նայում,
ափանջ է գնում, մանաւանդ գարնանն ու աշնանը,

դրախտ է տեսնում և դրախտային ձայներ լսում—
կանաչ ու խիտ անտառ, ծաղկունք ու բուրմունք,
և՛ էլ քանի, քանի տեսակ գոյնզգոյն թռչունների
անուշ-անուշ երգեր և առուակների կարկաչուն ասես,
որ չզմայլեցնեն մարդու. միայն, եթէ նա աղքատ
գոշեցի*) չէ, այլ՝ հարուստ և զբօսնասէր մարդ:
Իսկ, եթէ նա Գօշի անցեալ փառքին ծանօթ հայ
մարդ է, ապա լոկ զբօսանքը չի գրաւի նրա ուշա-
դրութիւնը: Այն միկնոյն վայրում, նա ձեռք ճակա-
տին, արմունկը մի քարի կյենի և անթիւ ու ան-
բաւ դարձերով կլցուի ու թունաւոր մտքերի ծովում
կալելիոծուի, երբ Գօշից բարձր կանգնած ժայռի
զլխից ներքև նայի:

Այնտեղ, այն ձորակի տփին, մաքուր ճարտա-
րապետութեամբ, սրբատաշ և ազնիւ քարերից կա-
ռուցած մի հրաշակաւոյց տաճար է երևում, որն
ինն հարիւր տարին մի օրուայ նման անցնելուց յե-
տոյ էլ՝ հպարտ կանգնած՝ վէղարաւոր վեհ զլուխը
համարձակ՝ փառաց ի փառս՝ երկինք է հասցնում,
իսկ անկործան հիմքը խոր անգունդներն իջեցնում
կարծես: Երևում են նաև կիսաւեր խորաններ, մա-
տուռներ, լսաշարձաններ որոնք այն հսկայ տաճարի
չուրջը աջ ու ձախ թերուել, փլուել, թափուել, փշրուել
են ու չեղջի պէս կիտուել որմերի տակ և կիսով
չափ կամ թաղուել են հողի մէջ և կամ հաւասարուել

*) Գիւղացին ամենին բնութեան երևոյթներով չի
զմայլում:

նրա հետ: Զուր ևս գալիս և ահա սրբաշէն ու սրբատաշ խախտուած քարեր այն որմի կրծքում, որոնց ճակատին հայի մայրենի լեզուով յիշատակներ են արձանադրուած: — Գօշ Մխիթարի վանքն է այն տաճարը, հայի նախնեաց փառքի վկաներն են այն վկատակները, որոնք մարգու աշքերից արիւն ու կայծեր են քամում: Նա այն տաճարն է, ուր անմահ Յիսուսի ճշմարիտ գաղափարն անդադար քարոզում էր հայ հոգևորականը, ուր մի երանելի ժամանակ հայի կեանքը եռում էր, և յոյս, հաւատ, եղբայրսիրութիւն ու հայրենասիրութիւն ներշնչւում. նրան կիցն էլ այն գաւիթն է, ուր իշխանաւորի իրաւացի հրամանին հնազանդ ստորագրեալ հոգևորականն ու աշխարհականը բաւում էր իւր յանցանքը. երրորդ, չորրորդ կողմը նայիր, այն էլ այն սուրբ սեղանատունն է, ուր աղքատի հարստի խտրութիւն չկար, ուր հօր պէս կանգնած ծերունի վէղարաւորը Յիսուսի նման ծառայում էր իւր աշակերտներին և ամենքին հաղորդելով ու ճաշակելով, մատնիչ Յուդային դուրս էր չպրտում: Ահա եօթնպատարագեան խորանները, նրանք ճգնարաններ էին, ուր ներկայի նման աղօթքը շրթունքներով չէր, այլ ջերմեռանդ սրտով ու հոգով: Այն էլ արևի ժամացոյցն է, որի ցուցումով ժամասացութեան կարգն էր պահպանւում, և վերջապէս ահա մեր նախահարց սուրբ շիրիմները, որոնց տարին զոնէ մի անգամ օրհնել տուող, յիշատակող չկայ այս մոռացուած ձորակում: Վաճ ամեն, բան քանդուել, աւերակուել և մոռա-

ցութեան է մատնուել: Աստուած ողորմի յո սուրբ հոգուն, Գօշ. ետրաբ այս երկնաբերձ գմբէթը կանգնելիս դու ի՞նչ էիր մտածում... — Սէթը սիրտը յուզելով մինչդեռ այդպէս խորհրդածում էր, յանկարծ լսեց զեղջուկի հետեւեալ կարեկցական մրմունջներն ևս:

— Ո՛վ վէ, էս ինչ թիւնդ ձմեռ արաւ. մտիկ արէք մի, մտիկ. տեսէք ձինը մնց ա վրատալի է:

— Վայէ, ասըմ ես, թէ ի՞նչ անեմ. խոտս ու դարմանս ջլիս հատել ա. թէ որ Աստօծ ոչ արած՝ զարունքն էլ եղի գայ, տաւարներս կոտորուիլու են սովից...

— Է՛հ, Աթո ջան, ես էլ քեզ պէս՝ իմն էլ ա հատնըմ:

— Գուք լաւ ա խոտ ու դարմանի հըմար էք դարդ անըմ, իմ հլէ հացս ա զլիւքմ, հացս: Անտէր ճամպէքն էլա բաց չեն, թէ գնամ Քրվորեցը մի երկու թուման պարտք առնեմ, որ սովի սև երեսից բեխէքս ազատեմ...

Սյուպիսի գիւղական ցաւերից մրմնջալիս ոտնուրագով տաշ անող Սաքոյ ապին բեզարած հնձողի նման կէռ մէջքը դրստեց ու հետաքրքրութեամբ ներքև նայելով, ասաց.

— Ա, տղեր, էն սփրեք են վանքի վրայ (գէպի վանքը) բացրացողինն, հրէ, հրէ:

Սրահում նստոտած զրոյցընկերները բոլորն էլ տեղներից կազնեցին, ծառ-ծառ եղան և զարմացմամբ կրկնեցին.

— Էս սփրեք են, էս սրտեղացի են...

— Ղարիբ են . . .

— Մինը կնիկ ա:

— Ղօրթ ես ասում, լէյի թէ կնիկ լի:

— Կնիկ ա, կնիկ, տենում չէք:

— Հա, հա, կնիկ ա:

— Կնիկայ կողքինը դարիբ ա, ամա մէկերնըրը ներքի գեղերի տղէք են ըրերում:

— Պըլը, էն դարի եկողը Վայիտ-բէգը չի, հրէ, հրէ:

— Հա, հրէյի թէ նա լի:

— Նա ա, էլ խօսալ միք:

— Էն ձին քաշողն էլ ըղզնեցի ա:

— Էտ լաւ ա, նրանից կը մանանք, թէ ուրքեր են:

Գիւղացիներին խօսիլն ու խլշկոտալն իմանալով Գօշի քահանայ տէր-Մաղբոսը, որ տէր-Անտօնի հարազատ և գաղափարակից եղբայրն էր, սրտատրոփ դուրս թռաւ իւր խողից և պատռտորոտած վերարկուի դեմնած փեշերը քաշ տալով՝ շտապեց գէպի եկողները և ժամանակ չտալով նրանց, տեղը կանգնեց և ինքն «օրհնեա տէր»-ից առաջ նրանց ասաց.

— Բարի ողջուն, գալներդ բարի:

— Ըհը՛, հրէ տէրտէրն առաջնին վագեց, — նկատեցին գիւղացիք և ապշած նայում էին:

— Օրխնեա, տէր, — մրսած շրթունքներով եկողները ևս ողջունեցին:

— Օ. սառել էք հա, Աստօծ օխնի, Աստօծ, եկէք, եկէք . . .

Տէր-Մաղբոսը հիւրերի առաջն ընկաւ և առանց

գիւղացիներին կողմը նայելու տարաւ իւր տուն, որ վանքին կից էր գտնւում:

— Տէր-տէր, դորմի հօրդ մքիչ փետ ու կրակ արա, օջաղը տքցրու, թէ չէ լիզուերնիս էս ա կապւում ա, — խնդրեց մեծ քիթը կարմրած Վայիտ-բէգը:

Ձիւնի մէջ սող ու սոթ տալով եկան, ձիերի բեռներն իջեցրին և ամենքը կռանալով, նեղ ու ցած դռնից ներս մտան: Իսկ տէր-Մաղբոսն անձամբ, ձեռքերը սափերը քսելով, դէս ու դէն ընկաւ, մի խտիտ խշուրփշուր ու չիլփի արաւ, մի քանի հաստ քեօթուկ (կոճղ) էլ կողքն առաւ ներս տարաւ, կըրակը ֆու հա ֆու փչեց ու գռզոնն հնոցի պէս վառեց, թէժացրեց:

— Դէ հըմի տքացէք, ձեր արևին դուրբան, — ասաց քահանան:

Սառած-կապտած հիւրերը կուրծքները կրակին արին, տարացան և օձի պէս գլուխները դէս ու դէն անելով, սկսեցին իրենց անսովոր գիւղական խրճիթի քիւնջ ու պուճախին նայել, ծանօթանալ խոնաւ պատերի հետ:

Տէր-Մաղբոս հօր բնակարանը պէտք է խոստովանել, որ գիւղի ամենալաւ բնակարանն էր. այսինքն՝ տանիքն ու պատերը հազար ու մի տեղից ծաղկածուկ, խախուտ և կեղտոտ խող էր, որ չէր կարելի իրեն կից խողանոցից զանազանել: Խիստ ձմեռը դուրսը մնալն անհնար էր, իսկ ներսը մարդերը մտածում էր, թէ ձիւնից ծանրացած ու փթած օճորը կարող է յոնկարծ փլիւ և ամեն բան տակը

թոյնել, սարսափում, սառսռում էր ջանը: Մաղքոսի արած թէժ կրակի ալաւից ցածրաշէն խուղի առաստաղից ձիւնի հալուածքն սկսեց ծըլթծլթալ այս ու այն կողմ: Ունջ ու սարդոստիւնով ծածկուած օճորքից՝ պղտոր ձիթի գոյն ունեցող կաթիլները սողալով՝ պատերի ու գերանների վրայով, նոյն դժգոհնով ներկեցին յատակը և բլիթների նման լճակներ գոյացրին տեղ-տեղ:

Ճեղքճեղքուած, փերթահան եղած դրան արանքներից ու պատերի ծակուծուկից աջ և ձախ մտնում էին հակառակ քամիները: Այդ քամիներին սնց դիմանար քաղաքացի քնքոյշ օրիորդը, նա խսկոյն մըրսեց և երկու ձեռով կողքը պինդ բռնեց ու ղնջուկով սկսեց ուրմուռը գալ: Խեղճ օրիորդի դրուժիւնը մի կողմից կարեկցութիւն, միւս կողմից խիստ մագալու ծիծաղ էր շարժում: Ինչեւիցէ, նրան չոր ծածկեցին, որ կողքի ծակուցը կտրեն: Սակայն մենակ թիկունքները պոկող ցուրտ քամին չէր նեղացնում նրանց, ուրիշ պատուհասներ էլ կային: — Տէր-Մաղքոսի վառած կրակը երբ բւագեցնէր եղաւ, փթռակ ու որդնալից ածխակոթերը խիստ տրաքտրաքոցն բնկան և վառ կայծերը միմեանց ետևից՝ դարբնի մուրճից թռչող պէծերի նման, թռան դէս ու դէն: Խուղի նեղ ծխնեղոյղից վզզան քամին թանձրացած ծուխն սկսեց ետ տալ, թէև անագին կրակի մեծ քանակութեամբ կանգ առած ծուխն ուժ էր տալիս ծակուծուկից դուրս գնալ:

Դրան կողմից նայելիս թուում էր, թէ ներսը

խոնաւ խոտ է այրում, և՛ հազիւ նկատում էր, որ ծակերից մուլ է դուրս գալիս, բայց այն էլ քամին հէնց բերաններում ցրում կորցնում էր: Ներսում մուլն անպի նման կիտուել էր և սուրղ քամիներից ալիքանման ճօճում էր աջ ու ձախ:

Օջաղի շուրջը, խորթուրթ յատակին ձգած միջատալից թաղիքների վրայ նստած էին՝ երկու հարուստ հիւրերը, նրանց ծառայող չէյթան (սատանայ) Վայիս-բէգը, տէրտէրակին Խանիկն ու տէր-Մաղքոսն իրենց ջլրաց երեխանցով: Օջաքարին մօտ քաշած շեղջի վրայ դրած՝ պոռնգները ջախջախուած մի պղնձում թէյի համար ջուր էր թշթշում: Բայց որի աշըն էր գալիս կամ մտրովն անցնում թէյը: Խեղճ քաղաքացիք՝ գիւղական կեանքին անծանօթ հիւրերը, սաստիկ տանջանքի մէջ էին ծխից: Նրանք աչքների արցունքով թրջուած դէմքները կնճռոտած անդադար շուռումուռ էին տալիս դէս ու դէն, աչքները հպաղում, տրորում և սպիտակ փրփուրի պէս թաշկինակներով սրբում ու սրբում, կրակի շուրջը շատ պտտեցին նրանք զո՛հ անող թուրքի պէս, բայց ի գուր, քամին հօ մի կողմից չէր փշում:

Խեղճ տէր-Մաղքոսն աշխատում էր հիւրերին պատիւ անել՝ նա երեխայի պէս անդադար պուպուզ-պուպուզ անելով մլող (ծխուող) ածխակոթերն իրտր մօտեցնում էր, որ շուտով վառուեն, այրուեն, վերջանան, հիւրերին չնեղացնեն: Այդ միկնոյնն անում էր Վայիսբէգն ևս:

Դիւղական ամենագոյնի տիպ Վայիս-բէգը չը-

ռայլ կեանքի բարբառոս երեսից հալածուած՝ պարտապաններից շարունակ փախուստ տուող, դեակերպ, բարձրահասակ, խստապարանոց, խարդախահայեաց մի փուշ կենդանի էր, որի ամեն-մի խօսք ու զրոյցի ձևի մէջ մի-մի պոչաւոր սատանայ կար թագնուած։ Խօսելու ժամանակ հաստ գլուխը տատանելով բարձրութեան էր անում և անճոռնի աչքերի սիպտակուցը շատացնելով, մարդու վրայ խէթ-խէթ էր նայում։ Թէև անիծածը հագին Գանձակի ձև ու կարով՝ օյմաւոր մահուդ չուխա, երկայն ու նեղ շալուար և գլխին քթաւոր գլխարկ ունէր, այնուամենայնիւ այլանդակ էր, դժոխային հայեացքի, դեակերպ պատկերի և սպիտակաշատ աչքերի մէջ բացի լաւից ամեն տեսակ կեղտոտութիւն կարելի էր գուշակել։ Զգուելի էր մանաւանդ գոմշի թափանի նման դուրս ընկած փորը, սպիտակախառն մազերով տափակ գլուխը, ուռած ու հոտած, կարմրած լայնածակ և լայնատանկ քիթը և անճոռնի կերպով ետ ծալուած չըրթուները ու բերանը թափուող խոզամազ բեխերը։

Վայիս-բէգ անուան «վայիս» բառը ժողովուրդն էր գրել նրա իսկական անուան վերջաւորութեան յաւելուած «բէգ» բառից առաջ, իսկ վայիս կնշանակէ՝ փուշ, անալիտան, կեղտոտ և այլն։ Վայիսն սկզբում լկտուել էր գուրսը, քաղաքներում, ուր մնալով՝ շատ թէ քիչ գրել կարգաւ սովորեցուց յետոյ՝ վերադարձել էր իրենց տուն և իւր հայր Կէտիկ քեօխվա մականուանեալի պաշտօնավարութեան ժամանակամիջոցում հազարաւոր տեստի շարութիւն-

ների, խարդախութիւնների մէջ վարժուելով, հօր մահից յետոյ մի քանի անգամ գիւղական դատաւորութիւն էր արել. բայց ինքս կենդանի վկայ եմ նրա դատաւորութեան ժամանակին. Տէրն ինքը փրկէ ու ազատի մարդու նրա պէս դատաւորից։ Քանի-քանի անմեղ մարդկանց խաթի ու ցաւի մէջ էր գցում իւր գրպանի օգտին. հասարակութիւնից գիտէր ինչքան փող էր գողանում, ուտում. քեասիրներին ինչպէս ճնշում ու ծեծում, մտրակահար էր անում. բայց վայ նրան, ում որ պատէր նա. կեղծ ու սուտ ստորագրութիւններով արդարին մեղաւոր, իսկ մեղաւորին, մինչև անգամ մարդասպանին վասն իւր գրպանի արդար ու անարատ էր դուրս բերում . . .

Բայց Վայիսի իշխանութիւնը երկար չտևեց գիւղում. հասարակութիւնը մի ուսուցչի քարոզութիւնից խելքի գալով, այլես նրա շարութիւնները չը տարաւ. մի քանի անգամ՝ նախ իրանից բաժանուող եղբայրները, ապա գիւղացիք, զորս դու պատուիրեցեր, լաւ ջարդելուց՝ դադանակներով քեօթակ տալուց յետոյ՝ բողոքեցին օրինաւոր իշխանութեան, որը քննելով գործը՝ անիրաւին հեռացրից իւր բարբառոս և անգութ պաշտօնավարութիւնից՝ տուգանքի ենթարկելով միանգամայն։

Բայց հազար էլ թքիր անիրես մարդու երեսին, ինչ դուրս կգայ. Վայիսի երեսը անառակի երես էր դարձել, էլի չէր դադարում վայիսութիւնից—թագուն-աշկարայ խաբում էր սրան-նրան, թէև ամեն

օր պարտապանները օձիբից բռնած թափ էին տալիս... Ահա այն անբարոյական Վայիսն էր պատճառ դարձել ձմեռուայ խիստ եղանակին հարուստ հիւրերի Գօշայ վանքը գալուն:

Բաւական ժամանակ անցնելուց յետոյ՝ թէժ կրքակն արդէն չեղջ էր դարձել և աւերակի վրած բեկորների պէս կիտուել օջախում, էլ ծուխն այնքան չէր նեղացնում: Վայիսի կողքին՝ ծունկ-ծնկան նըստած էր տիրուհի Խանիկը. նա ու Վայիսը թագուն-թագուն իրար աչքով անելով այնպէս մտերմաբար խօսում ծիծաղում էին, որ կարծես, թէ վաղուց ծանօթ լինէին...

Գինգն ու կոպին մի կողմի վրայ ծուռտիկ դրած Խանիկը գլխին մի կարմիր ու կեղտոտ հասարակ թաշկինակ էր ձգել և տոնները բերել ծնօտի տակ կապել, պոնգկալն իջեցրել էր ու դուզէն սլուրիկ արած, կրակի առաջ նստել:

Հագուստով խեղճ և պատռոտուն էր ողորմելի Խանիկը, բայց բնաւորութեամբ ուրախ, դուրեկան, իսկ խելքով իւր տիրոջ պէս շատ սահլիկ: Հագի անտէր միջանէն այնպէս ծուխիկ-ծուխիկ էր եղել, որ առաջի փեշը չկար բոլորովին, կողքերքն էլ կարծես աշխարհի բոլոր մկները վրաթափուած կերած լինէին, վերևում միայն մի օլ էր մնացել վզին, իսկ ետևի փեշը նեղ գիւզակ դարձած, նիհար ոչխարի անիւղ դմակի պէս ծափ տալով անդադար խփում էր տտրղին ու խփում... Խեղճ տիրուհին ոչ կօշիկ ունէր ոչ մաշիկ.

Խեղճ տիրուհին ոչ կօշիկ ունէր ոչ մաշիկ.

ամառ, ձմեռ, աշուն, մի խօսքով տարին տամներկու ամիս փուշ ու սրհարների մէջ բոբկոտն էր մանդալիս, բայց այնպէս ազատ, որ դորգերի վրայ մանեկոյն էլ երանի կտար նրան. ոտների տակն այնպէս հաստացել, կոշտացել էր, որ բզի նման ամուր փշերն անպամ չէին կարողանում մուտ գործել:

Տիրուհին, ինչպէս գիւղական աղքատ կին, շատ կեղտոտ էր ապրում, թէև աղբիւրները ձրի էին բլխում: Բայց այն կեղտ ու ձորձերի մէջ նա այնքան առողջ, այնքան գեղեցիկ էր, որ մարդ նախանձով երանի կտար՝ լինել այնպէս աղքատ և այնպէս առողջ ու առույգ: Գեղեցկութեամբ հարիւր տէր-Մաղքոս արժէր տիրուհին, բայց չզիտեմ գեղեցիկը տգեղին ինչպէս էր գտել ու հաւանել...

Տիրուհին այդպէս: Գանք տէր-Մաղքոսին. — Գահ, նրա վիզը չկտորի, շատ այլանդակ պատկերի տէր մարդ էր. քահանայութիւնն իսկի վրան սագում չէր. համարեա փայտից շինած մարդու էր նմանում — ուտերից մինը քաշ էր, միւսը խլթոտ ծառի պիթակի պէս դուրս ընկած. ոտները մանդալիս գերանդու էր ածում, ձեռները հերթով յետ ու առաջ գրցում ու վիզն անշնորքի պէս ճկում: Հագուստն Աստուած էր կտրել. մի վերարկու ունէր, չզիտեմ քանի տարուայ, բայց թւում էր, թէ այնքան գարուն էր տեսել, որքան ժամանակ քահանայ էր Գօշում: Անտէր մնալուն կարծես գիշատիչ թռչունների ճանկ էր ընկել, այնպէս քրքրուել և հարիւր գոյն ու կտորներով կտրկատուել, քերուել խունացել էր. եթէ

ասէինք մամռագոյն է և կամ դառը ձիթով ներկած, էլի սխալ կլինէր, որովհետեւ գոյնը որոշելը շատ դժուար էր: Այդ հազար գոյն ու կտորի վերարկուն Մաղբոսին շատ անգամ վերմակի տեղ էր ծառայում և շատ անգամ հանդ գնալիս կապոցի տեղ:

Գլխարկի մասին էլ խօսե՛նք: Իրեն գոյնով ու տեսակով անտէր լինի նա, գլխարկ էր: Է՛հ, ինչեւիցէ, իբրեւ թէ տէրտէրի շապօ էր: Զապօն Դիլիջանում մի ճանապարհորդ էր ողորմացել նրան: Զապօն ճանկն ընկնելու օրը Մաղբոսն այնքան ուրախացել էր, որ քար ու ձորի չնայելով իւր փալանած ձին Դիլիջանից մինչև Գօշ մի ջնշի էր քշել, որ տիրուհուն ցոյց տայ, կամ ինչպէս ասում են, գեղացոյց աչքապուպուղ անի: Նոր շապօն նա առժամանակ ազիզ-մազիզ էր պահում, յետոյ՝ երբ նայելուց ու սրան նրան ցոյց տալուց կշտացաւ, սկսեց շատ ծառայութիւններ անել տալ. օրինակ՝ նախ ծառայեց երեսսրբու, սփռոցի, ապա բարձի... և վերջապէս սառը պղնձի բերանը ծածկող խփան տեղ: Անիրաւ շապօն այդ բոլոր ծառայութիւններն անելով դրսից տեղ-տեղ կարծես վաքսած, իսկ ներսից նօթած լինէր (սե նաւթ—մազութ): Այդ վեց, թէ եօթը աշուն ու ձմեռ տեսած գլխարկն այնքան ճշուեւ էր դէս ու դէն, որ թրջած ծառասոկոնի էր նմանում, և՛ երբ նա այդ սոկոնը ծածկում էր, տեսնողը շատ սառնասիրտ կամ դարդոտ մարդ պիտի լինէր, որ ծիծաղը պահէր. իրիցի տարածը Մաղբոսի ծուռ ու խլիւստրակ գլուխն իւր մէջ պարունակելով՝ չրջուած

կերպով թառ էր ընկել դէպի ուսերը և ականջները ծածկելով աչքերի առաջն էլ փակել էր, այնպէս որ՝ երբ նա ուզում էր վերև նայի կամ կողքի վրայ մըտիկ տայ, ծաղրածուի տպաւորութիւն էր թողնում մարդու վրայ և հէնց դրա համար էր, որ խեղճին բացի Մաղբոսից Քօսա-գեալդի էլ էին կոչում:

Մկնակեր վերարկուի հազար ու մի ծակուծուկից նկատում էր, որ արժանապատիւ տէր-Մաղբոսը միմիայն մի քրքրուած չիլա շապիկ և մի բամբակը դուրս թափուած արխալուղ ունէր հագած. ոտներին մազոտ կաշիով կարկատած մի գոյգ տղլափի նման չուստ, որը երբեմն տիրուհին ևս հագնում էր:

Այդ բոլորից յետոյ՝ հիւրերի ուշադրութիւնը դրաւում էր նախ բարեկրօն հօր խճճուած մորուսը, որ կարծես դիտմամբ աջ ու ձախ հիւսուած լինէր. բայց միայն դրանք չէին նպաստում նրա այլանդակութեանը, այլ աւելի նրա դէպի քիթը ետ ծալուած փսկրոտ ու կարմրած չրթուկը, պէլ-պէլ աչքերը, և՛ մանաւանդ ետևի կողմից դուրս ընկած ուսապէնչը (ուսոսկր), որը լանթ վերարկուն վերքաշելով՝ բաց էր արել տէր հօր կեղտից տրաքտրաքուած մերկ նրբանները: Այդ բոլոր պակասութիւնները Մաղբոսին որդերի կերած կոճղի էին նմանացրել: Սակայն այդ այլանդակութեան տէր Մաղբոսը շատ բարեհոգի, ողորմած և հիւրասէր մարդ էր. բերանի թիքան անգամ հանում ուրիշին էր ուտեցնում: Հիւրին հանդիպելիս նա այս խօսքերով ու եղանակով էր դիմում նրան. «Օ՛հ, բարով ես եկել, գլխիս վրայ

տեղ ունենաւ. մատաղ ջան, քե մատաղ, քե դուրբան, հաջմն. ջանիդ մեռնեմ, համեցէք, գնանք Ասծու տուածից մի կտոր հաց ծամի...»։ Այդ յատկութիւններն ունէր, բայց ափսոս, որ աղքատութեան հետ նրան մի բան էլ էր պակաս. այսինքն այն, որ շատ յիմար ու թեթեւ էր—տգիտութեանը չափ ու սահման որոշել չէր լինիլ. ամեն բանի հաւատում էր հին պառաւի պէս. օրինակ՝ պողաւոր, թխաւոր և հարիւր ու մի ճանկանի սատանաներին, քաջքերին, լայնաբերան վիշապներին խիստ երկրպագում էր արօժտատելու ժամանակ և իւր հօտին նրանց մասին առասպելներ պատմում...

Նախապաշարուած Մաղքոսը քահանայ էր, բայց երգւում եմ, որ եթէ յիսուն ճրագով էլ մանգայիր, պշպօշայիր, սոված փորումն այիր-բէնի կտոր, հետք չէիր գտնիլ. և կարծում էք, թէ նա ժամ ասելու ժամանակ աւետարանը կարդում էր. չէ, իրենից կամ շարադրում էր և կամ զեղջում, համառօտում. սր բառը չէր կարողանում կարդալ, ինչպէս ասում են, լոք էր տալիս փախչում. մի խօսքով որ ասենք՝ ամեն ինչ շիւափլաւ էր անում նա։ Նրա յիմարութեան ու միամտութեան շափը մասամբ որոշելու համար երկու դէպք միայն մէջ կրեբեմ։ Հազի վերարկուն կարել տալու համար մի անգամ գնաց Դիլիջանի դերձակների մօտ, որ ձենն։ Դերձակները Մաղքոսին լաւ էին ճանաչում, ուստի ուզեցին մի մազալու հանար անեն։

—Ո՛ւտա Մալի, մկրատդ հազրի, որ էսա

ետ եմ գալի փարաջացու առնեմ,—խանութի առաջից անցնելով ձայն տուեց տէր հայրը։

—Շատ լաւ, տէր-տէր, միայն աշխատի թէգ ետ գաս,—պատասխանեց վարպետ Մալին և դառնալով ընկերներին, ասաց.

—Հը, տղերք, էս ա ասում եմ, չծիծաղէք, ո՛վ որ ծիծաղի, դունչը կէծ շամիրով դաղիլու եմ...

Մաղքոսը կէս ժամից յետոյ վերարկուի կտորը կռնատակին վերադարձաւ, Մալնի խանութի դրանը կանգնեց և խնդրեց այսպէս.

—Ո՛ւտա Մալի ջան, հղարէց մ'հետ ձեր կուշան եմ եկել, ձեր խեղճ էրէցն եմ, փրաջէս ձեռքէք ու համ լաւ, համ էլ էժան կարեցէք։

—Զուր ես դանչար անում, տէր-տէր, մենք քու փրաջէն օսալ (վատ) չենք կարիլ, ներս մտի ձեռքեր։

Խանութի պատերի տակ կարող ու քղող բանտորները ձեռքները կարից ետ քաշած աշխատում էին ծիծաղները զսպել։ Մաղքոս հայրը ներս գնաց և խանութի մէջտեղը դրած սեղանի առաջ երեսը դրան կողմն անելով ուսերը դէմ արաւ վարպետին, որ չափի ու ձևի վերարկուն։

—Տէր-տէր, ոնց որ գիտաս, մենք նհէնց չենք ձեռելու. դերձակաձեն էսպէս ա. դու պէտք ա էս դաղգահի վրայ պառկես, որ չափդ վերցնենք։

—Ղօրթ, քե մատաղ։

—Աստօած վկայ,—երդուեց վարպետը։

—Ո՛նց խտոր ընկնեմ, մէջքիս վրայ,—մէջքը

սեղանի վրայ գցելով և ոտները ցցելով ասաց տէր-Մաղքոսը:

—Հա, տհէնց,—ասաց վարսետը և ոտներն ուղղելով, առաւ կաւիճն ու շուրջը սեղանի վրայ դուրս բերեց նրա գլուխը, բունը և ոտներն ու կռները:

—Դէ վե կաց, գնա, տէր-տէր, պրծայ:

—Պահ պրծար,—սեղանի վրայ գծած պատկերին զարմացած նայելով ասաց նա,—այ, օխնուր ուստուծինը, ձեռաց էր էլի. դէ ես էս ա գնրմ եմ, ամա պինդ կարէցըր, ուստա ջան:

Մաղքոսը դուրս գնաց միամտաբար, իսկ ծիծաղով լցուած բանուորները ձեռքները քթներին դրած էլ ծիծաղները չկարողացան պահել...

Այլ առակ լուարուք:

Մի օր էլ, չգիտեմ ո՞ր գիւղից մի աղջիկ էին պսակել ու զարդարած հարս ու փեսան մականներով շրջապատած՝ ձիաւորուած Պօղոս-Քիլիսա էին տանում: Հարսանքաւորը դեռ բլրի ետին էր, որ պիտուները տեղը դրին զաւառները, որ գիմաց դուրս գալուն պէս ձիարշաւի ածեն. կարգն այնպէս էր, բայց, Դիլիջանի բազարի մէջ յանկարծ մի անսովոր շրթոց լսուեց և մի ձիաւոր խիստ չափ գցած այնպէս սկսեց քշել իւր ձին, որ պայտերի տակից կայծեր ցոլացին. նա այնպէս շտապով փախչում էր ու ձիուն անխնայ ծեծում, որ կարծես թէ թշնամին ետևից ասելիս լինէր, «բռնեցէք, բռնեցէք, փախաւ, բռնեցէք...»: Զի ու ոտաձայնին խանութ-

ներից մարդիկ դուրս թափուեցին և իսկոյն նկատեցին, որ նա տէր-Մաղքոսն է. դեռ չիմանալով, թէ բանն ինչումն է, վրա-վրա կանչեցին ետևից:

—Տէր-տէր, տէր-տէր, էհէ տէր-տէր, էհէ՛ճյ...:

Տէր Մաղքոսը սանձը քաշելով հազիւ թէ կանգնեցրեց տարացած ձին և պատասխանեց.

—է՛ճյ...

—Ա՛, տէր-տէր, էդ ի՞նչ խաբար ան, էդ ի՞նչ խաբար ան. տհէ չափ գցած էդ ուրես փախչում, էդ ուրես փախչում... հէհ... ի՞նչ խաբար ան...

—Խէր խաբար, խէր խաբար. ետևիցս հարսանիք ա գալի, անուէս եմ, անուէս եմ, էհէ՛ճյ, անուէս,—ասաց ու կրկին մտրակեց ձիուն...

—Ասում ա անուէս*) եմ, բհհհ, հհհ, հա...:

—Հհհ, հհհ, հա...,—Դիլիջանցոց ծիծաղն այնուհետև թնթացրեց ամբողջ բազարը:

Բայց խէնթ տէր-Մաղքոսը ոչ մի մականրի կամ հարսանքաւորի հետ չէր մրցել իւր փախնած ու պոչը կտրած ձիով, այլ վազուց կարճ կտրով ուղիներով,

*) Գաւառներում սովորութիւն կայ, որ մի գիւղից միւս գիւղը հարս տանելու ժամանակ, երբ մօտենում են գիւղին, հարսանքաւորները զուռնի ներդաշնակութեան ներքոյ ձիարշաւով մրցում են իրար հետ և նրանցից մինը մի գունաւոր թաշկինակ կամ բաղդադի կապելով ձիու վիզը, կրկին հարսի առաջն է գալի ցոյց տալու իւր կտրճութիւնը: Այդ սովորութիւնը շատ վաղուց կայ հայերիս մէջ: Մրցանակ տանողը հնումն առաջաւոր կամ աւետաւոր էր կոչւում, իսկ վերջերս «Աղուէս» են կոչում:

խեղճ կենդանու գլուխն, ինչպէս ասում են, սխտորելով առաջ էր ընկել, որ իբրև աղուէս ինքն ստանայ մրցանակը: Խորամանկութիւնը թագուն չմնաց, դիմաց դուրս գալուն պէս, հէնց որ դաւախները գիլ փչեցին, մի ուրիշ աղուէս էլ չափ ընկաւ բազարի միջով, որի ետեւից կանչում էին.

— Զասիւր, Զասիւր միւրրիցը բռնի, ձիւթափ արա՛, ձիւթափ արա՛...



Բ.

Անծանօթ հիւրերի տէր-Մաղբոսի տուն մտնելուց յետոյ՝ գօշեցիք հետաքրքրութիւնից շարժուած նրանց իրեղէնները բերող գիւղացիներին հարցութիւն արին հիւրերի գալու, որտեղացի և ով լինելու մասին:

— Ա՛, ըղբրացու ջան, էդ ինչ դարիբ մարդիկ են, որ ըրիցի տուն բերիք:

— Վալլահ, իրանց բան չհրցրինք, ամա Վալիսն ասեց, որ հեռու տեղից են գալի, քաղքի մարդիկ են:

— Բա չասեց թէ ինչ գործով են եկել:

— Ուխտուոր են ասըմ ա...

— Վալիսը որտիան ա ճնանչըմ դրանց, բարեկամ հու չեն:

— 2է՛, ասեց՝ տեսուճանանչ ենք. քաղքիցը վրէս

գիր են զրկել, որ աղաքնին դուս գամ, վանքի ճամպէն չըհանց տամ...

— Զահ:

— Դէ տհէնց ասեց, եսիմ...

— Վալլահ, հլէ լաւ հաւատից պինդ, հողու ծառայող քաղքցիք են, որ էս հրողմունքի ժամանակ, էս ձին-ձմեռը գլխներից ձեռն են վեկալել ու ընտիան ըստի ուխտ եկել:

— Ուրիշ. ինչ ին խօսըմ ճամպին, — հարցրեց մի ուրիշ գիւղացի:

— Էլ էնթաւուր բան չին խօսըմ, միայն, եբոր տեղները նեղացաւ, սառած տեղերում շատ վեր ընկան, վեկացան, աղէն ասեց «իմ պարտքս լի, որ ես իմ խարջով էս վանքի ճամպէն չինիլ տամ»...

— Ղօրթ, ասեց. պահ. էդ ի՛նչ Ըսծասէր մարդ ա, այ դրա գալը բարի լի, բա էսքան վաղտ էլ խի էր եգանըմ...

— Օ՛, էդ գժողքի ճմպիցը որ մեզ ազատի, թէկուզէ իրան հօրն օխտը տարի պատարագ էլ չանի, էլի արքաւութիւնը կմտնի:

— Օ՛հ, տէր Աստօծ, էս ի՛նչ օխնւած բան լսեցինք. թէ յօրթ, մաքրինն է՛ն ա, որ մեր խեղճ գիղի ճամպէն չինի, ինչ որ ուզի, հասցրու, ինչ որ աղօթի, տօւր նրան, — աղօթեց, մաղթեց ծերունին:

— Ա՛կոր ջան, բա է՛ն հետի կնիկարմատն ո՛վ ա:

— Էդ էլ չհրցրինք. եա քիրը կլի, եա նշանածը:

— Է՛հ էդ հու ես էլ գիղամ, որ եա ալին կլի, եա թէ չէ՛ վալին. ասըմ եմ դրուտն ասես...

—Ապէր, դօրթ ա ասեցինք, ամա խելքս կտրըմ չի, որ դրանք ուխտուր լեն,—երկար լռելուց ու մտածելուց յետոյ՝ կասկածաւոր հայեացքով ասաց մի ուրիշը:

—Խի, Քիբի ամի, հաւատդ խի չի գալի:

—Մին նրա հըմար, որ ձմեռն ա, մընէլ՝ որ Գէւտիկի տղայ Վայիսը հետներն ա...

—Վալլահ, ասել Քիբի ամին, իմ հաւատն էլ չի գալիս, որ ուխտուր լեն, ով ա գիտըմ ինչ մարդիկ են:

—Մ'ուսի ապի, հերու ամառ որ յուսումական մարդիկ ին եկել վանքը քննինք անելու, միտդ ա:

—Միտս ա:

—Բա էլ ընչի էք մտքներդ դէս ու դէն մանաւորմ, էլի էնթաւուր կլեն էլի:

—Հա, էդ խելքից մօտիկ ա:

—Ադա, էն,—մատը կծելով բացականչեց մինը:

—Հարա:

—Ըն, էլ խօսալ միք, հէնց նա բոլի լիլ:

—Ա', ո՞րը, ո՞րը. Խեչոյ ապի:

—Խի, միտդ չի գալի:

—Չէ:

—Պահ, բու տունը չքանդւի, էդ ինչ քողա-միտն ես լիլ. բաս կերած հացդ էլ չի միտդ լիլ:

—Հա... էն, որ բոլբի դրազին գառը մօրթեց ու մեզ էլ զոհադ արաւ:

—Հարա, նա էլի, որ խոստացաւ, թէ վանքի փուլ եկածնին էլ եմ շինելու, ճամպէն էլ:

—Բաս Քիբի ամին զուր չի հաւատըմ, շինելու ա, հէնց էն վախտը չափ ու ձև արաւ նա:

—Լաւ, ձեր ասածն ըլի թող,—ասաց Քիբին և դարձեալ լռեց, որով կարծես ուզում էր ասել, թէ ինչ կամենում էք խօսացէք, ծածուկը յայտնուելու է վերջը:

—Ա', Ակոբ աղաբէր, հարուստ մարդ ա,—շտապով հարցրեց՝ «դռներին շամփուր լիզողի տղայ» կոչուած մի փորի դերի մարդ, որը ամեն մի այդպիսի դէպքից օգուտ էր քաղում—մօտենում, ծանօթանում էր եկողի հետ և ողորմութիւն խնդրում նրանից:

—Օ՛, շատ հարուստ ա, շատ, Զարխեչից չուել ըստեղ գուլին (չեմողանը) և խուրջինը բերելու հըմար ամեն մնիս հինգ մանէթ բախշեց ու խոստացաւ, որ հինգ-հինգ էլ ետ դառնալիս տայ:

—Թէգ դեն ետ դառնալ:

—Էզուց առաւօտ ծէգին հետ:

—Օհօ, վանքը շինեցին հա,—ծաղրեց Քիբի ամին:

—Ձեր ասածին կհաւատայի, թէ որ էն հարամձաղա Վայիսը հետները չլնէր,—կրկնեց նա:


—Է՛, հէ, լաւ մարդը Վայիսին ընկեր կդառնայ. ով գիտայ ինչ բանդիփուստ մարդ ա նա:

—Ապէր, քանց տհէ խիալով (ենթադրութեամբ) ամենմինդ մի բան էք ասըմ, եկէք մի-երկու մարդ զրկենք բրիցի կտրիցն անգամ դնեն, տեսնեն ինչ են խօսըմ:

— Լաւ, զրկենք, — միաձայն ասացին ամենքը և երկու մարդ ընտրեցին:

— Խեչո՛, Քիրի ապէր, աշխատեցէք ձեզ չտե-
նան, կարելի ա խէր մարդիկ են, ամօթ ա . . ., —
գնացողներին զգուշացրին, կամաց ձայն տալով ե-
տեններից:

Երկու փափախաւորներ ետինջիններում փաթա-
թուած, չորս կողմները պահելով, գնացին դէպի տէր
Մաղբոսի կտուրը:



Գ.

Բաւական ժամանակ էր անցել. ամպերն իրա-
րից արանք էին տուել և երկնակամարի վրայ տեղ
տեղ աստղեր էին նշմարում. քամին ու ձիւնը կտրը-
ուել էր արդէն և ծխանցքից այլևս վզգոց չէր լսում,
թէն տաքացած օձօրքից հալուածքը դեռ ծլծում
էր. հիւրերի առաջ մի կարտօֆիլի մօմ էր այրում,
խոկ պուճախի կողմը՝ սիւնի ճակատից կախած մի
նաւթի ճրագ: Ծուխն այնքան քաշուել էր, որ եր-
կու ճրագների լուսով պարզ երևում էր տէր-Մաղ-
բոսի ամբողջ հարստութիւնը:—

Տան պուճախներում անկանոն կերպով իրար
վրայ թափուած կահ-կարասիները հետեւեալներն էին.
կողքերը ճաքճքուած՝ կիր ու ձուով կոծկած և հաւի
կուտով լիքը մի կարաս, կարծես նոյի տապանի

ժամանակից մնացած մի զուծի, կողքը մէջն ընկած
անկլեկ՝ ժանգոտած պղինձ, բերանը կոտրտուած մի
փարչ (սափոր), կողքին անունկ մի կուլայ, լուացքի
ու խմորի մի տաշտ ու տաշտակ, մի-մի ուրագ, կա-
ցին, ցարհատ, բահաքէնջ և երկու թրիքը վրանե-
րը չորացած պռատ թի, որոնք աջ ու ձախ տան
պատերի ու կոնդերի արանքներն էին խրած: Իբրև
ուտելու պաշար ոտնծու ծալքի վրայ՝ պատին յե-
նած էր երկու ջուալ ալիւր՝ մինը ցորեն միւսը գա-
րի, որոնց խառնուրդից էր թխում հացը. բացի
տոպրակով սիւնից կախած մի քանի բուռը լըբուց,
մի փոքրիկ կճուճում էլ չորս կամ հինգ կից կաղին
էր երևում, որից փորները ցաւած ժամանակ թէյ
էին պատրաստում, կամ թէ չէ՝ մարգագլխի մի-մի
զոյգ հանում, մորմոտի մէջ եզիպտացօրնի պէս փըր-
թացնում ուտում էին: Տան սողխաղկիցը մտնողի աշ-
քովն էր ընկնում նաև մի քանի սօխի գլուխներ, որոնք
շարուած էին ուռհորմիների ափերին, և՛ վերջապէս
իբրև քոլի միրգ մի քանի կախան քոլատանձի չիր:
Վերջինս երկու օր պէտք է թրջէին, որ ուտուէր:

Աղբատ տէր-Մաղբոսն իբրև գիւղական քահա-
նայ զուրկ չէր ընտանի կենդանիներից, ունէր պոչի
արմատից կտրած և շինքի մագերը թափուած մի
քաւթառ շուն, որը թանթիկները դէպի օջաղը մեկ-
նած դունչն արանքներումն էր գրել և մարուղ տրած՝
ճպոռտ աչքերով նայում էր հիւրերի երեսին: Տիրու-
հի խանիկի առաջ պազած էր շինքը խանձուած մի
կատու, որն աչքերը խուփ էր արել և ականջները

Թլացրած բռնացնում էր շարունակ: Քահանայական տունը հարուստ էր միայն թեաւորներով. ունէին հինգ մարի, ութ արջաղաղ և տասներկու վառիկ. բայց զարմանալի բան. արջաղաղներից աւագը բոլորովին նման էր իւր տէր-Մաղքոսին՝ թէ մորուսով և թէ քերքեշակալած ականջներով ու սև գոյնով: Հայր Մաղքոսն առանձին հաւանոց չունէր, թեաւորների թաւը մի երկայն ձող էր պատի երկայնութեամբ դրած, ուր անդադար ճրլում ու աղբոսում էին նրանք: Սակայն, այդ բոլորից յետոյ, չմոռանալը յիշել, որ մի պառաւ, բայց շատ խոնարհ էշ էլ ունէին, մի մէջքը ետդիր ձի էլ, որոնք հարեանի գոմումն էին կապում գոմ չունենալու պատճառով: Թուածիցս աւելի ոչինչ չկար. այս էր տէր հօր հարըստութիւնը, որով նա համ պահպանում էր իւր ընտանիքը, համէլ բաւականութիւն տալիս վանքի ուխտաւորներին:

Ասած է. «Աստուած տուածն օրհնի»: Հայր Մաղքոսն ու խանիկ տիրուհին դէս ու դէն ընկան, եղածից հիւրերի համար փոքր ինչ ընթրիք պատրաստեցին—նախ կաղնի պտղից մի-մի բաժակ թէյ դրին նրանց առաջ և ապա փայտի խոնչէն, որի մի ծայրին մի քանի գարախառն հաց էր դրած, մէջ տեղը երեք աման փթուկ և միքանի գլուխ էլ տալ տալ արած սոխ: Կերակրին նայողի սիրտը վեր էր բալի, այնպէս կեղտոտ էր. բայց ինչ անէին հիւրերը, ամօթխածութիւնը վրաներն ազդում էր...: Կաղնի սուրճն ինչպէս որ եղաւ, օրիորդը կոկորդին հուպ

տալով մի կերպ խմեց, իսկ տղանման փթուկից չնորհակալութեամբ հրաժարուեց: Վայիս-բէզը լափափալէ, իսկ աղա բարեկամը խոկալով և ծղծղալէ կերան, ճար չկար...

Հեռու, ծովափնեայ քաղաքից Գօշայ վանքն ուխտի պատրուակով եկած օրիորդ Աննայի փորացաւը հէնց քամիների դադարման հետ միասին կտրուել էր: Նրա մրտած փափուկ այտերը կըր դէմքի հետ միասին մոծրակալուող կրակի ջերմութիւնից ալ վարդի նման հուրհրատին էին տալիս, իսկ թուխ ու կամար յօնքերով զեղազծուած կայծալից աչքերի մէջ այլ ևս նայիլ չէր լինում, որովհետև ամեն մինը մի-մի խոշարակտոր փայլուն ակն էր դարձել, որոնց արտափայլութիւնից գուշակում էր, թէ որքան ուրախ է նա իւր նպատակին հասնելու համար:

—Գէհ, չնորհակալութիւն, տէր հայր, սուփրէն չէն արէք, Աստօծ ձեր օջաղը հաստատ պահի,—ընթրիքն աւարտելով, ասացին հիւրերը:

—Ներողութիւն արէք, աղա, խանըմ ջան, գեղի տունն ա, ձեզ ուրիշ պատիւ էր հարկաւոր...,—ամօթխածութիւնով ասաց տէր Մաղքոսը և խոնչէն խրտտելով տարաւ ծաւրի տակը դրեց, ուր արդէն արթնացած կատուն սկսեց ամանները մէկ-մէկ լպստել...

Խոնչէն վերցնելուց յետոյ՝ Աննան իւր պայուսակն առաջը քաշեց, բաց արաւ, միջից մի քանի զիզիպիզի ընծաներ հանեց և բաժանեց տիրուհուն, Մաղքոս հօրը և նրանց ոտաբորիկ, գլխաբաց զաւակներին: Բացի մրգեղէնից հիւրերը աղբատ ընտա-

նիրքի համար բերել էին նաև չիթ ու կտոր, հին, հազած շորեր, որոնցով ծածկուեց նրանց պորտաբաց մերկութիւնը:

Նորութեան կարօտ ընտանիքը կարծես երազի մէջ էր, չէր հաւատում, թէ իրականութիւն է. անակընկալ, ձրի և նոր հագուստի համար անսահման բերկրանքով, ժպիտը երեսներին իրանք իրենց վրայ շարունակ նայում ու պտռում, շուռումուռ էին տալիս դէս ու դէն:

— Նանի ջան, էս իմն ա՛:

— Հա, թե մատաղ, քունն ա, բա՛ս:

— Էս ո՞վ ա բիւել, — թոթովեցին երեսայրք:

— Ա՛յ, էս մօքիրն ա բերել, բալէք ջան, ձեռք պաշեցէք, — երեսանցը օրիորդին մօտեցնելով ասաց Նանիկը, իսկ Մաղքոս հայրն արդէն ուրախութիւնից կապուել, լռել էր: Մանուկները փսնջոտ գրնչով օրիորդի և ապա պարոնի ձեռք համբուրելուց յետոյ՝ սկսեցին խաղալ ընծաների հետ, իսկ հիւրերը, Վայիսը և Նանիկն ու տէրտէրն սկսեցին խօսել:

— Տէրտէր, — հաստ գլուխը տրմբացնելով սկսեց Վայիս-բէգը, — էլ խօսիլու ի՞նչ ունենք, ոնց խօսք տիր, նհէնց էլ պէտքա՛ անես:

Մաղքոսը կորացած, աչքերը գեանին ձգելով, շարունակեց լռել:

— Բ՛նչի՛ հա տաղ անըմ. փողի մասին քե ասեցի, որ՝ աղէն ու խանըմը ոնչիչ չեն խնայիլ. թէ ասիլու բան ունես, ասա, ուզի աղիցը...

— Ա՛ղէն սաղ լի, ի՞նչ ասեմ. ինչքան կտայ, վե-

կունեմ, — մատով օջաղի մոխիրը դէս ու դէն անելով ու մճրուելով ասաց հայր Մաղքոսը:

— Տէր հայր, քեզ միայն ջափահախդ չեմ տալու, որդիդ մեծանայ թէ չէ, իմ ծախսով քաղաք կտանեմ, ուսումի կտամ — մարդ կշինեմ...: Ընտանիքիդ էլ իմ պարտքը լինի, որ ամեն տարի միքանի ձեռք նոր-նոր հագուստներ դրկեմ. ինձ համար հարիր-երկու հարիր մանէթն երկու կապէկի տեղ ա անց կենըմ...:

— Սաղ լես, Ատոծ կեանք տայ, ես էլ բուլաւութիւնն ինձ վրայ չեմ թողալ, — ուրախ-ուրախ պատասխանեց Մաղքոս բաբան և երբ փողի խշխշոց իմացաւ, կոր գլուխը վեր քաշեց, նայեց և այնքան ապշեց, որ թունդու բերանի պէս կախ ընկած պրոօշից փսլինքն սկսեց ծորալ:

— Ա՛ռ, համեցէք, — հանելով դրամալից քիսան, միքանի կարմիր թղթադրամներ առաջարկեց կրեսոս փեսան: Մաղքոս բաբան առնելով այն, շուարած սկսեց պտռել, քրքրել. կարծես չէր հաւատում, թէ դրամ է ստացածը:

— Դէ՛հ, տէրտէր, տիրացուիդ կանչի, պսակը թող վախտին անենք, աղէն ու խանըմը ճամպորդ են, մըքիչ զինջանան, որ ըռաւօտը ճամպայ ընկնեն...: Դէ՛հ, աղայ, խանըմ, դուք էլ շորներդ կեցէք. տէրտրակինը ձեզ քէօմակ կանի, — ցօտին ամրացնելով շտապեցրեց Վայիսը:

— Հա, էս սհաթիս, Վայիս-բէգ ջան, սարք ու կարգ անեմ, — պատասխանեց Մաղքոս բաբան և

վերաբերելու պատճառով փեշերը քաշտալով դուրս գնաց։ Վայիսն ևս անմիջապէս նրան կրնկակից դուրս եկաւ և ետեից կամաց ձայն տուեց։

— Տէր-տէր, տէր-տէր, կաղնի բան եմ ասում։

— Ի՞նչ, Վայիս ջան։

— Տէր-տէր, հու տեհար ի՞նչքան փող տալ տուի։

— Լաւ բան արիր, հա, դորմի բըհօրը։

— Բա հըմի ի՞նչ ես ասում, — խորհրդաւոր հարց տուեց Վայիս-բէգը։

— Ընչի մասի։

— Բա իմ հիւնարը չէր, որ էղդադար փող տուեց. չէ որ մի բանով էլ դու բղի շահես ինձ։

— Սուս, սուս, Վայիս ջան, կարմիրներից մինը քունն ա, — ձեռը բերանին դնելով լռեցրեց Մաղքոս բաբան և շտապ-շապ քայլերով մի շաւղով շարունակեց հեռանալ տանից։

Տան խօսակցութեան ժամին ծխանիից մորթու գլխարկներով երկու գիւղացիներ զգուշութեամբ գլուխները դէպի ներս տանելով, ականջները ծխնակապ կրճին դնելով, ծկրակում, ետ էին քաշում, որ լսեն խօսակցութիւնները. նրանք կտրի ետևովը պտտուեցին և տէր հօր առաջը անակնկալ կերպով փակելով, հարցրին։

— Օխնեա տէր, էդ ի՞նչ զոնաղնի են, ուր են եկել։

— Մտած օխնի. ուխտոր են, եկել են վանքըմը պսակեն։

— Էս գշեր։

— Հա, էնա շորները կենրմ են, որ դուս գան, — ասաց նա, յառաջ գնաց, կրկին ետ դառաւ և վառած ածխակով ձեռն առնելով՝ աջ ու ձախ, ինչպէս ասում են, բուլի-բուլի անելով մտաւ Գօշայ վանքը, ածխակով փշեց ու վառեց ճրագը։

Գիշերը կէս էր արդէն. բացի մի քանի հետաքրքիր գիւղացիներից միւսները կարծես գերեզմանական հանգիստ էին մտել։ Բայց ծմակի ամպերը կրկին Գօշի երկինքն էին բարձրացել և նորից սկսել ձիւնի բարակ թերթիկ մաղել։ Բայց գիշերային խաղաղութիւնը խանգարուեց մի բողբոս — նախրապահ չնչն սկսեցին աղաղակել, ոռնալ, լանթ տալ դէպի ձորը և երբեմն այնպիսի աղիողորմ ձայնով, որ կարծես օձերը շանթելիս լինէին նրանց. ահա պատում էր մարդու, հէնց իմանում էիր, թէ այն մութ ձորերից վիշապներ կամ քաւթառուսիներ պիտի յարձակուեն վրադ, բայց ասած է. «սարն ահալի չէ նրան, ով ծնուել է սարի վրայ»։ այդ ոռնոցներն ամենևին բանի տեղ չէին դնում գօշեցիները. մի շուտ անգամ չհանեցին նրանք, միայն Մննայի սիրտըն էր, որ փորումը ձիւնուր էր դարձել . . . Սար ու ձոր արձագանքներով դղրդում էր, իսկ վանքը ոչ թէ դղրդում, այլ գնգղընգում էր հիմքից ի վեր. այնպէս որ կարծում էիր, թէ այն ահագին տաճարը ամբողջովին պղնձից է շինած և հազարաւոր մուրճեր խփում, զարկում են անդադար։ Այդ ժամին տէր-Մաղքոսն ուրուականի պէս պրպտում էր սեղանի առաջ և հոգեկան անհանգիստ դրութեամբ

երբեմն դուրս ու ներս անում. «Հը. վայ թէ էն անիծածը կնկանս աչքը պահի ու փողս գողանայ,— չնչում էր նա:

Վանքին կից գաւթի գեղակերտ սեղանի վրայ դրուած նաւթի ճրագը անխնայ կերպով սևացնում, մրոտում էր Գօշի նրբաշուրթն կամարակապ առաստաղը, որի վրայ անձրևի կաթիլքներից գոյացած զանազան ճաքեր ու նկարներ էին նշմարւում, իսկ մայր տաճարի սեղանի վրայ վառւում էին հիւրերի բերած մաքուր մոմերը: Ճրագների ու մոմերի շողքը տաճարի նեղլիկ պատուհաններից ու գմբէթի խալտուած քարերի արանքից դուրս էին թռել ընկել հանդէպի բլրակի ճակատին և վանքի թէ գուրսը թէ ներսը Յիսուսի սգի գիշերուայ պէս խորհրդաւոր դարձրել: Սրբազան և խորհրդաւոր ազգեցութիւնը զգացող սրտի վրայ սառուսուււ էր ձգում: Կամայ, ակամայ հայի միտքն էր գալիս վանքի, ազգի անցեալը, ներկան և օրհասական ասպագան... բայց գիշերուայ լուսիւնը կաշկանդում էր ամեն միտք և բան, և՛ հառաչանքի միայն առիթ տալիս:

Հանդիսատես եկած գիւղացիք իրենց ցնցոտիների, քեչաների մեջ փաթաթուած տաճարն էին մտել արդէն և սովորական անզգայ համբոյրը տալով պատերի մէջ քանդակուած խաչերին, իրար մօտ հաւաքուած ոչխարների պէս անկիւնում կուշ էին եկել և արօժտատելով փսփսում էին, երբ Տէր-Մայրքոսը կրկին ներս մտաւ գաւթից:

Նրանք հարցրին.

—Ատէր, բա էս խի եղացան:

—Չորերնին կենրմ են, հրէս կզան,—ասաց, մոմերն ուղղեց ու նորից դուրս գնաց:

Գիւղացիք շարունակեցին փսփսալ...

—Ա, Մխիթար, տեսար ըրիցին ինչքան փող տուին, պահ, պահ, պահ. հարստացաւ...

—Էնքանը պսակադրամ էր:

—Բա ինչ...

—Վայ եհաղու լի նա, փող խու չէր, խաչամ էր, խաչամ...

—Քաղքցի էն է, մեզ պէս արտերնին հու կարկուտը տանրմ չի...

Այդ փսփոսոցին դուրս գնացած անհամբեր Քրիստի ամին կրկին ներս մտաւ և իւր միամիտ համագիւղացիների երեսին նայելով, գլուխը պտտեց:

—Գլուխդ ընչի՞ ժած տուիր, ասէր,—հարցրին նրանք:

—Է...

—Ա՛ հայ, ինչ կայ, մեզ էլ ասա, էլի:

—Միւրուքը, միւրուքը:

—Ո՛ւմ, ո՛ւմ:

—Տէրտէրի, տէրտէրի,—զառն հայեացքով այդ անորոշ բառերն երբ արտասանեց Քրիստի, լսուեց չէմքից:

—Սո՛ւս, սո՛ւս, գալիս են...

Գաղտնագողի փսփոսոցները հանգան:

Տէր-Մաղքոսը տղլափ հողաթափները սալերին կրփցնելով շտապեց դէպի բեմը, ափերը փթռնալով:

Թուր եղած մաշտոցը վերցրեց և դէս ու դէն թեր-
թելով, սխեց անհասկանալի բռնացնել այն հրա-
շակերտ տաճարում, ուր անցեալի ազգաշէն հոգևոր
ուխտի, միաբանութեան ներշնչուած քաղցր մեղե-
գիներն ու «Խորհուրդ խորին» անհաս կերպով ժա-
մաւոր հային հոգւով երկինք էին վերացնում, իսկ
այժմ աւերակի տգէտ հովուի բռնուցով այն ու հա-
ռաշանքի բովում անմխիթար այրում, խորովում...

Մաղբոս հօր ետևից խաս հանդերձները խշա-
ցրնելով ներս մտան պսակւողները և տաճարի մէջ-
տեղը՝ վէղարաւոր վեհ գմբեթի տակ կանգնեցին
ծաղկած ծառի պէս:

Բօրոթի պէս բռնացնողը դեռ թերթում, քրը-
րում էր առանց այն էլ քրքրուած ծիսարանը. կէս
ժամից յետոյ հազիւ գտաւ կարդալուն, բայց վաճ
նրա կարդալուն—ինչ որ չէր տպագրուած, այն էր
խնթխնթացնում:

—Դէհ, կունդ կնդի դրէք,—ասաց նա:

Փեսան ու հարսնացուն գլուխներն իրար մօ-
տեցրին, իսկ Վայիսը կարմիր ու կոպալ քիթը ցը-
ցած խաչը բռնեց գլխներին:

—Ձոր Աստօծ զուկեց, մարդ մի մեկնեցէ»,
պսակ, պսակ, արջի գմակ, գլխներիդ կոտրեմ, հա-
ւան էք,—կէսը սխալ, մաշտոցից, կէսն էլ գիւղական
ասացուածից ասելով, Մաղբոսն էլ բանը չերկարա-
ցրեց. «Ով երանելի... ով Թէոդոս մեծ թաղաւորն»
էլ երգեց ու ետ ծալուած շրթունքը լպստելով դրա-
նով աւարտած համարեց պսակի սուրբ խորհուրդը:

—Աստօծ շնհաւոր անի, մի բարձի ծիրացնի,
խանըմ, աղա. Աստօծ ջիբներիդ էլ բարաբեթ տալ
համեշա...—քահանայի այս շնորհաւորանքին հետե-
ւեցին գիւղացիներն եւ, սակայն Քիթի ամինի շնոր-
հաւորանքը տկամայ էր, նա անդադար, ինչպէս ա-
սում են, բեխի տակ ժպտում էր:

—Ըհը՛, այ, կտենար, որ սա արդար պտակ չի,—
ասում էր Քիթին:

Նորապսակները Վայիսի և տիրուհու ծառայու-
թեամբ դարձան խուղը, գիւղացիները ցրուեցին,
ճրագն ու մոմերը տէր-Մաղբոսի ետևից մարեցին,
որով վանքը կրկին խաւարով պատեց:

Դ.

Քեաթիւր տէր-Մաղբոսն իւր ունեցած թաղիք-
ները տակները ձգեց: Վայիսը մի, նորապսակները միւս
անկիւնում պառկեցին, իսկ ինքն իւր ընտանիքով
միասին մի արշին մորթի տակները ձգեցին, տիրու-
հու մթանէն և իւր հին վերարկուն էլ վրաները, ապա
ստուերի տակի ջրում ծուար արած ձկների պէս
իրար խծծուեցին, քնեցին հաւերի թառի կողմը: Գի-
շերը կիսից անց էր, գիւղում մարդու ձայն կամ
չփութուն չէր լսում, միայն շներն էին կէտտահաջ
տալիս. բայց մի ժամ անցած յանկարծ տէր-հօր եր-
կարապոչ արաղալներն անվերջ ծուղրուղուներով բան

ընկան. «ծուղըղըղը, կրկիկիկ, դուղըղըղը, դո՛ւ...» մինը կանչում էր, միւսը ձայն պահում, երրորդն սկսում, չորրորդը ծորկ տալիս. կարծես թէ նրանք էին բազուեցու հարսանիքի գունադհօշխները. ահագին դարմադալ էր ընկել տունը: Սյդ միջոցին ծուղըղուղուներին պակաս դարդարանք չտուեց Մաղբոս հօր սկ աւանակը իւր խառանչելով:

— Զան, ջան քուշի ջան, ջան...: Տիրուհի, էջը սոված ա հա, քրիկունը դարման չածեցիր ախո՛ւր, — վերարկուն ետ ձգելով երեսից, ասաց տէր հայրը և չորերն ուսերն առնելով՝ քթոցը չալակեց, գնաց դարման տծելու:

Զմեռուայ երկար գիշերը հազիւ թէ լուսացաւ, տեղահան եղան բոլոր գիւղացիք, մարդիկը թի ու քթոց առած գոմը մտան, կանայք կուժն առան ջուրը վազեցին: Տէր հօր հիւրերն էլ դարձնեցին, բայց անքուն մնալուց ու երեկոյեան ծխից աչքները ուռել, կարմրել էր: Նրանք կապել տուն իրենց իրերը, վարձած մարդիկն իսկոյն բեռնեցին ձիերին ու Գօշից կամաց-կամաց իջան Զարխաշի խճուղին. այնտեղ փոքր ինչ տաքացան, հանգստացան և առատ-առատ վարձատրելով թէ Վայիսին և թէ ծառայող մարդկանց ու կրկին սահնակ նստելով՝ էլ ետ չնայեցին, քչել տուն դէպի Բագու:

Օրը բաւական բարձրացած ժամանակ մի երկուսսարդ շտապ քայլերով եկաւ դիւղամէջ, ուր ձեռի ծրարները յանձնելով տիրացու Պետրոսին, խնդրեց, որ բանայ և կարդայ:

— Տիրացու ջան, — ասաց նա. — ա՛ռ մի կարդա, տենանք էս ի՛նչ թղթեր կն:

— Էս սրդիան գտար, — ձեռիցն առնելով հարցրեց տիրացուն:

— Զառխեշից գալիս ճամպին դտայ:

— Ը՛հ... էս էն գնացողներից ա վեր ընկել:

— Ո՛ր, է՛հ...

— Հա:

— Դէ կարդա, կարդա:

Տիրացուն հետաքրքրութեամբ բանալով ծալած թղթերը, սկսեց վրան լուռ նայիլ երկար ժամանակ և երբ աւարտեց, բացականչեց դարմացմամբ:

— Վա՛...:

— Ի՛նչ էր, տիրացու ջան, մատդ խի՞ կծեցիր, կարդա տենանք է՛:

— Թի՛ւ, նրանց հէրն անիծած. կարդալու բան ա, որ կարդամ:

— Գարդա, կարդա տենանք ի՛նչ բան ա...

Տիրացուն կարդաց հետևեալ նամակը.

«Մենծապատիւ եւ սիրելի Վայիս-բէգ, Հրօղբօրս մահից ետք ուզեցի ամուսնամ՝ նրա աղջիկ Աննի հետ, ասեցին չհաս ա, մտքըմս դրի, որ մեր տէրտէրի միջոցով քանը թագուն գլուխ քերեմ, չե, աւ. էրէցը վախեցաւ պատժից— ո՛չ յայտարարութիւն տուեց, ո՛չ պատկեց. մենծամարդիկ շատ մէջ գցեցի, փող շատ ուտացրի դէս ու դէն, ամա քանն աշկար էլաւ... Զաղբըմս ամեն քան իմացուեց. օրիորդը յուսահատում ա. իսկ ինձ

համար համարեա, թէ մահ ա, որ հրօղջօրս հարըստութիւնն ու ժառանգութիւնը ուրիշի ձեռն անցնի... Էս պատճառով յատուկ խնդրում եմ՝ քեզ, ինչ ուզըմ ես ինձանից հստացի, միան թէ՛ մի ետընկած, մի թագուն տնդ խելքից քարակ մի տէրտէր գտի, կաշառի, որ մեզ պսակի... Փողս չխնայես, շատ խոստացի պատրաստ եմ հարիւրներ տալ...

Մնամ նամակիդ անհամբեր սպասող՝
քո քարեկամ Բագրատ Միմոնեանց:

1892 թ. 15-ն դեկ.

Բագու:

Տիրացու Պետրոսն այս նամակից յետոյ էլ կարգաց պատասխանը:

«Մենծապայծառաճանճախայլ եւ
սիրելի Բագրատ Միրզիչ,

Աչքներդ լուս. ուզածներդ կատարեցի. Գօշի տէր-Մաղքոսը համաձայնեց պսակել ձեզ. նամակս հստանալուն պէս էլ չուշանար. ես Դիլիշանից ներքեւ, Ջառխէշի ստանցըմը, ես մի դուքանըմ կսպասեմ...

Մնամ սպասող՝ Վայիսդ Կէռտիկեանց:

— Վահ, վահ...

— Վահ, ա, էս ինչ լսեցինք:

— Վահ, հրօղթօր աղջկայ հետ...

— Հա, միկնուն ա, թէ իրան քօր հետ...

— Թիւ, թիւ...

— Թիւ, անիծուի հարամ մարդը, հարամ թնխումը, թիւ, թիւ...

— Ադա, ինձանից քեզ վասիաթ (աւանդ), հրմիկաց ետը նոր-նոր շորեր կեցած մրդկերանցն էլ ադա չասէք. թիւ, հարամձագա, հագել կապել, չարթի բունն էլ դախալի գլուխն էր կոխել, մենք էլ հէնց գիտացինք, թէ յօրթ որ աղայ մարդ ա, Ասծու երկիւղը սրտումն եկել ա ինքտ, դու մի ասիլ, թէ եկել ա վանքը մուստաուի ու գնայ, թիւ...

— Թիւն տէր-Մաղքոսին, թիւն. էհէ Քիքի ապէր, նրանք քաղքիցը չուել ստեղ էլ տէրտէր չբգտան, հա գէնա շաշի են մանեկել, ճակերնին գցեցին խաբեցին էլի:

— Ես իմ Աստօծը դրուստ ասեց, էդ միւրուքը քոս ընկածը տեղն ու տեղը ջլիս շաշուփէնջ ա, խելքի պակասութենիցը ոչ օրէնքի զօրութիւնն ա հրականըմ, ոչ էլ մեծաւորի իշխանութիւնը:

— Որ հսկանայ, Գօշըմը չուել օրս հինգ վախցըրած՝ չհաս աղջիկ կպսակի:

— Թամամ թակիլու ա դա:

— Սղալ ես, թակիլուն, թքիլուն ու մրելուն դա չի:

— Բա ով ա, ես եմ պսակըմ:

— Նա ա, ով որ էտթափուր շաշերին էրէց ա օխնըմ շէքներիցս կապըմ, ով որ չհաս պսակողներին անպատիժ ա թողըմ...

— Էլ ովքեր են պսակել որ:

— Խի, տհէ չուշտ մտիցդ գցեցիր. հէրումէկէլ

տարին չէր, որ Քրիշնի էրէցներէց մինը խշաղ-
պէր դառաւ միւսն էլ աքուլեցի կուղիկ Փանեանցին
իր սնամօր հետ սլսակէց: Եւ զմտնով ապր—

յէ մը—**Եղոյ:** Երեւոյ զմտն: Կոմ—Կոմ ցում բարկի

—Կոյ: —**Եղոյն էն ա,** որ անպատիժ թողեցին: Եւ ապա

բոլոր ի—**Ընչի:** Եւստի զի միւսը փախար ի մտնով փի

—Կի—**Նրա հրմար,** խեղճ Ակոբ ջան, որ անտէր

էլած կաշառքը մուծը տեղը լիս ա տալի:

... Եւ ինչ որ փառաւորն զգտաւ ա ինչ

—ա փոքի ինչ մտնով միտնով—Կի—Կի—

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

զի ինչ նաեւ հաշի իրաւարմ մտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

Հ Ո Վ Ի Ի Զ Ա Տ Ն Ի Ս Է Ր Ը.

Թուր զ թուանք առած հաւիցն են ընկել:

Աշքներն արնակալած ուզում են սպանել...

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

Ա.

Բուլխանայ սարի կորագագալժ մի թամբիկ

բլրակի պուշ, ծաղկալից հովի վերջում թաղիքնե-

րով ուժածկուած հայկական վրաններ էին երևում

հեռուից: Վրանների հանգէպ կանաչագարդ սարի

լանջի վրայ փռուած ու փռտալէ արածում էր Ու-

հանանց Չափինի հօտը: Ներքե, ախուրների նման

պսպլուն լճակներով ու առուակներով կարկաշող

խոր ձորակի ափերին էլ վիտում էին նրա չալտիկ և

մլաւիկ ուլիկներն ու գառնուկները: Եւ ինչպէս

գարս Բլխարկի մի կողմն այրուած գառնարած Սա-

քուն հովուական թանրագլուխ գաւազանը կողբին

վեր էր գցել և ծունկը ցից, մէջքի վրայ ընկած

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

—Կի: Կիտայ ինչ քան ինչ: Կիտայ զմտնով Կիտ

միտնովն ինչ մտնով միտնովն ապա ինչ մտնով

քաղցր ու ոլորուն եղանակով փշում, ածում էր իւր շուին: Գայլ Սաքոն դեռ երկու թէ երեք եղանակ էր վերջացրել, երբ բլրակի գլխից գառնամայր ոչխարները դիմաց դուրս եկան և նկատելով գառներին՝ կլաւցին ու նրանց էլ կլաւացրին: Սաքոն չվու (սրնգի) ձայնը յանկարծ կտրեց և տեղից այնպէս արագ վեր թռաւ, դէպի գառները վազեց, որ կարծես թէ իսկի խոտի վերայ չէր պառկել և ես երազումն էի տեսնում նրան այնպէս: Բայց նա, երբ գառները ետ տուեց, հետաքրքրութեամբ սկսեց նայել դէպի արածող հօտը: Իմ հետաքրքրութիւնն էլ շարժուեց: Ես էլ նայեցի Սաքոյի պլշած աչքերի կողմը և աշխատեցի աչքերս շուտ-շուտ մանածել լանջում, որ վրանեմ Սաքոյի աչքի յենման հետաքրքրող կէտը: Նպատակիս հասայ՝ շուտ գտայ այն տեղը, ուր ոտի ձայնը կտրած, շունչն իրան քաշած կախարդուել էր հովիւ Չատին: Նա արձանացած պլշել էր, նա իւր ճղրիկ ու մանրիկ աչիկները հեռում խմբուած վրաններից մէկի շէմքն էր ձգել, չէր ուզում հեռացրնել մի ակնթարթ անգամ: Թէ ինչ էր ներսից յուզուած, դրսից կախարդուած Չատինի մտքինը, թէ ինչն էր նա ուշագնաց էր եղել, այդ նրա չորնկեր, կամ ինչպէս ասում են, «հալալ աղտէր» գայլ Սաքոն սատանի նման գիտէր:

Չատինի ուշքը գրաւող, միտքը տանող վրանի շէմքից մի կարմրաշոր ու շարմաղ աղջիկ անդադար և արագ-արագ դուրս ու ներս էր անում: Կանաչ տերևներից գոմշի ձագերի համար պհրնների կա-

խաններ էր կապում և իրանով աւելի ևս գրաւում, կախարդում ու վառ կրակի պէս այրում խորովում Չատինին:

— Ա՛յ Չատ, էհէ Չատի՛: Ա, մանրմ չես, էհէյ...

Այդպէս կանչում ու թազուն ժպտում էր Սաքոն, բայց սիրտհար Չատինի ուշք ու միտքը՝ ինչպէս ասում են, կուլ էր գնացել: Նա ուշ սլծափուեց, նա ուշ խելքի եկաւ և շատ ուշ ընկերին դարձաւ: Չատին խնամքով շինած ցուպը խիստ ամուր յենել էր կրծքին և պինդ լռել: Երբեմն-երբեմն միայն նրա լուռ ու թխուած շրթունքներից դուրս էին թռչում հառաչանք, ախ ու վախ և շատ այսպիսի աղիկտուր խօսքեր:

— Ա՛խ, ես ձեր հէրն անըծեմ, ախ, որ դուք իմ սիրտը չէք մտնում, դուք, որ չէ էք ասում՝ չէք տալի, եանի ես առանց դրան կապրեմ...

Չատինի հոգեկան աշխարհը ամեն կողմից ալեկոծւում էր, փոթորիկները նրա սիրտն էին մտել և ուզում էին պլտուել կուրծքը, ուր կար աննման և և անհուն սէր, սոսկալի վրէժխնդրութիւն, այլեահ, երկիւղ՝ մի խօսքով կեանք և մահ: Նա անձայն վրէժխնդրութեամբ լի մրմնջում էր այսպէս. «ախ, ես ձեր հէրն անըծեմ, հլա տեսէք ձեզ ինչ եմ անիլու է»: Նա երկիւղով գլխին պտտելով ասում էր կրկին. «Օ՛հ, անաստուածներն ինձ ըրնի (արիւնի) մէջ են գցիլու»...

Չատին, վրանի նեղիկ շէմքին նայելով սիրով, բարկութեամբ կրկնում էր անդադար հետեւալ

խօսքերն իս. «ախ, ես քու ջանին մատաղ, ես քու սիրուն աչքունքիդ մատաղ, էդ սաղորիկ քոշաւոր, կարմիր գիւրբաւոր ռոտերդ խի՞ ես տափին դնում, խի՛ արի, արի սրտիս մանարի, սրտիս . . . Վիհ, հրէ, հրէ, կասես թէ կրմրըտնիկ կագաւ ըլի, կագաւ... ախ, ինչ անեմ—դու զառնամ կտցով վերցնեմ, թէ՛ հրեղէն դառնամ անխղճմտանք հօրդ տունը կրթակեմ . . .»:

Այդպէս ինքն իրեն, ինչպէս ասում են, «անջուր, անկրակ էլում էր» սարերի հարազատ որդի Չատին: Նա առաջին անգամը չէր, որ այդպէս էր նա համարեա միշտ կախարդւում էր: Սարերի որդին, ինչպէս երևում էր, սրտումը վաղուց էր, որ մի մեծ դարդ ունէր, բայց չէր իմանում ինչ հնարքով դարման անէր նրան: Նեղ դրութեան միջից դեռ դուրս գալու ելք չէր գտել: Միակ և վերջին հնարքն էր մնացել, որի մասին հէնց այն էր, որ պիտի խորհրդակցէր իւր հաւատարիմ ընկեր Սաքոյի հետ, որը սրինգը գօտին խրած ներքեում դեռ ժպիտը բերանին մեղմ ձայնով «Չատի, էհէ Չատի...» էր կանչում և անպերջ խնդում նրա վրայ:

Չատին Սաթենիկը դուրս ու ներս անելուց վերջապէս դադարեց: Գեղեցկուհին վրանը մտաւ և երկար ժամանակ այլևս դուրս չհեկաւ: Չատին իւր յառած աչքերը շուտ չհեռացրեց. ինչպէս ասում են, «ջուր կտրիլու չափ դեռ էլի շատ մտիկ տուեց վրանի շէմքին», ապա երբ յոյսը կտրեց նա, վերջապէս սթափուեց. թէև կարծես երազի մէջ լինէր:

Սաքոյի ձայնը երբ նրա ահանջին հասաւ յոյսը կտրած ժամանակ, նա կայծակի արագութեամբ իւր ծանրագլուխ ցուպը կրծքից դէնը չալրտեց և ընկերին դառնալով «ինչ ա, էհէյ», — պատասխանեց նա Սաքոյի խնդալից ձայնին:

— Ադա, ա մուհալ, ուշքդ էդ սրդի իր գցել, որ տասնորհաթ կանչում ի, կանչում, մանում չիր, — ասաց Սաքոն...

— Է՛, Սաքո ջան, դարդս որ զիգենաս, կասես թէ՛ «ադա, հէ լաւ տղայ ես, որ սաղ-սաղ մանես գալի րչխարհիս ըրիսին»... իմ տեղը որ բար ըլէր, չուել հըմի կհալուէր, ամա անիրեսը ես եմ, որ իրեսըս դէմ արած միթամ թէ ապրում եմ էլի, ախ... — գլխին պտտելով ասաց սիրով խոցուած Չատին:

— Հը՛ ինչ ա, սրտումդ ինչ դարդ ունես, որ դհէ աչքերդ լցրիր:

— Զատ մեծ դարդ, շատ... — բա որ էդդայիկ դարդ ունիր չուել հմի քու քոլընկերն եմ, խի՛ չիր ասում: Դէ ասա ասա: Ասա, որ տեսամ, — իրեն չի մանալու գնելով, ասաց Սաքոն:

— Է՛հ, Ըսծանից (Աստուծուց) թագուն չի քնտնից ինչ թըլցցնեմ, դու հալալ ընկեր, աղպէր տղայ ես:

— Դէ ասա, ասա:

— Ա՛ Սաք ջան, սրանից իրեք տարի աղաք Գիւլ-լականց չորանն ի (հովիւն էի): Ես ու նրանց Գալուստի մեծ աղջիկը իրար աջքունքի մտիկ տալով սէր արինք, էնպէս որ՝ մինըս մընիս հմար ջան ինք տալի: Եբոր ոչխարը կիթ ինք բերում, կիթ անե-

լիս նա կաթնի պղինձը ձեռին զընդհնագալա որ գա-
լիս գնում էր, գազէն էր մտնում դուս գալի՝ ձեռնու-
ոտս լըլըլըմ էր ու խելքս գլխիցս ուղղմ էր թէ
դուս թուշի, հէնց սիրում ի նրան: Սմբո ջան, հէնց
էն օրից մտըրմս դրի, որ առնեմ նրան, ամա համ
վախում ի, համ էլ հրմանչըմ, որ բէյդափիլ (յանկարծ)
հօրն ու մօրը բան ասեմ: Է՛հ, ասած ա, թէ «սէրը
քաղցր կլի», կըրացի ոչ դըմանամ:—Մի օր մեր
հրեանի հարսին զրկեցի նրանց կուշտը, որ սրտինս
մօրը այդնի (յայտնի): Հարսը գնաց, սրտիս հմար
սև խաբար ետ բերեց: Մէրն ասել էր թէ՝ «ես կը
տամ, թէ որ հէրն էլ հմաձայնի: Հարսին ասեցի,
որ էդ բանը փուշ փշացած հօր ախանջն էլ գցի:
Հարսն ախանջը գցեց: Հէրն էլ ասել էր թէ՝ «էս
ա էս մհետը սիրտ արիւր էդ թաւուր բան ասեցիր,
թէ որ ուրիշ անգամ էլ լիզուդ պոնգուդ ես տուել,
ըռխիցս պրծնիլ չես... գիժ ես, թէ ինչ. ես իմ
նէօքարին (ծառային) ըսկի թոք չեմ տալ, որ խեղ-
դուի, աղջիկ կտամ, որ գնա նրա բռնօթաքաշ հօրն
ձեռին ջուր ածի...»:

— Սմբո ջան, զօրթ ա, զըհէնց էր ասել, ամա
անգամ չարի. օր օրի վրայ սիրտս ձագի մեղրի պէս
աղջկանիցն էր կաշըմ: Է՛հ, ինչ անէի, բերի ծոցու-
մբս մի քար դրի, սիրտս պնդացրի՝ էլի մարդ զրկե-
ցի, էլ հօրն ու մօր անգամը քաշիլ տուի—ապսպրե-
ցի թէ՝ «եկէք դուք Աստուծոն մտիք արէք՝ փեշերնիդ
քարը վեր ածեցէք, եկէք չէ միք ասիլ, ես ծաղիկ,
դա ծաղիկ, թողէք որ միասին փնջուենք, սէրներս

բանդիլ միք, մեղք ենք...: Գիտենաք, որ սէր քան-
դողը ըշխարիս մէջ փայ չի ուտիլ... Գալուտ ապլին
(աղջկայ հայրը) էտ բանը լսելուց ետն էլ ինձ չպա-
հեց, չորանութենից դուս գցեց: Է՛հ, ճարս ինչ,
համբերեցի, ամա վայ էն համբերիլուն...: Աշուներն
որ եկաւ, անիրաւնին խօսքները մին արին ու սըր-
տիս կրակին եղ ածեցին, աւելի վառեցին, ճնճա-
ցըրին. էրուեցի, խրովուեցի, օթօթ-փօթօթն եկայ,
քամուն տալու քիւ դառայ, ամա ինչ անէի. աղջիկը
դուշի պէս ձեռիցս թռաւ գնաց—աչքս ջրկալած
ետեկցը մնաց ծլաւին տալիս: Սմբո ջան, հէնց
գիտաս թէ ինձանում հալ մնաց. կեանքս օր օրի
վրայ սկսեց խաւարիլ: Էն օրից չուել մի տարին ես
չաղուածի պէս ի մանգալի. անջուր ծաղիկի պէս ցա-
մաքեցի՝ գլուխս կախ ընկաւ, էլ ոչ ռանգս բաց ըլաւ,
ոչ էլ իշտահս: Մի օր ոչխարս (հօտս), մի տարուց
ետոյ, Չալաբի ուրթի ջրերովն անց ի կացնըմ, գը-
լուխս վե քաշեցի տեհայ որ զանքաշացուս՝ Գալուս-
տի կնիկ Սօփին մի թաբուն (մի խումբ) կընանոնց
հետ կժերն ուսներին աղբիւրն են գալի, որ ջուր
լցնեն. Սօփինին որ տեհայ, սիրտս կոտրած, սկզբմ չի
ըրիսին մտիկ տամ. իրեսս թեքեցի՝ հլէ կնանոնց
կշտովը՝ ձորի էն զոն ի անց կենըմ, Սանամանց
հարսը ետեկցս ձէն տըւեց:

—Մ' սղայ, Չատի, դուզէդ (դունչդ) խի ես
գէնը ծռըմ, խու մեզանից էլ չես խռով:

—Աղճի, մեզանից չի խռովել, մեզանից:

—Բա ումնից,—հըրցրին էն մեկելոնքը:

— Գիւլլականց հարսիցն ա խռովել:

— Խի՛, աղճի,— հարցրեց աղաքինը:

— Նրա հրմար, որ սրա աղջկանը Չատին սիրեց, սա էլ մարդի խելքին ընկաւ՝ աղջկանը վեկալան ա-սեղ մաշկող, քիսա լստող քրվրսրեցու տուին:

— Հա՛մ, բա էլ խի՛ ա խռովում, մինը ուրշին տուի, էս մինն էլ կմեծացնեմ դրան կտամ,— ծի-ծաղելով ասաց կուզիկ Սօփին:

Սաքո ջան, դրանով նա էրուած սրտիս ու ցա-մարած թոքիս սառը-սառը ջուր մաղեց: Յոյսս ու հաւատս կորած տեղից ետ եկաւ, շատ ուրախացայ ու մտքմտ դրի, որ մեծանայ պուճուրին առնեմ: Դրանից ետն էլ սրտմտ նախանձ ու խռով չպըհե-ցի, էլի հետները դոստացայ, էլի առաջուայ պէս մեղր ու կարագ դառանք— ամեն օր հետներն ասում, խօսում ու ծիծաղում ի, ի՞նչ գիտէի թէ նրանք գըլ-խիս օյին են խաղալու, ախ, ես դրանց հէրն անըծեմ...

— Վա՛հ, բան կայ,— զարմացմամբ ընդհատեց սատանայ Սաքոն:

— Բա ի՛նչ, ա ես քե մատաղ,— լացակումաց, երեսը չըջելով շարունակեց Չատին,— Սաթինիկը մե-ծացել տասներհինգ տրեկան ա դառել, էլի Ասծու կրա-կէն են եկել դրանք, էլի ուզում են գլխիս կրակ թա-փեն՝ Սաթինիկին էլ ուրշի տան. ըսէլ ասեմ քե, Սա-քո ջան, որ էս աղջկանն առաջուայ աղջկանիցն աւելի եմ սիրում— թամամ գժուածի պէս եմ, էլ խելք չի մնացել գլխմբոս, մարդի հետ խօսալիս խօս-քերս տակ ու գլխի եմ տալի: Լսեցի՛ր, դարդերս

իրենց խառտ և զմայելի աշիկները: Ուսաւոր ձո-րակում առուակների կարկաշունն էր ձայն արձակում, վերին լանջերում հովիւների սրինգ ու պկուռի ներ-դաշնակող քաղցր հնչիւններն էին մարդու սիրտ երկրի չափ լայնացնում և երկնքի չափ բարձրացնում: Հօտն ու նախիրը, հորթ ու ձագերը դեռ սփռուած արածում էին դաշտերում ու բլրակների վրայ: Սա-կայն մութ խաւարը մօտենում էր սաւանելու ամեն բան:— Քիչ ժամանակից յետոյ ամենն իրար պիտի խառնուէին: Պառաւներն արդէն պղնձներն ու կով-կիթները լուանում, պատրաստում էին, որ կիթ ա-նեն, իսկ ջահէլ հարս ու աղջիկները, կանայք ու իրենց գառնուկ երեխայքը սափորները ուսներին վրաններից աղբիւրն եկող կէծաններով (շաւիղներով) թռչկան ուլերի պէս աղաքիտրուկի տալով, աղբրակն էին գնում, որ սառն ու յտակ ջուր լցնեն:

Ամենից առաջ կազաւում էր վարդից կարմիր, ծաղկից սիրուն կոկոն Սաթինիկը և նրա ետեից իւր ընկերուհիները՝ շարուած չուան կռունկների պէս: Բայց մի այլ տեսարան.— Սաթինիկ գեղեցիկու-հին աղբիւրն էր իջնում միամիտ, ինչպէս աղաւնի, մինչդեռ անտառի կողմը հսկայացած Չատին դարան էր մտել ինչպէս շար թշնամի: Եւ հազիւ թէ աղջիկն աղբրին էր հասել, Չատին, մի թուրք էլ քամակից, աչքը աղաւնուն ձգած, քարափի քամակով կամաց-կամաց աղբրի թուփն իջաւ և այնտեղից մի ակն-թարթի մէջ կայծական արագութեամբ նետուեց դէ-պի աղբիւրը, շար բազէի պէս յափշտակեց սիրուն

Սաթենկան, սուլած գայլի պէս շալակեց և թամբը վերգցած, մատակ ձիերի վրայ կատաղած նժոյգի պէս անտառի միջով շափ ընկաւ դէպի մօտիկ թուրքի օրէն:

Սաթենիկը սկզբում խիստ վախեցաւ, մի անմեղ ճիշ արձակեց, բայց երբ տեսաւ իւր 2ատին է շալակողը, տղուկի պէս մէջքիցը կպաւ: Սաթինիկի ջըր-ընկերուհիները այդ յանկարծակի փորձանքից լեղապատառ, ճշալով, կանացի ողբ ու աղաղակներով ետ փախան և երկիւղած հարայ տուին: Վրանաւորները չփոթութեան մէջ ընկան: Հովիւ, նախրչի, մեծ ու փոքր, բանները տեղն ու տեղը թողեցին և գլխագլոր դէպի փորձանքի տեղը վազ տուին:

—Հայ-հարայ, տարան, տարան, Սաթենիկին տարան հա... .

—Դո՛ր, դո՛ր տարան, հը՞, դո՛ր տարան:

—Հրէ, հրէ, հլա մատիս՝մօտիկ տուր, դէ՛նը, դէ՛նը...

—Տարան հա-ան, տարան, տարան...

—Ադա, դէսը տարան, ո՞վ տարաւ, ո՞վ...

Ուհանանց չորբան 2ատին ու մի թուրք, 2ատին ու մի թուրք..., —խառնուած աղաղաղակներով և մատնացոյց անելով ճանապարհը, գոռում էին հարայչիները:

Սաթենիկի ազգականները՝ Գիւլլականց երիտասարդներն ու տղամարդիկ, ինչպէս ասում են, մինը մի ձորից, մինը մի սարից, մի քարի տակից կապակոտոր եղած, թուր ու թուանք առան և գայլի պէս փախած 2ատինի քամակից ընկան, որ իրենց աղջիկը ետ խլեն. բայց, 2ատին օրէն անցկացաւ և

այնուհետև Սաթենիկին չատ հեռու տարաւ. . .

Ձինուած Գիւլլականք երբ ուզեցին թուրք եայլի սահմանն անցնել և արագալիզ ձիերով 2ատինին հասնել, այնտեղ թուրք ծանօթ երիտասարդներն իրենց հայ հարեան հովուին օգնութեան դուրս եկան և հալածիչների առաջը թուր ու թուանքով պինդ փակեցին, այնպէս որ՝ ոտն ոտի առաջ դնել չթողացին:

Թուրքերից մինը սպառնալի յարձակողական դիրքով առաջ կանգնած՝ խիստ հայհոյում և նախատում էր հալածիչներին:

—Ամօթ չի՞ ձեզ, որ սուր ու թուր առած ընկել էք ջահիլների ետևից. ի՞նչ ա արել ձեզ, գողացել խու չի. սիրել ու փախցրել ա... դէհ, ալլահը վկայ լինի, առաջ միք գալ, թէ չէ ջիգեարներդ գիւլլասորով կանեմ..., ձիաներիցդ ծառի ծէրից վերընկող տանձի պէս կկաթացնեմ... ետ, ետ...

—Հը՛, առաջ միք գալ, թէ չէ արիւններդ կը քամենք, միսներդ դուրդուղուշի փայ կշինենք,—առաջինի ետևից սպառնում էին միւսներն ևս:

Այնտեղ Գիւլլականց ուժը չպատեց. մութն էր. թողեցին ետ գառան. յետոյ սարերի ետևներով շատ պտոյտներ արին, ամբողջ օր ու գիշերներով սար ու ձոր ընկան, բայց ո՛չ 2ատինին գտան և ո՛չ Սաթենիկին:

Նրանք բարկացած, փրփրած, ատամները կրճրտացնելով՝ մորթել և պատառ-պատառ անել էին կամենում 2ատինին, բայց հնար չկար սահմանն անցնել:

2ատին գիշերը այրի մեջ ինքն իրեն այսպէս

մտածեց. «Սաթենիկիս մի օր ու գիշեր մօտս պահելուց եղբ, որ ետ, տուն տանեմ (որ վերադարձնեմ) էլ խու ուրչի չեն տալ, չէ՞ որ որսկանի պէս ետրալու եմ արել: 2է, չեն տալ, որ տան էլ՝ ոչով չի տանիլ. իմն ա այսուհետով...: Դէհ, Սաթենիկ ջան, վեկաց. ես քե կտանեմ դագենու (վրանների) կշտին աղունակի պէս բաց կթողամ ու էլի քօլը կմտնեմ. ազգականներդ կտաղած են վրէս. քօլըժակերըմն էնքան կմնամ, որ նրանց կատաղութիւնը վեր նըստի...,—ասաց 2ատին ու իւր այդ սխալի վրայ չմտածելով, առաւօտը լուսածէզին Սաթենիկին տեղ-տեղ շալակելով, տեղ-տեղ էլ թևից բռնած՝ գողի քայլերով կամաց-կամաց տարաւ Բուզխանի վրանների մօտ բաց թողեց ու ինքը յետեւ պահելով փախաւ, քօլը մտաւ: Սաթենիկը մի քանի քայլ արաւ դէպի վրանները և մի քար երեսն առնելով արձանացաւ: Օրաւորներից շատերը նկատել էին նրան և արդէն խօսք ու բամբասանքը խառնել էին իրար: —Ի՛նչ... սիրտդ սև անեմ, էնա հետը փախար, էլ ո՞ր ըրիսովն ես գալի,—ասում էին նրանք:

Գիւլլականը վիրաւորած աղջկանն ընդունեցին, բայց աւելի վիրաւորուած կրկին սուր ու թուր առան, շաբաթներով սար ու քօլ ընկնելով, ամեն ծակուծուկ մտան, զուրս եկան, որ 2ատինն բռնեն պատու-պատառ անեն, սակայն 2ատին չկար. նա չէր գտնուում, կարծես չբացել էր հանդերից:

Գ.

Գիրակի առաւօտ էր, ուստի խաչթառակցի մի կալ ժողովուած խօսում էին դէսից-դէնից: Բայց նրանց մէջ Գիւլլականց տանից ոչ ոք չկար: 2նայելով ըստ սովորութեան ուրիշ անգամ գիւղամիջում կամ ժողովատեղիներում ամենից առաջ նրանք էին երևում, դիմաց տեղերում նրանք էին կանգնում ու սրան-նրան ծաղր ու ծանակի առարկայ չինում. բայց այս անգամ չըուել էին այն տեղերից. նրանցից մի քանիսը կրկին հրացաններն առել անտառներն էին ընկել աննպատակ, միւսները թակուած մեղունների պէս բներն էին քաշուել ու սգուրի պէս բռնացնում էին, իսկ 2ատին երկնքից կաթած քարի պէս տուել մէջքները կոտրել էր ու կորել, անյայտացել...

Գիւլլականց բացակայութիւնն ու 2ատինի կորչելը զրոյցի նիւթ էր դարձել:

— Տղէք, 2ատին անտակ ծովն ընկած քարի պէս կորաւ հա:

— Հա, կորաւ:

— Հը՛մ,—քմքած իծաղ տուեց մէկը:

— Հըմը ո՞րն ա, ընչի՞ ես հը՛մ անըմ. բա չկորա՞ւ:

— Ա՛, բա ի՞նչ անեմ, որ հը՛մ չանեմ. 2ատին դո՞րը կորաւ, որ հի՛տ ամեն օր էդ էք խօսըմ, թէ կորաւ հա կորաւ:

— Բա ո՞ւր ա, որ չկորաւ:

— Սարերը մը, քուերը մ' կլի, ուր ա, գիւանը խու չկերան:

— Վալլահ, Ա'կոք, Գիւլլականը Էնքան ճլի հա ճլի արին նրան, որ հլէ ես էլ եմ հըւատըմ, թէ եա մի բացըրը քերծից (ժայռից) դվէր գցեցին, եա թէ չէ՝ թըւանքով-դատով մի տեղ սպանեցին, — կասկածանքով նկատեց մի ուրիշը:

— Ա'դա, սուս էլա կացէք, սուս. ամօթ ա, որ դուք էն իգիթին չէք ճնանչըմ ու սարսաղ-սարսաղ խօսըմ էք:

— Խի՛, խի՛ եներ սարսաղ. խելքդ կտրըմ չի մեր ասածը՝:

— Բա սարսաղ չէք, մզեար 2ատին կոնդ ա՝ — ոտն ու ձեռը կապած ա՛, հաւի ճուտ ա՛, որ սպանեն. էն խու որ ձեռը թըւանք առնի՝ Գիւլլականց տունն ու տեղը մոխիր կշինի, քամուն կտայ...

— Բա որ դհէ դոչալ ա, խի չի անըմ, ուր ա, տափը ճղուեց մէջը մտաւ, դէնա ասա թըւանքակալած ետեիցն ընկան մի տեղ շնթռացրին էլի:

— Հա, լաւ. ասենք թէ քու ասածն ա, բա սպանել են ու դատաստանին էլ գանդատ տուել, — մէջ ընկաւ մի ուրիշը:

— Է՛հ, էդ ոնչիչ, մթամ դու էլ բան ասեցիր. գանգատովը նրանք սատանի պէս խաբան են տալի, որ ետոյ լախտի (խարաղանի) տուտն իրանց տողին էլ չդիպչի...

— Հա, դօրթ, անպատճառ տհենց կլի. էդ անշաղ խելքս կտրըմ ա:

— Ա՛յ քե բեխայ մարդ:

— Խի՛, ա. խի՛ եմ բեխայ:

— Հլէ նհէ, որ հըւատըմ ես, թէ նրանք մարդ կսպանեն. մարդ սպանողը Գիւլլականց պէս կլի՝ մարդ սպանողն օրը ցերեկով կգոռայ, որցակի պէս ծուղորուղու կկանչի, թէ տհէք, տհէք, ես հաւին թիթրիկ եմ անըմ. բա դու մեր պապերի ասածն իմացել չես, որ ասել են թէ՝ «վախիր էն ջրից, որ ո՛չ վշըմ ա, ո՛չ թշըմ»:

— Է՛... դէնա պարզ ասա, թէ ես 2ատինի տեղը սեռ եմ, էլ ի՛նչ ես պապերի հագուիցը կախ ընկնըմ, — կեղծ և բարձր ձայնով ասաց վիճողներից մէկը և նայեց դէպի Գիւլլականց սրահը, ուր մէկը ականջը կալի կողմը դարձրած լսում էր բոլոր վիրաւորական խօսքերը:

— Ա՛, ձէնդ, իշի քուռակ. էլ ի՛նչ ես խոնչըմ ու դէնը մտիկ անըմ, խալաթ են տալու քե՛:

Այդպէս խօսում էին կալի մի կողմում, իսկ միւս կողմից լսում էին:

— Պահ պահ պահ. տղէք, տհէք ի՛նչ արաւ 2ատին. թամամ քօսու (ծաղրածուի) օյին խաղաց գլխներին:

— Հահ, հահ, հահ. օյին:

— Օյին ասես ու թողա՛ս:

— Հա, ջլիս խայտառակեց, էլ պակաս տեղ չը թողեց:

— Գրանց հախն ա, դրանք ուրիշների վրայ շատ են ծրծաղել:

—Է՛, իրանց որ հրցնես, ասըմ են 2ատին վախեցնող Սաթիկին սալամաթ ա բաց թողել:

—Ասըմ են մթամ ումնից ա վախեցել:

—Մթամ թէ իրանցից:

—Հահ, հահ, հահ. ա, մի ծրծաղեցէք է՛:

—Տհենց կասեն, բալամ, էդ հմբարտ (հպարտ) մարդկերանց փեշակն ա, բա որ աղջիկը սալամաթ ա, խի՞ չեն գեղամէջ դուս գալի:

—Տօ ի՛նչ ես ասըմ, նրանք էս սհաթիս խու կենդանի չեն. կենդանի տեղները՝ տանով, տեղով մեծ ու պուճուրով մեռած են: Ղօթ ա, լիդուերնի տակը ոսկուր չկայ որ ծակի, խօսըմ են, մէջքները տափ չեն տալի, ասըմ են, «մենք մեր ասածն անիլ գենը—մարդ ենք սպանիլու...» ամա զիտենաք, որ ըդոնք չիմ դարդակ խօսքեր են:

—Հա շատ ին պրկըպզուկ ածըմ, թէ՛ սհենց գենք անիլ, նըհենց գենք անիլ՝ սիբիբ գենք զրկիլ տալ. ամա տեհա՞ք իսկի բան չարին:

—Ի՛... տօ տնաչէն, բա դու մացել չես, որ ասել են թէ՛ «չատ գոռոզ ու տրաքտրաքոյ ամպիցըն անձրն չի կաթիլ». շատ խօսող մարդը բան չի չինիլ:

—Հա, ես իմ Աստօժը. դու չափած, ձեած խօսեցիր, դրանց լիզուն որ չի, ագուանին կտցով աչքները դուս կտան, կհանեն:

2ատինի հասցրած վիրաւորանքը հպարտ Գիւլ-լականք մարսել չէին կարողանում, իսկ գիւլականների վիրաւորական խօսակցութիւններն ու ծաղրն

—Ա՛, էդ մի ասիլ, էդ. ասա՛ բանը խու սեւետչի բերիլը չի. բանն էն ա, որ խօսքներդ աշմիշ անէք (անցկացնէք). ձեր աղջիկը 2ատին դռի խու չի տարել, ամեն բան աղջկայ կամբովն ա ըլել... ի՛նչ դէք անիլ. կհարցնի՞, նա էլ կասի թէ՛ ես իմ կամբով եմ գնացել...—պատասխանում էին 2ատինի սրտացաւ բարեկամները:

Գիւլականք թէպէտ և մի կողմից ուրախանում էին իրենց բողոքի համաձայն քննիչ նշանակուելու մասին, սակայն միւս կողմից էլ սաստիկ կասկածում, երկիւղ էին կրում, թէ մի գուցէ Սաթիկիկը եկող քննիչի հարցումփորձերին իրենց ցանկացածին հակառակ ուղիղ պատասխան տայ և գիւլի մէջ կըրկին խայտառակի, ուստի խեղճ աղջկանը տարան մի սենեակ ձգեցին և դազանակները ձեռներին բռնած՝ սկսեցին խիստ երկիւղ տալ:

—Աղճի, ա սեիրես, ա անգգամ, սեւետչին որ հարցնի թէ՛ «2ատին դռով փախցրեց քե՛, թէ քու կամբովը գնացիր», ի՛նչ կասես: Կասես դռով. հը՛: Խեղճ աղջիկը լռում էր:

—Աղճի, քե չենք ասը՛մ, խի՞ ես տաղ անըմ. կասես դռով փախցրեց, հը՛. ձէն հանի, ձէն հանի. ձէն չես հանը՛մ. հայ, հայ, հայ...,—փայտը գլխին իջեցնելով ստիպում էր անմիտ հայրը, իսկ հօրեղբայրները քաջալերում էին նրան և անզթաբար ասում.

—Ա՛ղա, իայիմ տու, իայիմ. տենըմ չես սուս ա կենը՛մ:

—Աղճի, դու մեր ասածը մանրմ չե՞ս. հը՞, հը՞. հայ, հայ, հրէդ հայ, հըմի կիմանան:

—Տօ դհենց չեն տալ, դհենց. հրէս սհէ կտան այ. «կասես զո՞ւմով, զո՞ւմով...»,—փայտը հօր ձեռից առնելով ու աւելի պինդ-պինդ զարկելով, ասում էր մի ուրիշ անգութը, իսկ աղջիկն ակամայից ստիպուած, խփած տեղերը քորելով, սրտաճմլիկ ձայնով աղաղակում էր:

—Վայ, վայ... վայ ապի ջան, ա՛մի ջան, թա-կիլ, սպանիլ մի՛ք, դհենց կասեմ, դհենց կասեմ...

—Հա, հըմի խրատուեցի՛ր, խելքի եկա՛ր, կասե՛ս . . .

—Հա, հա, կասեմ, վայ, վայ...,—վայում էր նա անօրէնի ճանկ ընկած ստրուկի պէս:

—Հը՛, ոնց որ սըվրըցնում ենք, թէ նհենց չես ասիլ, սելեստու գալ-գնալուց ետը՝ գիշերը քե տա-ւարի պէս կմորթենք ու միսդ շներին կտանք, որ լափեն . . .

—Ի՞նչ ես ասում. մենակ կմորթենք, մորթի-լուց առաջ շնքումը թոկ դրած կատուի պէս կթա-կենք՝ պար կածենք ու օճօրքիցը կախ կանենք, որ բալզի-բալզի անի . . .

—Դու որ կախ անես, ես էլ տակին կրակ եմ անիլու, որ խոզի պէս խանձուի...


Այնպիսի ծեծ ու մահ էին սպառնում խեղճ օրիորդին անողորմ ասիացիները, եթէ նա համարձակուէր իւր սիրելի չալտիկ-Չատինի օգտին մի խօսք անգամ ասել:

Սիրոյ գերի Սաթենիկի դուլթիւնը շատ դառն էր և սրտաճմլիկ: Նա երկու վարար ջրերի արանքում մնացած անմեղ եղջերուի նման տատանւում էր—չգիտէր որով անցնի, որ չխեղդուի: Երբ տգէտ ծնողներն ահ ու մահ տալուց յետոյ խոնաւ սենեակի դուռն երեսին փակում, դուրս էին գնում, նա վիզը ծռած սկսում էր հեկեկալ, ճմլուել և մի առ ժամանակ խելազարի նման ապշած պատերին նայելով պաղատել Աստուծուն:

—Ա՛խ, Աստօժ ջան, ի՞նչ անեմ. սուտ խօսեմ Չատինիս կորցնեն, թէ դօրթ, որ ինձ սպանեն նրա խաթեր: Ա՛խ, մի հնար, մի դուռը՛, մի ճամպայ. օհ, ետրաբ ո՞վ չհանց կտայ ի՞նձ...: Ա՛խ, օ՛խ, էս ինչ կրակ էր, որ մէջն ընկայ: Ո՛րտեղ ես Չատի, ինչի չես կշտիս դուս գալի, որ հետդ ընկնեմ՝ գէօ-րից փախած դուշի ճուտի պէս էլի փախչենք քօլե-րըն ընկնենք, աղատուենք էս անողորմների ձեռքից: Ա՛խ, դու խու ինձ լաւ իր ճանկել, էլ ո՛ւր իր բաց թողում, որ սհենց տեղս նեղացնում են... ա՛խ դու. դու սար ու քօլերն ես ընկել՝ սոված, ծարաւ, մեռ-մեռա՛կ... ես էլ էս բերդն եմ ընկել...: Ա՛խ, ետրաբ կենդանի եմ. թէ կենդանի ես, արի է, արի կտրի-ցըս թոկ կախի, դուռը կոտրի՝ եա տար, եա թէ չէ՝ հետս միասին մեռի, որ ես էլ մեռնեմ. բա չգի-տես, որ արին-արտասուներով սներն (սիւներն) ու պատերը թաց եմ արել... օհ, օհ, ի՞նչ անեմ Տէր, վերնէյին Աստօժ . . .

Փակուած սենեակում ընկերը կորցրած Սաթե-

նիկը ուղբում էր այդպէս աղիողորմ: Նա մի ձեռք ծոցին, միւսը մթնած ճակատին սեղմած, յոյսը կտրած որբի նման արտասուքի անթիւ կաթիլներ էր սահեցնում խնձորանման այտերի վրայով ու կուրծքը հեղեղում: Իրաւ, շունչ չէր, որ դուրս էր գալիս նրա քիթից ու բերանից, այլ անշէջ կրակի ծուխ ու բոց էր, որ վիժւում էր հրդեհուած սրտից: Բայց այդ դրութեան մէջ երկար մնաց նա:—Հակառակի պէս լուսինն էլ հէնց այդ ժամանակ խառնուեց և եղանակի այլալուծովն աւելի ևս սևացրեց Մաթենիկի ալեկոծուած սիրտը, որ պատռուելու չափ տրվում էր: Մանր անձրև էր տեղում. ճանապարհները խիստ ցեխ ու լոպոպ էր դարձել, քննիչն էլ արևի էր սպառնում, ուշացաւ:



Ե.

Գիւղացիք շարունակում էին խօսել, ծաղրել և խիստ վիրաւորել Գիւլլականց ինքնասիրութիւնը, ուստի նրանք այլ ևս տանել չկարողացան. մինչև արև անելը, մինչև քննիչի գալը միջանի գոհհակաւան անկարգութիւն արին օրը ցերեկով և հրապարակով, որպէս զի գիւղացիներն Ուհանանց խայտառակութեւն վրայ էլ խօսան:

Մաթենիկի հայր Գալուստը, որին գիւղացիք նրա մի ուրիշ անկարգութեան համար «աղտուկ կըտ-

րոյ Գալի» էին մականուանել, մի օր արծաթապատ դաշոյնը կապեց, այնալլի հրացանն առաւ ու գիւղամիջով, հաւաքուած գիւղացիների դիմացով, հպարտ քայլելով անցաւ, գնաց դէպի եայլաղի կողմը: Նրան նկատողները մի առժամանակ նրա գնացքին լուռ նայելուց յետոյ, միաբերան գուշակեցին, թէ՛ «անպատճառ մի նամարդ (դաւաճան) մարդ Չատինի տեղն իմաց ա տուել դրան. գնրմ ա, որ սպանի...»: Գալուստը գիւղից դուրս եկաւ, բարձրացաւ և անյայտացաւ անտառում:

Երեկոյեան արեգակի թռած ժամանակն էր. Բուզխանի կանաչ բլուրներից ընտանի կենդանիները բառանչելով ու տուխալով վրանների դուռն էին ժողովում և աջ ու ձախից նախընթացում ու հովիւները կանաչ տերեւն ու կրակափառը կռնատակներին և կամ չալակած, խաղ ու պարով, երգ ու սրնգով տուն էին դառնում...

Ճէնց այդ միջոցին էր, որ բոլոր վրանաւորների ու հովիւների ուշադրութիւնը դարձաւ դէպի ձորի կողմն, ուր մէկը հարաքեաթ արած գալիս էր դէպի Ուհանանց վրանը:

Եկողը Գալուստն էր. նա դեռ վրանից կէս վերստաչափ հեռու սկսեց հայհոյել և սպառնալ Ուհանանց Չատինի մօրը, երբ խեղճ կինը թեքը վերքաշած պատրաստում էր կովերը կլթելու:

— Էհէյ, ա ես քու դախբա (պօռնիկ) հէրդ, մէրդ... ես հրէս գալիս եմ, հրէս...—ասում էր գահանացած Գալին:

Չատինի խեղճ մօր թուրք երկիւղից ցամաքեց, երբ նկատեց զինուած բարբառոսին. նա հարայ կանչեց և լեղապատառ վրանն ընկաւ, իսկ Գալին վագեց զէպի վրանը և հրացանը մեկնելով գոռաց, — փախչէ՛ք սօ, որ կենտ-կենտ կտորիլու եմ:

— Այ տղէք, այ չորաննի, այ տըւարածնի, ան ձեզ մատաղ, հասէ՛ք, հասէ՛ք սպանեց, հասէ՛ք... — ընդհանուր հարան ընկաւ, ամեն կողմից անաբեկուած աղաղակեցին օրաւոր կանայք:

— Վայ, վայ, — լեղապատառ, աչքները չռած, զէրայից վախեցած հաւի ձագերի պէս վրանի չէմքում ծուար անելով, ճշում, աղաղակում էին հանէսի մանր երեխաները:

— Սակայն, մինչև օգնութեան հասնելը Գալին Ուհանանց վրանի վրայ յարձակուելով՝ ներս ընկաւ և այնտեղից, անօրինաբար ծեծելով, դուրս քաշեց Չատինի մօրը և նրա երկայն մազերը կռններովը տուած մի առ ժամանակ սկսեց ցելի մէջ քաշքշել և ապա ոտների տակ տրորելուց յետոյ՝ ուզեց հրապարակաւ առակել նրան: Նա իւր այդ խայտառակ սխրագործութիւնն արտասանում էր այնպիսի լիրբ խօսքերով, որ գրչի առնել չի կարելի, միայն այսքանն ասեմք, նա անամօթաբար գոռում էր...

— Քու տղէն ա իմ աղջկանը խայտառակե՛լ, ես էլ քեզ եմ խայտառակըմ...

— Այդ վայրենական տեսարանին օրաւորը հանգիստտես էր, ոչ ոք մօտենալ չէր կարողանում, մինչև որ մի քանի սրտոտ հովիւներ հասան և ձեռիցը

խլեցին: Բայց խեղճ կինն արդէն հալից ընկել էր, հազին էլ հանդերձ չէր մնացել, բոլորը Գալին դադանի նման պատառոտել էր: Բայց այդ բաւական չէր, մի քանի այլ անկարգութիւններ ևս եղան: Օրինակ. — մի ուրիշ անգամ Գիւլլականց բճերը փեշները քարերով լցրած շրջապատել էին Ուհանանց տունը և քարկոծում էին նրանց, որ անպատճառ Չատինի տեղն ասեն, թէ ճրտեղ է նա...: Դրանից յետոյ Ուհանանցից շատ ու շատ անասուններ գողացուեցան. ամենը Գիւլլականց էին ցոյց տալիս, թէ նրանք են գողացել:

Այդ անկարգութիւնների համար Ուհանանք էլ բողոք տուին բարձր գատարանին: Եւ այն օրից սկսած երկու կողմից էլ բաւական ծախսեր արին մէկ մէկուն հորը ձգելու համար...

2.

Գործի քննիչը վերջապէս եկաւ: Քննութիւնը կատարուեց, բայց Չատինի բանը բուրդ դուրս եկաւ, — վկաները աղբեցութեան, խաթրի, թէ երկիւղի տակ ցոյց տուին, որ Չատին աղջկանը բռնի է յափըռտակել ու տարել...

— Վա՛շ, ամիսու տղայ, ինչ մղդիւր էր (հովիւ էր), կը բռնէն:

—Որ բռնեն ու թողան խու լաւ բան կըլի, կը կորցնեն, կը փչացնեն...

—Ուր ա, որ ես բռնեն, ես կորցնեն, նա էնա զաչաղ ընկաւ կորաւ...

—Հի... կորաւ, մզեար գտնող բռնողը Գիւլ-լականը ե՞ն, որ չգտնեն. որ ծակըմն էլ որ լի, տէ-րութիւնը, իշխանութիւնը դուս կըաչի, գուր արխէ-յին կացէք...

—Դրուստ ա ասըմ, թագաւորի հողիցը դժրը գի կորչիլ, կը գտնեն... դօրթ ա, հմի ծառն ու թուփը կանանչ ա, օրերը տաք են, գեաղէն (Չատին) իրան սար ու քովին ա տուել, ամա էգուց-էլօր ձմեռ ա գալու, որտեղ էլ որ լի, ցրտից ու սովից գուրս կը պլծնի, իրան տուր կը տայ, (անձնատուր կլինի)...

—Ափսոս, ափսոս, ինչ գոչաղ տղայ էր. ան-գաճը կանչի, չոմբախով (ցուպով) թուրքերի հետ իգիթի պէս կուռում, քշում էր նրանց, երբ որ նրանք մեր արտերը, մեր հանդերը կոխըմ ին: Վա՛չ. գեաւ-դանդ չկոտրի, ա Չատ, եանի ի՛նչ էր, որ մի քաժի (իգի) խաթրու ջանդ բազա տուիր, դըղարգիւն ըլար (հալածական եղար) կորար, էլ աղջիկ չէր ճարուիլն...

—Է... Մարտիրոս, դօրթ ա ասըմ ես, ամա հեշտ բան չի, որ դու մնին սրտով սիրես, մի ու-րիշը ձեռիցդ խլի, սէրդ քանդի: Դժար ա, շատ ա դժար: Սէրը ցաւ խու չի, կրակ ա...

—Թէ ցաւ ա, թէ կրակ, էնա խեղճ տղէն մէջն ընկաւ. ամա խօսալով դարդին դարման չի անուիլ,

թէ կարըմ էր քեօմակ արէք. իգիթ տղայ ա, մեղք ա, գուր տեղը բռնիլու են չըչարեն...

—Ո՛նց քեօմակ լենք, մեզ ո՞վ կըլտի, նրանք (Գիւլլականը) Ասծու տակիցն են, որ մարդի խօսք ու խաթրն ընդունեն:

—Ձեր խօսքը չեն ընդունիլ, դօրթ ա. միայն, հարկաւոր ա լաւ-լաւ մարդիկ մէջ գցել:

—Դէ հրէ տէր-տէրն ու քեօխովեն հանէս ապի-նի հետ գալիս են, տենանք նրանք ի՛նչ կասեն:

Ամենքը նայեցին եկողները կողմը:

—Ո՛վվէ, խեղճ հանէս ապի, էն ա տխուր հա՛, լէյի թէ ըրընտէր լի:

—Վա՛, հեշտ ա՛, մարդի տղին ման են գալի, որ ես սպանեն, ես բերդը գցեն, փթացնեն. բա տխրի ոչ, կաները ցից անի պար գա՛յ:

—Չատ գէշ բան պատահեց, շատ...

Գիւլական զանգակի խփելուց առաջ մի խումբ գիւղականներ եկեղեցու պատի տակ ժողովուած օր-ւայ գէսըից այդպէս խօսում էին մինչեւ երէցի գալը:

—Բարի ողջոյն,—չուտով եկաւ և ողջունեց գոր-ծակալ տէր-Յակոբը, սիւնի վրայից ետ տուեց զան-գաթելը, մի քանի անգամ քաշեց՝ ջրընդացրեց զան-գակը, եկեղեցու դուռը բացեց և ժողովուրդն ետեից ներս մտաւ, ժամերգութիւնն սկսեց: Ամենքն աղօթե-ցին, դուրս եկան ու պատի տակ թափուած քար ու կոճղերի վրայ կրկին շարիշար նստողեցին:

Չատինի հայր հանէսը սկ ուրբաթի պէս տխուր ու խեղճ-խեղճ նայում էր տէր հօր, տանուտէրի և

քեադխոսեալներն՝ երեսին՝ սպասողական դրութեամբ։ Տէր-Յակոբը գլուխը քաշ գցած, մտածելով համրիչը կէնտ-կէնտ գցում էր. դա արդէն նշան էր, որ երէցը մի բան է խօսալու։

— Որդիք, ասաց նա, — էս ձեր քեօխվա — քեադխոսեալքը, ըսէլ (այդ էլ) դուք. չիմդ էլ լաւ գիտաք մեր Հանէս ապիկի գլխովն անցկացածը, էլ պատմիլն աւելորդ ա։ Թէ սա, Թէ Գիւլլականք ձեր հրն-կեր-հրեանն են, խի՞ չէք հաշտացնում, որ մէջներիցը խռովութիւնը դուս գայ, կորչի. լաւ, Թէ վատ, ինչ եղաւ՝ եղաւ, անցկացաւ գնաց, իրանցն աղջիկ սրանցը տղայ, իրար սիրել են, աշխատեցէք պսակենք զալմաղալը վերջանայ... վերջը փիս բան դուս կը գայ, ինչ օգուտ մէկին ես միւսին։ Լաւ չեմ ասըմ։

— Վահ, կարգիդ մատաղ, մենակ լաւ ես ասըմ, չարարով կուտենք էդ թաւուր խօսքերը, գնանք միւսնաթ անենք։

— Գնանք։

— Գնանք..., — ձայն տուին ամեն կողմից և տեղներից վեր կացան ու քահանայի ետեից շարժուեցին դէպի Գիւլլականց տուն։

Գիւլլականց տղերքը՝ Մուսին, Խեչոն, Սաքոն... ու Գալին գրանը թախտի վրայ նստոտած էին, երբ գնացող խումբը սրահը հասաւ։

— Բարի ողջոյն, — ասաց տէր-Յակոբ հայրը։

— Բարի օր ձեզ... — ասացին և գիւղականք և մի քանիսը կանգնած մնացին, միւսները թախ-

տերի վրայ նստոտեցին ու լռեցին, որ կրկին տէր-տէրը խօսայ։

— Մուսէս, Գալուստ, որդիք, ամենս էլ գիտանք, Թէ ինչ պատահեց ձեր աղջկայ հետ, էլ պատմիլն աւելորդ ա, ըլա՞ծն ըլաւ անցկացաւ, էլ ետ չի դառնալ, միայն գէշ բան դուս կը գայ, որ ետեից ընկնէք։ Էսօր երկու ամիս ա, որ դուք թշնամացել էք Ուհանանց հետ, երկու կողմից էլ, Թէ դուք Թէ Ուհանանք դատաստանին զանգատ էք տուել, ամա լաւ բան չէք արել, որդիք. ամենից լաւը հաշտութիւնն ա։ Մենք՝ ես ու ձեր գեղի քեօխվա-քեադխոսեալքը, եկել ենք ձեզ միւսնաթ անենք, որ արինը ջրով լուանաք։ Եկէք փէշներիցդ քարերը վեր ածեցէք, հաշտուեցէք, աղջիկը տուէք, տղին էլ գրտնենք պտակենք, զալմաղալը վերջանայ։ Գնագատից ոչ մի օգուտ չի գալ մարդու. գնացէք դատարանիցն էլ գանգատներդ ետ առէք. Թէ ասըմ էք ծախս էք արել, ընէլ Հանէսին կը պարտաւորացնենք, որ գնայ մի մարդից մի քանի թուման պարտք վերցնի ձեր ծախսը տայ . . .

— Բարըչեցէք. բարըչեցէք, լաւ ա հրամայըմ տէր-տէրը։

— Բարըչեցէք..., — այս ու այն կողմից ձայն տուին ժողովրդականները։

— Տէր-տէր, քեօխվա..., բարով էք եկել մեր տուն, բարով էլ գնաք, միայն, ջլիս դուր ա ձեր գալը։ մենք, Քրիստոսն էլ որ երկինքցը դվեր գայ, էլի չենք հաշտուիլ. մենք պէտք ա մեր ասածն ա-

նենք ու անենք... Մեզ պէս մարդկերանց համար մեծ ամօթ ա, որ մեր խնամին Ուհանանց Հանէսը լի, մեր փեսէն էլ՝ մեր նեօթեար (ծառայ) Չատին:

— Մենք աչքներս բաց, թողալ չենք, որ մեր աղջիկը գնայ բռնօթաքաշ Հանէսի ձեռքին ջուր ածի, նրա դարբին դուռնուդ անի, նրա տրխնին հանի: Մեր խնամին ու մեր փեսէն պէտք ա մեզ նման, մեզ լայադական մարդիկ լեն. մենք մեր չօքանին աղջիկ չենք տալ... — վճռական պատասխան տուին Գիւլլականը:

— Դէ որ Քրիստոսն էլ գայ հաշտուիլու չէք, էլ ինչ ասենք ձեզ. վեր կացէք գնանք, քեօխվա, վեր կացէք, — տրտմութեամբ ասաց քահանան և թախտից իջաւ:

— Այ տղէք, եկէք տհենց միք անիլ, հաշտուեցէք, լաւ բան չի գուս գալ տակիցը, — վերջին անգամ խնդրեց և տանուտէրը:

— 2է, քեօխվա, զուր խօսք միք խարջիլ, լիլ չի. մենք մեր ասածի տէրն ենք, մեր թշնամու աչքը պէտք ա հանենք, — կրկին պարծեցան Գիւլլականը, ուստի բարեխօս խումբը քահանայի ետևից դժգոհ հեռացաւ նրանց սրահից:

Հանէսի դռնօթիւնը շատ վատացաւ: Նրան շարունակ կրկնում էին, թէ որդիդ բանտարկուելու է տարիններով:

— Բա ինչ անեմ, ում մէջ գցեմ, որ էդ Ասծու ծրիցն ըլաճներին հետս հաշտացնի, — լքեալ սրտով ասում էր նա:

— Հանէս ապի, արի վերջին փորձն էլ արա. գնա էս մօտիկ գեղերից մի քանի լաւ-լաւ մարդիկ բեր, թող նրանք էլ միւսնաթ անեն բալի կարենան կոտրեն դրանց:

— Ո՛ւմ բերեմ, ում կլսեն:

— Ըզդանայ տէր-Ստեփանին, Աշա-ջրի ըրիցին, Քարվասարի ըրիցին, քեօխվին, տէր-Վարդանին, Բալինանց Ակօբին... էդքանն էլ բոլ են, թէ որ գան:

— Է՛հ, ճարս ինչ, գնամ, դանչանք, պղատանք անեմ, բալի գան մի բան անեն, — ասաց Հանէսը և շտապով գիւղից գիւղ անցնելով ժողովեց յիշեալ մարդկանցից շատերին և մի քանի օրից յետոյ քեաղխողաների ու տէր-տէրների մի ահագին պատգամաւորութիւն ուղարկեց Գիւլլականց տուն: Բայց ամենի խնդիրն էլ ապարդիւն անցաւ: Գիւլլականը, ինչպէս ասում են, սատանի ձին թամբել էին, չէ ասեցին ու չէ:

Այդ օրը տեղական կառավարութիւնից կրկին հրաման եկաւ, որ Չատինին խիստ փնտռեն, բռնեն դատարանին յանձնեն...



Է.

Բայց ուր էր Չատին, որ ամպերին հասած թռչունի պէս չէր երևում: Նա չէր կորել, ծածկուել էր անտառում: Ամիս ու կէս էր խեղճն ատամի տակ

մի պատառ հաց չէր դրել և ոչ կերակրի համ տեսել: Նա վայրենի կենդանու պէս կերակրուում էր վայրի տանձով ու ընկուզով և սար ու ձորի մէջ, գլուխը չոր քարին դրած՝ «վայ, Սաթենիկ, ջան Սաթենիկ, ան Սաթենիկ» կանչելով՝ նղղում, քնում էր իւր միակ չուխայի տակ. բայց վայ այն քնելուն, քուն չէր, փչում, պէլացում էր գալիս նրա աչքերին և տանջում նրա մտքին ու հոգուն:

— Ախ, Սաթենիկ ջան, դորժա քօռանալու կուրանալու աչքերս խուփ եմ անում, ամա սուտ ա, քունս խել ես դու. քնի տեղ էլ եմ միտք անում, թէ ինչ անեմ, որ քեզ մընէլ տենամ, հնարք չեմ գտնում,— այդ խօսքերն ասելուց յետոյ՝ մի խոր ձորակում, սեպաւոր քարափի տակ Չատին հէնց նոր գլուխը կռանն էր դրել, հէնց նոր էր փորձ անում, որ աչքը կպցնի, յանկարծ գլխի վերելք մի խշտոց լսեց: «էս ո՞վ պէտք ա լի»,— ասաց նա, տեղից առ լուծի նման ծլունգ եղաւ, ձեռք ածեց իւր ծանրագլուխ գաւազանին,— հը՛ ում ես բռնում, օձի գլխի նման ջարդըմ եմ գլուխդ,— գոռաց նա ուժգին, երկիւղած բարկութեամբ սպառնաց մօտեցողին, բայց նա շուտ ձայն հանեց:

— Յնկեր ջան, ես եմ, դիւշմանդ (թշնամիդ) չի, փետդ ետ քաշի, տալ մի Սաքոյիդ...

— Վահ, ձեռս կոտրի, Սաքո ջան, դու ես. նամարդութիւն չանես հա,— ասաց Չատին, փաթաթուեց նրա վզովը և լցուած սրտով, արտասուելից աչքերով համբուրելուց յետոյ՝ հարցրեց:

— Յնկեր ջան, ասա մի. Սաթենիկս ու ոչխարն իս ո՞նց են:

— Լաւ են, լաւ. սիրտդ լաւ պըհի, աղպէր ջան,— պատասխանեց Սաքոն և կրկին փաթաթուելով միմեանց՝ փուլ եկան— աղի արցունքով բաւական լաց եղան:

— Դէ ասա տենամ, ան Սաք ջան, էդ ո՞ւր ես եկել. մի բան կլի, ըռանց էն չի,— լացը հագիւ զըսպելով ասաց Չատին:

— Ջանիդ սաղութեան, օնչիչ:

— Ասա, քե մատաղ, ասա. խաբար կլես բերած:

— Յնկեր ջան, ամեն օր քեօխովին թիւնդ-թիւնդ հրաման են գրում թէ՛ Ռըտի ուր ա, Ուհանանց Չատինին գտէք, բռնեցէք, կռները քամակին կապեցէք ու գատարան ղրկեցէք...»:

— Սաքո ջան, բա էն հողը պտղած քեօխներն ինչ անում ա, նա խու լաւ մարդ ա. հօրս տեղը շատ ա նեղացնում:

— Լաւ ա, ամա ի՞նչ անի խեղճը. նա էլ մարդ ա— ահ ա անում...: Ղօրթ ա, էրեսանց հօրդ տեղը նեղացնում ա թէ՛ «տղէդ գտիր ղրկենք, ամա սրտով քեզ հըմար էրուում խրովում ա...»:

— Վաշ... էդ ա ասա հօրս տեղը նեղացնում են էլի. էհ, ես խու որդի չծնեցի, դարդ ու բալա ծնուեցի նրա համար...

— Հա, խեղճ հէրդ շատ մարդիկ մէջ գցեց, շատ աշխատեց որ բարընեն (հաշտուեն), չիլաւ, Գիւլլականք սըտնի ձին թամբել են, ոչովի միւննաթը չեն ընդունում...

— Հա՛, խօսարդ կտրեցի, անպէ՛ր ջան, ասեցիր «էլ բան ունեմ ասիլու»:

— Ասեմ: Էրէկ սեկստշին (քննիչն) եկաւ սեկստ արաւ, ամա նրանց օգտին խօսաց:

— Օ՛հ, էդ ա ասա հըմի սրտները պնդել ա էլի:

— Հա՛, նրանք ամեն օր փափախները ետ դրած պրծենըմ են թէ՛ «մենք Չատինին կորցնիլ ենք տալու, Չատինին սե կառէթըմը նստըցնիլ ենք տալու. էհ, որ մինն ասեմ մէկէլը թողեմ...»

— Էդ գիտամ, աղպէր ջան, դու էն ասա, սեկստշին ինչ ասեց հօրս:

— Ասեց «տղէդ թասխրլու ա, թիւնդ կըպատըճի:

— Հասա՛, — յուսահատուելով Չատին, գլուխը կախ գցեց:

— Հա՛, զօրթ ա դհենց ասեց, ամա վախիլ մի, սիրտդ պինդ պըհի, բանդ Ասծու ողորմութենովը լաւ կլի. խեղճ հէրդ գշեր-ցիւրեկ քուն ու դարար չունի, անհանգիստ աշխատըմ ա՛ սրա նրա դուռն ա գնըմ որ...: Էրէկ էլ մի քանի թուման պարտք վեկալաւ, որ Ս.-ին ու Ն.-ին կաշառի...

— Սաքո ջան, դու իմ կուշտը գալիս հօրս տեհա՛ր:

— Հաբա՛, հէնց հէրդ ա ինձ կուշտդ դրկել:

— Վայ, վայ, վայ. խեղճ իմ հէր, ընչի՛ հըմար:

— Ասեց գնա՛, Չատինին ասա քու հէրն ասեց «սրդի ջան, ես էս ա չալիչ եմ գալի, որ քե ազատեմ, իմ ունեցած-չունեցածը չեմ խնայիլու, միայն դու էլ պէտք ա աշխատես, ծակերը մանելով բան

չի դուս գալ, որտեղ սր ես հարաքեաթ արա, դուս արի, գնա Ղուրդ-Ալայգմանին զանչաք-պըղատանր արա, բալի (գուցէ) քեօմակ անի (օգնի): Գիւլա-կանը՝ մէք ու մանուկ թուանքակալած ետեխցդ ման են գալի. մնաս ո՛չ հա՛, գնա Ալայգմանին գտիր...:

— Ա՛ Սաք ջան, եանի հօրս ասածի մասին քո խելըն ինչ ա վարըմ, Ալայգմանը կարայ ազատի:

— Պա՛ա... էդ ինչ ես ասըմ, նրան Ղուրդ կասեն (գալի բերան ունեցող):

— Ո՛հ, եանի կարայ:

— Օ՛, նա խեղճի, նեղացածի հըմար ջանը կըրակն ա գցում, որ ազատի. նա մարդու հրեղէնի պէս ա քեօմակ անըմ: Նրա անըմը սաղ Չամչադնի թուրք ու հայի մէջ մեծ ա, այդնի ա շատ...:

— Է՛, Սաքո ջան, բանս հէնց գէշացել ա, որ խկի խելըս կտրըմ չի, թէ նա կարենայ մի բան չիւնի, — յուսահատուած ասաց Չատին:

— Ա՛ Չատ ջան, դու էդ ասիլ մի, յոյսդ Ասծուն դի, գնա էն մարդի մօտ, նա քե անպատճառ քեօմակ կանի, ես նրան լաւ եմ ճանանչըմ:

Խոր ձորի մէջ, մի քորափի տակ, այն թաքուն տեղը Սաքոն մինչդեռ յուսադրում էր իւր սիրելի ընկերին, յանկարծ ներքեից մարդկանց խօսակցութեան ձայներ հասան նրանց ականջին:

— Սո՛ւ... սո՛ւ, Չատի, Չատի, սո՛ւ, տափիցը կպի, տափիցը կպի, նրանք են, — այրից կամաց գլուխը հանելով, ներս առնելով, երկիւղած և կոկորդային ձայնով Սաքոն զգուշացրեց ընկերին

և երկուսը միասին երեսները վրայ գետինն ընկան, ձայները փորները զցեցին ու սկսեցին դիտել:

Նրանցից մի քանի քայլ հեռու՝ սուղները կապած, հրացանները ուսներին անցնում էին Գիւլլականց տղերանցից մի քանի երիտասարդներ, որոնք վճռել էին, որ եթէ Չատինին գտնեն սպանելուց կամ մորթելուց յետոյ էլ միսը խորովեն հօրն ուտացնեն, իսկ արիւնն իրենք խմեն, այնքան վիրաւորուած էին զգում իրենց պատիւը: Սակայն, նրանք քօռ արջի պէս չնկատեցին Չատինին, հեռու անցան, այն էլ բարձրաձայն խօսալով:

— Ա՛ Չատ, տեղդ խաբար տուող ա լել հա (մատնող է եղել), — կոկորդային ձայնով ասաց Սաքոն, — դէհ, էլ նստիլ մի, վեկաց ու հեռացի, գնա Ալայգմանի թիւ տակը մտի, յոյսդ Ասծուն և նրան դիր, — կրկնեց Սաքոն:

— Հա, լաւ ես ասեմ, գնամ. դէ մնաս բարով, քե մատաղ: Սաքո ջան, էս ա ես գնեմ եմ, հօրս էլ կասես գնաց, ամա ընկերութիւնը մտիցդ գցես ո՛չ ոչխարդ (հօտդ) չուել մի ամիսն էս հանդերին պըհի. ասուիլ չի, բէյլափիլ ինձ պէտքը կգաս, — ասաց Չատին և արտասուալից աչքերներով բաժանուեցին միմեանցից:

Թ.

Սաքոն մօլուտներով [Ժագուն-Ժագուն, իրեն հաւաքած, ճամպի տակն ու զլուխն ընկնելով, խշկոտալէ վախկոտ մոզու պէս մի կերպ գիւլն ընկաւ: Նրա քայլուածքների բոլոր անկանոնութիւնները յայտարարում էին, որ նա ուզում էր Չատինի հետ իւր ունեցած տեսակցութիւնը գաղտնի պահել — նըրա ցաւը Գիւլլականք էին. նա սաստիկ քաշում էր նրանցից, մանաւանդ որ նա Գիւլլականց բարեկամներից (խնամիներից) էր:

Սաքոյի անհետանալուց յետոյ Չատին մի քանի քայլ արաւ, մի փոքր վեր բարձրացաւ և մի քարի վրայ նստեց, մեծ փափախը վերցրեց դրեց կողքին և շլինքը խեղճ-խեղճ կախ արաւ: Մի քանի ընդէ այնպէս սառած մնաց և ապա, անգիտակցօրէն նա բարձրացրեց իւր կախ գցած զլուխը, ամպամած հայեացքով խեղճ-խեղճ նայեց կանգնած ծառերի բնիկներին, վայր թափուած քեթուկներին (կոճկերին), մամռակալած ծայրերին, ամայի ձորին, որի մէջ առուակների ձայնը քարից քար թռչելով՝ Չատինին ուշքի բերին, թէև դարձեալ անսաս մնաց նա. կարծես կախարդուել էր, կարծես բնութեան այն լուռ բնակիչների մէջ խորհրդակից էր որոնում իւր համար: Սաքոն, Չատինի հաւատարիմ, բայց վախկոտ ընկերը նրան միայն նպատակը մատնացոյց արաւ, բայց չարժել Չատինին, հասցնել նրան այն նպա-

տակին, ահա այդ էր դժուարը, այդ էր նրան կախարդողը:

Սակայն անբարբառ բնութիւնը կարծես երեսը ետ էր դարձրել 2ատինից՝ սիրտ ճաքեցնելու չափ ծպտուն չէր հանում: Քարերի վրայ, ծառերի ճիւղերին միայն ծտերն էին ծւծւում և անտառի գլխին գայլագռաները կռկրում, իսկ նրանց լեզուն 2ատինին անհասկանալի էր: Բայց նա սթափուեց ու դտաւ, որ իւր այնտեղ նստիլը նոյնքան անմտութիւն է, որքան այն ամայի ձորում խորհրդակից որոնելը:

Կարճատև երերումից յետ՝ նա փափախը կռնատակին դրեց, ձեռք խանչալի դաստին և դիպ ելաւ Արդաղի դօշին: Որքան առաջ էր գնում 2ատին, նոյնքան տաքանում ու արագանում էին նրա քայլերը: Հրեղէն էր նա թէ թեւաւոր, այդ չզիտեմ, միայն մի քանի ժամից յետ 2ատին իւր ետեւ թողնելով ճոխ անտառը, անդնդանման խոր ձորերը, երևաց Արդաղի միւս ստորոտում: Նա այնտեղ գլխաւորով ճակատից հեղեղի պէս թափւող քրտինքը սրբեց, գլխարկը բարկացած և ուժգին տափովը տուեց, նստեց իրեն վաղուց ծանօթ սառնակն մի աղբիւրի մօտ և կրկին գլուխը կախեց, աչքերն ագբբրի ակնին ձգեց: Աղբիւրը զլզլում, գլզլում էր մի սև ապառաժի արանքից ու յստակ ջուրը մարգարտի հատիկների պէս մեղմ կարկաչիւնով հեռանում էր նրանից: Ազատներն այդտեղ աւելի էին կռկռացնում:

— Ա՛խ, օ բայդուշ ազատներ, ետրաբ ի՞նչ էք վայ տալիս գլխիս, ի՞նչ էք աւերակ շինում սիրտս...:

Ա՛խ, օ գլզլան աղբիւր, ետրաբ ցաւս իմանում ես, ետրաբ դու էլ (յիշում ես), միտդ ես բերում էն օրը, էն սհաթը, երոր քու սառն ակնի վրայ թուխ ոչխարի կաթն ի խմում, բեղբոս սրում ու չվուս փշելով ընկերներին հետ պար գալի ու կանչւմ, ա՛խ... Ա՛խ, էրնակ լիզուդ իմանայի, ետրաբ էդ ի՞նչ ես բլբլացնում, որ մանրմ չեմ...,— խօսեց 2ատին, արտասուեց 2ատին և չորս կողմի հայլադատեղերի ամայութեանը նայելով, մի բոպէ կարծես մոռացաւ իւր սրտինը. բայց շտտ չանցաւ, նա կրկին ախ քաշեց և երգեց լեռնականի սովորական այս երգը:

«Խալիսը քոչեց արանը,

Կանանչ տախտեր, սառն աղբրներ՝

էլի տիրեց մարալը (եղջերուն)...»

Այդ երգը երգեց նա թուրքերէն՝ խիստ սրտազին և խորովում ու աղէտալի ձայնով: Նա յիշում էր, որ երէկ մէկէլ օրը այն մերկ լեռան ստորոտի իւզոտ կանաչը արածում էին հայլաղի զարդ խաչինքը, կովն ու հորթը միասին՝ կուլ կուլի տուած իրար լիզլզում էին անմեղ, և, գիւլի աղջկունք քեալաղերը բերաններն առած, կայտառ ու նազելի քայլուածքով, խոտերը կոխտալով վերեկից իջնում էին և աղբրի շուրջը պատելով՝ լցնում իրենց կարմրաշաշոր կուժ ու սափորները և գնգզնգալէ վերագառնում իրենց հովանի վրանները: Յիշում էր նա վերջապէս նրանց մէջ իւր սիրած Սաթնեկան և այն գէպը, որի պատճառով ինքը սար ու ձոր էր ընկել, և որը անջնջելի էր դառել իւր սրտի խորքում: Բայց,

երբ տեսաւ, որ այն բոլորն անցեալին են պատկանում, մի անցեալի՝ որ կարծես նրանից դարերով էր բաժանուած, հեռացած, կրկին ախ քաշեց և մի ուրիշ երգ երգեց, որ արդէն թախիժ ու մղկիտ էր բերում նրա սրտին։ Նոր երգը կորցրած եարի երգն էր։ Հեղինակին թւում էր թէ, այդ երգը հին ու վշտոտ դարերում պիտի լինէր հիւստուած, որովհետեւ նրա յանգերի մէջ անգութ թաթարի անուն է հընչւում։ Սակայն մեր գեղջուկ եղբայրը թուրքերի մէջ անցկացնելով իւր հովուական օրերը, հայերէն երգ չէր իմանում։ Նա այդ երգն էլ թուրքերէն երգեց։

«Ա՛յ, ազրզըմ, ափարդի թաթար մանի,

Գիւլ էյլար՝ սաթար մանի . . .»։

Այս երգի վերջին խօսքերը՝ «թէ որ սիրելիս հաւատարիմ է ինձ, թող որոնի, գտնի ինձ...», աւելի մորմորեցին մորմորուած Չատինին։ Նրա աչքերը վառեցին և սուր կայծերով լցրին, իսկ երակները վրէժխնդրութեան արիւն գցեցին։ Նա մի վայրենի ցնցում գործելով՝ տեղից յանկարծ ծլունդ ելաւ, վեր թռաւ, հողոտ փափախը տափիցը վերցրեց կրկին, բայց չգիտեմ ինչ մտածեց, որ էլի տափովը տուեց, էլի վերցրեց և խօսեց։

—Սա իմ գլխին չըլի, սա անտէր մնայ, սրան էրէցը կլոյի կողոպուելու անի, թէ որ ես իմ սիրածին էլի չճանկեմ. էն ով կարայ Չատինի նշանածին գերի անի... սւֆ... Սաթենիկ ջան... Վայ, գրւխ, գլուխ, սաղ մնում ես ինչ անես. ախ, ետվաշ (սպասիր) հլա մի գուրդ-Ալայզմանին հաւնեմ։ Ա՛խ, ա

Ալայզման, ա ես քու անրմիդ մատաղ, ետրաբ գիտես, թէ ինչի եմ իրեսս սարերին թերած կուշող գալի՞. ետրաբ իմ հարային հաս դես լիլ, սրտիցս ջուր դես խմիլ, թէ ինձ ոնցոր թողեցին դու էլ նհնեց անքէօմակ դես թողիլ...

Այդ յուզմունքով լի խօսքերն աւարտելուց յետոյ, Չատին վճիտ աղբիւրը թողեց, չուսի բեշերքը գօտին խրեց և Սրդաղի ստորոտից քայլերն արագ-արագ շարժեց դէպի ներկարարի արնկեր ձորը, ուր երկիւղից զարգանդը (ազդումն) մեն մենակ մարդու սիրտը ճաքեցնում էր մինչև նա դուրս կգայր այնտեղից։ Արեան, մահուան հոտ էր փչում այն ամայի ձորից. մարդ լիբան սիրտ պիտի ունենար, և կամ մի այնպիսի դարդ՝ որպիսին Չատին ունէր, որ կարողանար, համարձակուէր այնտեղ ից անցնել։ Բայց Չատին դեռ ձորը չըկիտած, արեգակը մայր մտաւ, սարի քամին փչեց, ծառերի տերևները սփսուացին մի առ ժամանակ ու կրկին լռեցին։ Խիստ խաւարը վրատուեց ձորերին ու անտառին։ Չատին էլ չկարողացաւ շարունակել ճանապարհը, քառ ու կոճղերը ոտներովն էին ընկնում և ճախ ու չոփերն աչքերը սլործնում։— Չատին ճանապարհից դուրս եկաւ, քափ ու քրտինքում մտած մի քարափի տակ, ինչպէս ասում են, ահը սրտումը, մահը մտքումը հովիւների Ատուածուն, հանդերի բոլոր սրբերին ու նահատակներին իրեն օղնութեուն կանչեց։

—Ա՛խ, ա Սուլթան Սրուէդ. իրեսս ձեր ոտի տակը՝ ա սուրբ Սարգիս, ա սուրբ Գրիգոր ու սուրբ

Գէորգներ, դուք ինձ օգտեցէք, դուք իմ հարին հաս-
լէք, դուք իմ Սաթենիկին մի կորցնէք, որ ես էլ
ձեր գլխովը պտիտ դամ ու ոչխարիս (հօտիս) մէջ
որը լաւն ըլի, էն մատաղ տամ ձեզ: Ա՛խ, ետրաք
լսեցիք...,—ասաց Չատին, չլինքն (վիզն) ուսովը
ձգեց և մէջքը յենեց ետևի քարին ու նղղեց:

Ժ.

Գիշերն անվտանգ անցաւ և առաւօտը, երբ
ծիրանի արշալոյսն սկսեց գունաւորուել, փայլել և
հըր ամեն ճիւղ թափած ուզում էր անցնել ծառերի
արանքից և իւր հեզիկ շրթունքներով յետևի կանաչ
տախտերին (մարգագետիններին) համբոյր տալ, Չա-
տին նղղած տեղից վերթաւ ու զարմանքով բացա-
կանչեց. «վահ, մզեար աչքերիս քունն ա եկել», ա-
սաց ու բրդոտ գլխարկը կռան տակը հուպ տուեց,
անլուայ երեսին խաշակնքեց. «Տէր Աստօծ, դու աջո-
ղաս, դու Ա՛յազմանին բարի սրտով, բարի ռահմով
ինձ ռաստ բերես» խօսքերն էլ արտասանեց ու շտա-
պով, թոկը կտրած մոզու պէս անտառից դուրս ըն-
կաւ դէպի Թ... գիւղը:

Մի քանի ժամից յետոյ հրեզն կտրած Չատի-
նի գլուխը որսորդից խրտնած բախրի գլխի պէս
երեւաց նովալլուի ուրթումը, ուր նա փոքր ինչ
կանգ առաւ, մատները կռացրեց բաղնիքի պատերի
պէս քրտնած ճակատից քրտինքը սրբեց, գլխարկն
ականջների կողքերը քսեց, մէջքը դրստեց և մի րո-

պէ ետ մտիկ տալով, իւր անցած, իւր ետևում թո-
ղած սար ու ձորերի վրայ մի թեթև հայեացք ձգե-
լով՝ մրմնջաց. «Ո՞վ է, ա՛ արնկեր ձորեր, ձեզանից
աղատուեցի. պահ, պահ, պահ, մարդ էլ սիրտ կանի
մեն-մենակ ներկարար մտնի. եանի քաշովս որ
ոսկի տային ես էլ չէի մտնիլ, թէ որ, Սաթենիկ
ջան, քու կրակի պէս սէրն ինձ չերէր, չլրովէր,—ա-
սաց Չատին և առանց հանգիստ առնելու, կրկին
զաւազանը մէջքին հուպ տալով, հարաքաթ արաւ և
միջանի աչքախօսւիում Թ... գիւղի դիմացը դուրս
եկաւ, դէս դէն, աջ ու ձախ հանդերի կողմը նայեց և
անցնող մարդիկ տեսնելով՝ ձայն տուեց:

— Էհէ՛օյ, ա՛ անցկենող, ա՛յ աղպէր, էհէ՛օյ...,—
մտերմական ձայնով կանչեց Չատին:

— Ա՛, էն ո՞վ ա, հրէ, հրէ,—մէկ մէկու ասա-
ցին թաթլուեցիք:

— չլէյի, թէ թուրք լի:

— Թուրք չի, հայերէն կանչեց, ձէն տուր տենանր:

— Ա՛, էդ ո՞վ ես, էհէ՛օյ, թուրք ես, թէ հայ:

— Թուրք չեմ, թուրք. ըղպրացու ջան, զարիւր
մարդ եմ. դու էս էրևող գեղիցն ես,—հարցրեց Չատին:

— Հա՛, հա՛:

— Դէ որ հա, քե մատաղ, մի լաւութիւն արա,
չհանց տուր տենամ դուրդ-Ա՛յազմանի տունը ո՞րն ա:

— Զուրդ-Ա՛յազմանի տունը՝:

— Հա՛, հա՛:

— Հրէ հա՛, էն ձորի զրադի խօտի մեծ-մեծ դիզա-
նը տենում ես, էնդոնց քամակի օթախնին նրանն են:

— Է՞ն, հա, տենում եմ: —
 — Դէ որ տենում ես, գնա, էն ա նրա տունը, —
 մատը դէպի գիւղի կողմը մեկնելով ցոյց տուեց նա
 Ալայգմանի սենեակները:

— Սաղ լես, ըղպրացու ջան, ումբլոք ըշխարհին
 չափ էրգեան լի, շատ շնորհակալ եմ, — ասաց Չա-
 տին և ճտնապարհից դուրս գալով, մի թփի տակ
 քաշուեց, հանեց չուխէն ու արխալուխը, գօտիկից
 կախած հոփուական թրաշ դանակով մէջքից նրանց
 վրայ դուրս տուած թանազոյն քափը քերեց, կրկին
 հագաւ, պաճիճների ու տրեխների ծպները աջ ու
 ձախ քաշեց, պնդացրեց, թփի միջից մի ճիպոտ կըտ-
 րեց, նրանով փափախին մի քանի անգամ թրմմա-
 ցրեց, թողը թափ տուեց, ծածկեց և գօտին կապե-
 լով՝ ոտին-տոտին նայեց ու գաւազանը քաշ տալով
 թրմբից ներքև թռաւ, ճանապարհն ընկաւ:

— Հա, էս էլ մտածեմ, որ գնամ, ինչ ասեմ էն
 մարդին, ո՞նց մօտեանում նրան, վայ թէ ասեց դու
 ո՞վ ես, ես քե՛ն ճնանշըմ չեմ... էն ժամանակը, ո՞վ
 Աստօծ, քու փեշն եմ բռնում, դո՛ւ քեօմակ լիր ինձ...

Չատին այդ մտքերի մէջ ևս մորմոտուելով քայլ
 առ քայլ մօտենում էր մատնացոյց արած տեղերին,
 որոնց ետևում թանձրատերև ծառի տակ փռած
 նախշուն ջեջմի վրայ բարձակալը կռնովը դրած՝ թին-
 կըն էր տուել նրա յոյս ու տարաւէն դուրդ-Ալայգ-
 մանը և պապի աչքերով հսկում էր բանուորներին:
 Նրա առաջ, կապտայտտակ կալի մի կողմը կարմիր
 ցորեն էր թէղած, միւս կողմը դարման կիտած:

Ալայգմանը նայում էր իւր վաստակին և նրա դէմքի
 վրայ գոհութեան և բաւականութեան նշաններ էին
 տրտայայտում, որովհետև գիւղացու տորին առատ
 էր խիստ: Նա այն կարմիր ցորենից հարսանիքի
 լոջ էր թխելու շուտով և իւր ընկերակից քեադխու-
 գաների հետ քէֆ էր քաշելու ամբողջ տարին. նա
 կարծես մրմնջում էր ուրիշ գիւղացիների պէս թէ.
 «փառք քեզ, Աստուած, ցամաք հաց» որ տուիր,
 մեացած բաներն էլ կճարեմ քու ողորմութենովը...»:
 Բայց ուրախութիւնը, գուարթութիւնն Ալայգմանը
 մեղակ չէր վայելում, ընդհանուր էր. նրանց հարս
 ու աղջիկներն էլ գոգնոցները կոկ կապած, ուրախ
 ժպիտը երեսներին շարուել էին թէղի շուրջը. նրան-
 ցից երկուսը խաներով ու չափերով կիտած ցորե-
 նից շտապ-շտապ վերցնում ածում էին, իսկ միւս
 ներն իրար հետ մրցելով՝ մաղում խախալում էին
 ու նորից վեղաբաձև կիտուկ-կիտուկ անում, որից
 երիտասարդները կրում ամբարներն էին ածում, իսկ
 մանր տղայք ու աղջիկներից մի քանիսը ճիպտոնե-
 րը բարձր բռնած, ոմանք էլ փայտերը ձի շինած
 վրան նստած անմեղ գառնուկների նման քամած
 դարմանի մէջ վազվզում, խալում, գլորում էին և
 կամ խմբով յարձակում գործում այս ու այն կողմի վը-
 րայ և թէղի ափերից հատիկ գողացող հաւերին ու
 ճնճղուկներին բշում, թուցում: Այդ միջոցին երե-
 խանց ուշադրութիւնը գրուեց բարձրից իջնող հո-
 վիւ Չատին. նրանք ճիպոտները իրենց քաշեցին,
 առժամանակ կանգ առան, ապա ետ վազեցին և

Այլայգմանին յայտնեցին եկողի մասին։
— Այլայգմանն ամի, հրէ, հրէ, հրա մտիկ արած, մեր կալի վրա (դէպի մեր կալը) մի դարիք մարդ ա գալի։

Ծանրամարմին Այլայգմանը վրանստեց և խոշոր աչքերով սկսեց դիտել յամրաբայլ եկողին։ Չատին հէնց իջաւ, հասաւ խոտանոցին, Այլայգմանանց դամփուռները ահագին աղմուկով յանկարծ դուրս թափեցին և նրան խիստ չփոթացրին. կատաղի շները գոռում էին նրան, եթէ ցորեն կրողները չուտ չհասնէին։ Չատին շներից ազատուելով մօտեցաւ կալին, գաւազանն ուսից իջեցնելով, ամօթխածութեան բոլոր ծանրութիւնն ուսերն առած՝ բարե տուեց մազող, խախալող ու կրողներին և հարցրեց։

— Բարի աջողըմ, Աստօժ բարաբեաթ տայ հացներիդ։

— Ասծու բարին, սաղ լես, — պատասխանեցին։

— Այլայգմանի տունն էս ա, ա քրւերտինք (այրոյրեր) ա ըղպերտինք, — հարցրեց Չատին։

— Ա, էդ ով ես, որտեղացի ես, դէսն արի տենամ, դէսը. ես եմ Այլայգմանը, — կալի միւս ամփից ձայն տուեց նա։

Չատին նայեց այն կողմը և երբ տեսաւ նրան, թեւերն իրեն քաշած մտաւ կալը, մօտեցաւ Այլայգմանին, գլխարկը վերառաւ և ուղեց համբուրել ձեռը, բայց նա վեհանձնաբար թոյլ չտուեց, այլ խիստ կարեկցաբար նայելով երիտասարդի արտասուալից աչքերին, հարցրեց։

— Անպատճառ մի ցաւ կոռնենաս, մի բանի եկած կլես, որդի, ասա տենանք. որտեղացի ես, ի՞նչ է պատահել քե։

Չատին խիստ լցուած էր, սկսեց, ինչպէս ասում են, թնկթնկոտալ (հեկեկալ)։

— Այ որդի, աչքերդ խլի ես լցնրմ, ասա, վախիլ մի, թէ ձեռիցս գայ, խնայիլ չեմ, քեօմակ կանեմ, — վճռական և քաջալերական ձայնով ասաց նա։

«Քեօմակ կանեմ» աղնիւ խօսքերը հալածուած հովուին յոյս ու համարձակութիւն ներշնչեցին. նա ընդառնալ կարծես զօրացաւ, կորացրած գլուխը բարձրացրեց, նայեց իւր առաջը սարի պէս կանգնած Այլայգմանի ճակատին և մի առ մի պատմեց իւր սրտի ցաւը։

— Այլայգման դայի ջան, տեղս չատ գծուար ա. վերե Աստօժ, ներքե դու ես իմ յոյսը, ուրիշ ոչով չունեմ... — այստեղ Այլայգմանի շուրջը կանգնած կանանց, հարսների աչքերը ջրակալեցին։ Չատին շարունակեց, — էէ... որտեղից որտեղ, սար ու քօլ ոտքիս տակ տուած՝ ստորդ եմ եկել, պէտք ա քօմակ լես ինձ՝ ո՞նց որ քօլ հարադատ որդուն, — ասաց նա և չորեք, որ ստորը համբուրի, — այստեղ Այլայգմանի աչքերն էլ փայլեցին արցունքի կաթիլներով։

— Ի՞նչ ա, ի՞նչ ա պատահել քե...

— Տողուղ մատաղ, համարձակութիւն չլի ասիլս. ես մեր գեղիցը հալալ սրտով մի աղջիկ սիրեցի ու ըշխարի դրած կարգով ուղեցի հետը պսակուել, ծրնողները չտուին, ինձ թողած, բաց աչքիս առաջ

ուզեցին ուրիշի տան, ես էլ՝ սրտիս կրակից, էրեւելուց աղջիկին առայ քօլը փախցրի, մի օր ու գիշեր կշտիս մանիչակի պէս պահեցի ու էն մտքով թէ տանելուց ետն ինձ կտան, թող արի։ Հրմի աղջկայ հէրն ու ազգականները՝ Գիւլականը թւանքակալած ետեկցս են ընկել, ուզում են սպանեն, միան գտնում չեն։ Չուել (մինչև) օրս Աստու սար ու քօլն ա ինձ պահել, ամա անիրաւնին տեղը (ուր հարկն է) զանգատ են տուել... խեղճ հօրս էլ իմ տեղաք գիւանը նեղացնում ա, նրանից Չատի են ուզում. խեղճը մնացել ա կրակում... Դայի ջան, զլոխդ թող չցաւացնեմ, կարճն ասեմ. ինձ ուզում են բռնեն դուր տեղը կապեն ու դրկեն... Էսեցի, որ դու տեղը նեղացած մարդի հարէլին հաս ես լրմ. դէօրից փախած ճուտի պէս եկել եմ թեկդ տակը մտնեմ, որ ետ պահես, ես մի ճար անես...։

Չատին այդպէս մղկտալով արաւ իւր պատմութիւնը. իսկ Ալայզմանը մինչև վերջը լսելով նրան, ասաց. — Մի սղալ ես արել, աղջկանը որ փախցրիք, ձեռիցդ բաց չալէտք ա թողայիր... Թէ որ ինձ հասցնէիր, էս մօտիկ գեղըմը մի քօսա տէրտէր կայ նրան պսակիլ կտայի. ափսոս, — ասաց Ալայզմանը և տխուր ու խորհրդաւոր հայեացքով մի առ ժամանակ նայեց երկնքին. կարծես թէ ամպերի հետ ուզում էր խորհրդակցել. Բայց նա շուտ ետ դարձաւ մտքից և մատը հակառիկ տալով՝ ասաց Չատիին. —

— Տղա, բանդ գէշ ա, տեղդ բերդն ա, ամա սիրտդ պինդ պըհի, վախես ոչ, հնար կայ անելու...

— Աղջկանը իրան կամքովն եմ տարել, դայի ջան, էդ քե շասեցի։

— Հա՛, էդ աւելի լաւ, ասաց Ալայզմանը և կանչեց իրենց «գիւլու—Մարալ» հարսին։

— Մարալ, Մարալ, աղճի. խախալդ վեգի, ձեռաց Աստու տաճից մ'քիչ հացըմաց չինի էս տղէն նհար անի, ճամպորդ մարդ ա, սոված կլի։

Մարալ հարսը խախալը ցորենի վեղարածն կիտուկի վրայ վերդնելով՝ ազրայիլի պէս վազեց աղբարհարից մի գիրկ խշուրփշուր արաւ, կրակը վառեց ծուխը ծուլ արաւ, կսկարենքը (եռօտանին) դրեց, փրան կոթաւոր պղնձով մի գդալ կովի մաքուր ու դեղին իւղ ճնճուստացրեց ձուածեղ պատրաստեց և խոնչի վրայ դարսած բոքին հացերի հետ միասին բերեց քաղցած հիւրի առաջը դրեց։

Չատին, որ շաբաթներով ու ամիսներով ատամի տակ մի պատառ հալալ հաց չէր դրել, որ միմիայն վայրենի տանձ ու խնձորով էր փորը նիւթ գցել, թէև խիստ քաղցած էր, բայց ամաչում էր օտար յարկի տակ սրտալի հաց ուտել. ուրիշ անգամ, իբրև հովիւ, ջրի տեղ թաքախով կաթն էր խմում և ջամերով հալած իւղ ծծում, իսկ այս անգամ նրա ծնօտները հիւանդ գառան ծնօտների պէս էին շարժուում ու ծղծղում։ Ինչպէս եղաւ, նա մի քանի պատառ ծմմորեց, կուլ տուեց, տեղից վերկացաւ գիւլ—Մարալ հարսին «քու որդիքն ապ-

րեն, ա քիր ջան չնորհակալ եմ, չէն կեանք, օջաղնիդ հաստատ ըլի», ասեց և ոտն ու ձեռը հաւաքած կալի մի կողմը քաշուեց ու սպասեց։ Այնպիսի մի նոր բան ասելուն։

Այնպիսի կռիւնում մեծ փափախը գլխին, բաշլուղը փաթաթել էր վզովը՝ չեպերը դէպի յետ՝ ուսերովը մէջքի վրայ թառ էր տուել, արծաթապատ դաշոյնը փորնովայր կախել և երկու ձեռը արխալղի գրպանը դրած՝ մտածելով կալի ափում ծանր քայլում էր յետ ու առաջ, առանց նայելու Չատինի կողմը։

Այնպիսի երբ գնում էր այն կողմը, Չատին կորացրած գլուխը փտահանում էր բարձրացնել, և, կարծես նրա քայլերը համարելիս լինէր. իսկ դէպի ինքը դառնալիս՝ գլուխը կրկին կորացնում, խղճանում էր տգաթեւած ճուտի պէս։

ԺԱ.

Այնպիսի հայ գիւղացու խոշոր տիպերից մինն էր ներկայանում մարդու առաջ։ Նա մի թիկնալի լիբը-լիբը, կուրծքը դուրս ընկած վառ ու խոշոր աչքերով մարդ էր. դէմքը միշտ ծիծաղում էր, բնաւորութիւնը՝ ուրախութիւն և բարութիւն էր արտայայտում։ Նա քաղցրաբարոյ, հիւրասէր, ինչպէս ասում են, քէֆ, գեալաջա սիրող և հմուտ հանաքչի տղամարդ էր։ Կնուների, հարսանիքի և այլ խնջոյքի հրաւիրուած ժամանակ նա սովորութիւն ունէր ամենից ուշ գնալ, որպէս զի արդէն վաղուց նստոտած

հրաւիրեալները նրա մտնելու ժամանակ տեղներից վերկենան, կանգնեն «համեցէք, համեցէք» ասելով պատիւ տան, այսինքն սուփրի վերին ծայրում՝ իրեն լայադական տեղը նստեցնեն։ Իսկ երբ նստեցնում էին, նա այնքան քաղցր հանաքներ էր անում, որ սիրահարում էր խնջոյքաւորներին և նրանք Այնպիսի փորացուն իմանալով՝ միաձայն թամազա (կառավարիչ) էին ընտրում։ Այդ պաշտօնը շատ սազում էր նրան, միայն օրհնուածը տուգանքի ենթարկելով սխալ օրհնողներին այնքան խմեցնում էր, որ գինու կարասներում տիլ էլ չէր թողնում։ Ինքը շատ խորամանկն էր, հարբեցողների վրայ ծիծաղելու համար լրջութիւն էր պահում—իւր բաժակը աչքագողութիւնով թագուն՝ ամանի մէջ էր դադարկում և կամ դէն ածում։

Չնայելով այն բոլորին, նա աշխատում էր միշտ կռուի ու վէճի մէջ լինել։ Վէճը, դաւադալը նա ստեղծում էր չեղած տեղից անգամ. ուրիշներին կռուեցնում էր և ինքը հաշտեցնող հանդիսանում։ Նա հերոս էր դառնում այնտեղ, ուր մարդիկ նրա խօսքն ու խորհուրդը լսում, յարգում էին, մանաւանդ երբ գովում, լաւն էին խօսում նրա մասին։

Սկզբում Այնպիսին աղքատ մարդ էր, բայց երբ դէպքը նրան հարստացրեց, նա սկսեց սաստիկ նմանուել թուրք աղալարներին։ Նմանեցնելը, երեւցընելը կարճ ժամանակում սաստիկ զարգացաւ նրա բնաւորութեան մէջ. նա իրեն գովողներին գրաւելու, նրանց երեւակայութեան վրայ աւելի ազդելու

համար աղալարի պէս շուտով մեծ նշանակութիւն տուեց արտաքինին, հագուստին և այդ բնական էր— նա չորս կողմը նայեց տեսաւ, որ կոյր ամբոխը լաւ հագնող կապուղին տղայ է ասում, հետեապէս շտապեց ինքն ևս ճոխ հագնել, միայն աղալարներից զանազանում էր նրանով, որ նրա հագուստը իւր հալալ աշխատանքով էր գնուած, հարամ ոչինչ չկար: Նա հագնում էր թուխ ներկած երկար չուխա, տակը փայտոյ լատիկ արխալուզ, վրայից կապում էր արծաթէ գօտի. դուրս ընկած փորի վրայ, որ խիստ սագում էր, կապում էր արծաթապատ դաշոյն. գըլխին դնում էր կռթնուած մորթուց կարած մեծ փափախ, որն այնքան ծանր էր, որ եթէ մարդու մէջքին խփէիր, մէջքը կը կոտորուէր: Նա, հակառակ գիւղացիների սովորութեան, շալուարի լայն փոսկերը պաճիճների տակովը չէր անում, վերթողած էր պահում: Մի հագուազիւտ բան ևս, որ Այդգմանը գլուխը շատ մաքուր, գրպանումն էլ սանր էր պահում: Այդ հագուստի հետ նա չարաթական երեք տեսակ ոտնամաններ ունէր. կիւրակի օրն անպատճառ քօշերն էր ոտներն առնում, կարմիր ու նախշուն դուլպաններով. երկուշաբթի, երեքշաբթի՝ շուտները և մնացած օրերը՝ նախշած լափչիները: Օրհնուի նա, վերջին տեսակի ոտնամանները հագած ժամանակ միշտ քարքարոտ տեղերով էր մանգալի, որ կրքիկրբոցը լսելի անի...:

Աւելի թամաշալու էր Այդգմանը, երբ նոր հագած շորերով տանից դուրս էր գալիս և ուղղում

էր դէպի գիւղամէջը, ուր շատ մարդիկ էին լինում ժողովուած: Նա սրահից գլուխը հանելուն պէս նախ դէս ու դէն նայում էր, ապա բխերը ոլորում, և երկու ձեռն իրար հետ, չուխի տակից, կամ ետն էր դնում և կամ հպարտութեամբ մինը դաշոյնի դաստին, միւսը կողքնովայր լայն թեքի հետ գրցում ու գցում և ապա երկուսը միասին չուխի վրայից ետին դնում ու հպարտ քայլերով մօտենում նրանց:

Սակայն, նմանուելու, երեսու համար Այդգմանը մի ուրիշ միջոցի ևս դիմում էր. նա մեծ ճարպիկութեամբ աշխատում էր նստել, վերկենալ, ծանօթանալ, բարեկամութիւն հաստատել այնպիսի անձանց հետ, որոնք Ղազարի գաւառում դիրքի, ոյժի և իրաւունքի տէր էին: Այդ նպատակին հասնում էր քէֆով, աղուհացով, փեշքէշներով (քնծաներով), և որ գլխաւորն էր՝ քաղցր լեզուով:

Գիւղացիներն Այդգմանին տեսնելով այնպիսի բարձրաստիճան անձինքների հետ, որոնցից իրենք մեծ երկիւղ ունէին, ուռի պէս դողում էին, արդէն նախապաշարուած միմիանց ասում էին, «տղերք, էք, դա էլ աղայ դառաւ հա...»:

— Զրմանըմ էք (զարմանում էք):

— Ադա, բա ըրմանանք ո՛չ. էրէկ-մէկէլ օրը մի տկլուզ գեադա էր, հըմի նաշալնիկի ու պրիստաւի հետ ա նստըմ, վեկենըմ:

— Զրմանալու էլի ոնչինչ չկայ, ըշխատանքը մարդու երկինքն էլ կբացրացնի:

Վերջին եղանակը, որով նա իրեն «նման» էր ցոյց տալիս, շատ անգամ օգտաբեր էր լինում նեղութեան մէջ ընկած գիւղացիների համար,— երբ նրանցից մինը գիտութեամբ թէ անգիտութեամբ մի յանցանք էր գործում, բանտարկւում կամ բռնուում էր, Ալայգմանը անուանը համբաւ աւելացնելու համար օգնութեան էր հասնում նրան,— նա իւր տանը աղուհաց կերած, կերուխում արած խաթրապահ մարդկանցը բարեխօս էր լինում, կամ ներել և կամ թեթեւացնել տալիս քեասիբի յանցանքը։ Այգպիսի օգնութեան դէպքում Ալայգմանի պատիւն ու գովասանքը գիւղացիները երկինք էին բարձրացնում և նրա համար Աստուծոց կեանք (ումբր) ու արեւատութիւն խնդրում։

Այսպէս, Ալայգմանի համբաւը տարածուել էր Ղազարի մի կողմը. բայց նա դրանով չէր բաւականանում, նա ուզում էր, որ իրեն ճանաչեն Ղազարի միւս կողմն ևս։ Այդ նպատակին հասնելու համար յարմար առիթ էր որոնում նա, և ահա դէպքը հալածուած Չատինին բերել նրա մօտ էր ձգել։

Այդ դէպքը Ալայգմանին ոգևորել էր։ Նա հպարտ հպարտ քայլում էր կալում և մտածում, թէ ի՞նչ անի, ի՞նչպէս պաշտպանի Չատինին, որ իւր մասին աւելի շատ խօսեն։ Նրա չլնքի երակները խաղային, այդ նշան էր արդէն, որ հնարը գտել է։ Կալի ծայրում յանկարծ քայլելուն դադար տալով, Ղարաբաղի մելիքի պէս ձեռը դրեց սրի դաստին, դարձաւ Չատինին և ժպտալով հարցրեց. «այ տղայ, սիրածդ բա-

թաղջիկ ամ, արժի՞ հարադաւորուել, ձի նստել, թէ՞ չէ»...։ Չատին նախ գլուխը կախեց և ապա հագիւ վստահանալով՝ ակնածութեամբ պատասխանեց. — համարձակութիւն չլի, քու որդին եմ, իմ սիրած Սաթիկի նմանը, նրա հատը մեր գեղըմը ճարւում չի, չկայ, աննման ա նա...

— Հա՛ ա՛։ Լա՛ւ։ Բա հըմի նրանք (Գիւլախանք) աղջիկը տալիս չեն էլի, գանգատ էլ են տուել... Ի՞նչ են առըմ, թէ ի՞նչ դեն անիլ քե։

— Ասըմ են՝ «Չատինին եա սպանիլ դենք, եա Ղազարից կորցնիլ, Սիբիր դրկիլ տալ...»

— Բա ես ճրտեղ եմ, որ նրանք քե կորցնիլ տան, Սիբիր դրկիլ տան, էշ եմ բրբջնըմ։ Իմ անըմը լսել են նրանք, Ղուրդ-Ալայգմանին ճանաչըմ են. հը՛ հը՛, ատամով կը քրքրեմ նրանց, ատամով... խելքներն ում վրայ ա գնըմ։

— Ալայգման դայի ջան, ես հու նրանց գիւլբարօթից չեմ վախենըմ, դատաստանի անից եմ սար ու ձոր ընկել, Դու որ ինձ դատաստանի ըռից ազատես, հենց կիմանամ թէ աշխարս ինձ ես բախչել։ Քու արած լաւութիւնը ես էլ մոռանալ չեմ...։

— Ես քե մենակ դատաստանից չեմ ազատիլու. մի քանի օրից ետը քե քօլըմը, մի փուլ եկած վանքի մէջ պսակիլու եմ... — համոզուած և դրական կերպով վճռեց նա։

— Վա՛հ, է՛ն ժամանակը հու փափախս վեկունեմ մատաղացու գառան պէս գլխովդ պոխտ կըղամ, — խինդը երեսին պատասխանեց Չատին, որն այն յոյ-

սովն էր եկել Ալայգմանի թիւ տակը մտել միայն, որ նա, իրեն դատաստանի կանչած ժամանակ օգնի, պաշտպանի:

— Դու, որ սարի պէս ետեւ կաղնես, դատաստանի ջուղաբը (պատասխանը) տաս, ես ինքս էլ ասլան-դափլան կգառնամ Սաթիկիս համար, — աւելի համարձակութիւն և վստահութիւն առնելով, կրկնեց Չատին:

— Դատաստանին ես պատասխան կը տամ էն ժամանակ, երբոր քե պսակած պրծած կլեմ, — կըրկնեց Ալայգմանը:

Այդ խօսակցութիւնից յետոյ բաւական ժամանակ էր անցել. նրանք կալում պատրաստած տեղները մտան և պարզ երկնքի, պայծառ լուսնի ու ճռռեքած աստղերի դիմաց մաքուր օդ շնչելով քնեցին:

Առաւօտեան Ալայգմանը Չատինին տանը թողեց և ինքը ձին հեծաւ գնաց մօտիկ թուրքի գիւղը, այնտեղ մի քանի թուրք երիտասարդների հետ ինչ խօսաց, ինչ չխօսաց, միայն չուտ տուն վերադարձաւ: Առաջից յետոյ նա իրենց սրահի տակ հրացանն ու սրերը մաքրում, իւզում էր. դա նշան էր, որ Ալայգմանը երեկոյեան կամ միւս օրը գլխաւորուելու է: Չատին ևս ջերմեռանդութեամբ օգնում էր նրան, գէնքեր պատրաստելում: Զէնքերից յետոյ Ալայգմանը ձիաների սարքը, թամբը, սանձը, ասպանդակները և այլն էր ամրացնում: Երեկոյեան միջանը նա տան գործերը կարգի դրեց, ծառաներին ինչ հարկաւորն

էր պատուիրեց, պրծաւ, ապա մի թեթիւ ընթրիք արաւ իւր հիւրի հետ միասին և ակտրժակով գարի ուտող ձիաների փռուցի ու զոնդոցի տակ փորը ինչ աչքները կպցրին թէ չէ՝ արագաղը կանչեց առաջին ծուլրուղուն:

ԺԲ.

Առաւօտը վաղ, արևի ծագելուց առաջ թաթլու գիւղից երկու գինուած ձիաւոր քամու պէս դուրս թռան գիւղից մի ակնթարթում անյայտացան թանձր անտառում այնպէս, ինչպէս կայծակի վայրկեանական լոյսը մութն ամպերի մէջ:

Չիանների պայտերից կայծեր թափողներից մինն Ալայգմանն էր, միւսը հագուտը փոխած Չատին: Նրանք ներկարարում ութ ընկեր դարձան: Նոր ձիաւորները մինը միւսից կտրիճ թուրքեր էին՝ ոտից ցգլուխ եարագ-ասպարում մտած:

Թանձր ու գեղնագունած անտառից դէնը բացում էր մի ընդարձակ դաշտավայր: Կոմսուտի կամ Համզի դիւզն էր դա, որի գէմ կանգնած էր լայնատաքած, կորագագաթ մերկ Արտաղը, նա ըստ երևոյթիւն իւր մէջքն ու կոր գագաթն այնպէս գողկող հոտ էր քաշում ու թագնում, որ կարծում էիր թէ վախակոխ է եղել դիմացից եկող գինուած խմբից:

Իսկ ամայի ձորին զարդանդ տուող հեծեալները, երբ նեղ քարկապ կիրճից զուխները դիմաց հանեցին, վերևում բաց ու պարզ երկնքը, առաջները Համզի գրաւիչ դիւզը տեսնն, կարծես թէ կրակ մը-

տաւ նրանց ջանքը, — նրանք մինը միւսի ետեւից՝ աջու
ձեռը քներակներին դրին ու միմեանց դէմ մրցելով՝
սկսեցին երգեր երգել ու զուարճանալ։
Երգողներից վերջինը իւր բաժին երգը վերջա-
ցրեց այս տողերով։

Ա՛...ա...այ...ազըզըմ եսխանդընան...

Բիւր դաստայ գիւլ օլսէյիդըմ,

Ասլսէյիդըմ եսխանդընան...

Երգողը ցանկանում է տեղն ու տեղը մի փունջ
վարդ դառնալ, իւր սիրուհու կրծքից կախուել և
և այնտեղ հանգիստ չունչ առնել...:

Այդ երգերը երգելիս, Չատին, կարծես իրեն
մոռացած, չալտիկ աչքերն արդաղին ձգած, սկզբում
լուռ լսում էր. միայն նկատելի էր, որ նրա քրտին-
քը վրայ է տալիս, որ նա յուզւում, ճմլւում է հետ-
զհետէ, որ նա ևս ցանկանում է կրակուած սրտիցը
կայծեր արձակել, և երբ մի փունջ վարդ դարձողը
ձայնը հանգցրեց, Չատին էլ չկարողացաւ յուզումը
զոպել, նա կոկորդը մաքրեց, իրեն թափ տուեց, մի
րոտէական ակնարկով աչքը Արդաղից թռցրեց Բուզ-
խանի ձորի աղբրակնի գլխի կանաչած տեղին ձգեց
և օղիկ-մոդիկ օթոթ-փօթոթ գալով, բրնձի նման
մանր ու սիւպտակ ատամները զընգզնդացնելով եր-
գեց երեք կարճոտն երգ։

Այդ երգերից մինը յիշեցնում էր նրան այն կա-
խարդուած րոտէն, երբ նա մոռացած իւր հօտն ու
գառնուկները, մոռացած իւր ընկեր Սաքոյին, գա-
ւազանը կրծքին կպցրած աչքը Գիւլականց վրանի

չէմքն էր կթել՝ Սաթենիկի դուրս գալու համար։

Երկրորդ երգով նա արտայայտում է իւր սրտի
վէրքերը, թէ որքան ծանր են նրանք. և ցանկա-
նում է իւր մահը, իսկ նրա թանկագին կեանքը։
Երրորդ երգը, որը դարերից առաջ է երգուել,
Չատին դնում և իւր սիրածի բերանը և նրա կոյ-
մից այսպէս ողբում։

«Ինձ գերի են տարել, գիտենաս, վաճառելու
են, թէ դու ճշմարիտ, անկեղծ սիրում ես ինձ,
որոնիր, գտիր, ազատիր ինձ...»:

Այս է երգերի թուրքերէնը։

Ա՛... ա... այ...

Ազըզըմ եար իշարդա,

Քեաւ բաղըրմ եար իշարդա մ...

Գէօզըմ գամփըզա գալըի՝

Չխմադի եար իշարդան . . .:

Ա՛ մ...այ...

Եարալի ամ, եազըղ ամ,

Եարայըմ չոփ տըր, եազըղ ա մ...մ...

Ման էօլում սանայ դուրբան՝

Սան էօլմա, ման եազըղ ա մ...մ...:

Ա՛ մ... այ...

Ափարդի թաթար մանի,

Եսիւր ամ, սաթար մանի.

Եար քի բափալը օլսայ,

Ախտարըփ՝ թափար մանի...

Չատին երգերի ամեն մի յանգը զարնելիս այն-
պէս էր յուզւում ու մղկտում, որ կարծում էր թէ
սրտի խօսքերից այն է պիտի հրգենհի ամբողջ համ-
դի լանջերն ու անտառները։ Գոլորչի չէր, որ դուրս

էր գալիս Չատինի ներսից, այլ սիրոյ կըրակի բոցեղէն ծուխ էր նա: Արդաղի քարերը ցցուած նայում էին Չատինին, միայն նրանք չէին հասկանում Չատինին, իսկ նրա կարեկից թուրք երիտասարդները արտասուեցին իսկոյն և աչքները սրբելով՝ խնդրեցին, որ մի անգամ էլ երգի նոյն երգը:

Չատին ուժեղ ձեռքը կրկին կարմիր ականջին դրեց և երկրորդ անգամ արդէն երգի կիսումն էր, որ փուլ ածեց ամենի սիրտը. լեռնանիւտ Ալայգմանըն էլ մի քանի արցունք ցոլացրեց իւր մեծ-մեծ աչքերից...: Իսկ թուրքերից մինը հիասթափուած բացականչեց. «Ալլահը վկայ, որ հիժէ սրա սիրածը մօր ծոցումն էլ լինի, որ ջիգեարիս գիւլա էլ տան, իրեսըս ետ չեմ թերիլու, դուրս եմ քաշիլու . . .

— Եթէ տեղ հասնէինք, հէնց էս ըրիկու կը թռցնէինք, — ոգևորուած ասացին և միւսները:

Այդ վրէժխնդրութեան լուպէին ձկնամէջք և կորագլուխ Արդաղն արդէն մեր հեծեալներին ջրբեր հարսի կժի պէս իւր ուսն էր առել և հետները միասին նայում էր դէպի հեռուն:

Արդաղի այն կողմում, հեռու հովտի վրայ իջնող քօլաբերանում մանր կէտերի պէս շարուած վրաններ էին մշմոշին տալիս և նրանց առաջը կարծես թէ մարդիկ լինէին շարժուելիս:

Չատին Արդաղի բարձր ուսապէնչում իւր ձայնը հանդիմանալուց յետոյ, Ալայգմանի կողքին կանգնած նրան մատով ցոյց էր տալիս վրանաբնակ հովիտը,

որն Ըրբաթան կամ Արեբաթան (կեանքի արևը կորցնող վայր) էր կոչւում:

— Հրէ հա՛, էն քօլի ըռխինն ա Ըրբաթանը, — ասում էր Չատին:

— Առաջներովս կարճադար ճամպայ չկայ, որ գլխիները (իջնենք), — հարցրեց Ալայգմանը:

— Չէ, առաջներս քարկապ ա, հրէ հա՛, էն պէտրը քոյերը պէտր ա պըտըտենք, մնէլ նհէ վրանքանք, որ թիւշ Ըրբաթանայ գլուխը դուս գանք, — մատով օդի մէջ գծեր անելով ցոյց էր տալիս հովիւ Չատին:

— Գեհ, եօլչի եօլիայ գեարար. էլ կաղնիլ միք, ըրեղնակն էնա մէր մտնիլու վրայ ա, գնանք բալի քիշ լուսով ճամպաներս կիսենք: Չատի, դու ճամպէքին վալադ ես, առաջներս ընկի, ամա աշխատի էնդայլի տեղերով տանես որ մօլթ ժամանակ քարերից ներքե չընկնենք, — առաց Ալայգմանն ու ձիու ազգրին ամուր մտրակեց:

Նրանք Արտաղից կրկին սկսան իջնել դէպի խաշթառակայ հանդերը: Ել չէին երգում նրանք. խորհրդածութիւններ էին անում, թէ ինչպէս պիտի հասնեն իրենց նպատակին:

— Հիւմբաթ, այ հիւմբաթ, — դիմեց Ալայգմանը թուրքերից մինին, — ասուիլ չի, բան ա, թէ որ ընտեղ կուլ ընկի, աշխատեցէք հալուսը հաթ գիւլա չզցէք, մարդ չսպանէք, երոր տենաք հարայ-դոպտին ընկաւ, թուանքով զարադորխու (սպառ-նալիք) տուէք, սուտ տեղից տըրըքքէք. միայն,

Թուանքներիդ բերանը միշտ վերե բռնեցէք . . .

—Այ Ալ'այզման, վայ թէ մենք մեզ բոշ անելիս նրանք մարդ սպանեն մեզանից,—նկատեց Թիւրքը:

—Է... ես մեր հայերի խասեաթը գիզըմ չեմ, նրանք դօրթ ա, հայ, հարայ կանեն, ամա խելքդ չկտրի, թէ սիրտ անեն մարդ սպանեն. իսկ Գիւլ-լականը, որոնց ես լաւ եմ ճանաչում, իրանց շուաքիցն էլ են վախենում, ուր մնաց որ եարաղաւորուած ութ ձիաւորի առաջը կաղնեն ու մարդ էլ սպանեն . . .

—Ի հարկէ, լաւ ա, որ բանը առանց ըրնի (արիւնի) գլուխ բերենք, թէ որ բանն արնի չհասցնեն,—ասաց մի ուրիշը:

—Առաջի պայմանը պա ա, տղերք, որ դուք աշխատէք ձեզ ճընանչել շտաք, ղալմաղալն ընկած Ժամանակ պէտք ա քիչ ու զարդանդոտ խօտաք. գիւլ-լա գցելիս պէտք ա ծառից եա քարից մօտիկ կաղ-նէք, որ Թագնուէք (պատսպարուէք). փախուստ տալիս ջահտ արէք կռմաններով խաբար տալ. իսկ թէ մեզանից մէկն սպանուի, էլ չխնայէք ոչ ոքի...

—Այ Ալ'այզման:

—Ասա, պատասխանեց նա:

—Ձեռք բերելուց ետոյ՝ աղջկանը սրտեղ, ու պէտք ա պսակի,—հարցրեց մի հասակաւորը Թուրքից:

—Մեր դուլէն մի դոշաղ սըտոտ տէրտէր կայ խոտտացել ա, որ մի էօրանայ (աւերակ) վանքում պսակի,—ասաց Ալ'այզմանը:

—Ալ'այզման դայի, հաղարծնի Պօղոս վարդապետն էլ ասել ա թէ «ես կպսակեմ», Գօշայ էրէցն էլ. որ խորհուրդ տաս դէնը կփախցնենք,—ասաց Չատին:

—Դու պսակիլու հոգսը քաշիլ մի, այ որդի, ես ամենը գլուխ կը բերեմ,—կրկին ձիուն մտրակելով, ասաց Ալ'այզմանը:

Մութն արդէն կոխել էլ, որ նրանք խորհրդածութիւնից դադարեցին և երբ տերեախիտ անտառը մտան, էլ աչքներն առաջները չէր տեսնում. իջան ձիաներից և ցախերից պաշտպանուելով, սար ու քոլ ոտի տակ տալով, լուսադիմին Էրբըթանայ ձորը հասան, ուր մի մոլուտում ձիաները կապեցին, խոտ գտան առաջներն ածեցին և իրենք աւաղակի խորագիտութեամբ սկսեցին դիտել դէպի վրանների կողմը: Գարնան մտած այդ վայրկեանին Չատին կողքին յանկարծ մի հովիւ յայտնուեց: Ալ'այզմանը հէնց կարծեց, թէ նա Գիւլլականցից է: «Գիւլլախորով արէք, բռնեց Չատինին»,—ասաց թէ չէ՝ Թուրքերը վրաընկան գէնքերին և քիչ էր մնում քնացնեն անմեղ մարդուն, բայց Չատին շտապեց յայտնել, որ նա իւր հաւատարիմ ընկեր Սաքոն է, որի հօտն արածում է իրենցից վերեի լանջում: Սաքոն յայտնեց, որ Սաթենիկը վրանումը չէ, այլ փոքր ինչ հեռու վրաններից, մի ձորում ընկուզենու տակ ընկուղ է ժողովում:

Հովիւ Սաքոն նրանց առաջն ընկաւ, գնացին դէպի այն ձորակը, ուր Սաթենիկն իւր հօրեղբօր

սրբի Գրիգորի և մի խումբ կանանց և երեխանց հետ միասին ընկուզի էին գնացել:

Գիւլլականց Գրիգորը բարձրացել էր ընկուզենու ճիւղերի վրայ և մի երկար ձող ձեռին ճիւղերին խփելով կարկուտի պէս ընկուզ էր թափում ներքև. իսկ ծառի տակիները դէս ու դէն թռչկոտալէ ընկած ընկոյզները շուա-շուտ ժողովում էին փէշները և ապա դատարկում պարկերի մէջ:

Թուրքերից մինը անտառից համարձակ իջաւ ներքև և հրացանի կիսից ամուր բռնած կանգնեց ընկուզենու տակ և մի քանի բուռը ընկուզ ժողովելով, սկսեց մի կողմից ջարդել, միւս կողմից հանգարտ խօսել Գրիգորի հետ, որպէս զի տակիները փախուտ չտան:

— Բայց յանկարծ ճշացին ամենքը և ձխաւորներով շրջապատած, մնացին տեղերն արձանացած:

— Հը', սասներդ, — սպառնացին թուրքերը և հրացանները բռնեցին դէպի նրանց:

Չատին իջաւ իւր ձիուց և քաղցած գայլի նման գրկելով Սաթենիկին դրեց Այայդմանի գաւտկին: Վերջինս իւր ուժեղ բազուկներով բռնեց Սաթենիկին, կապեց իւր մէջքից, ասպանդակները խրփեց ձիու փորին, գլուխը բաց թողեց: Չատին, իբրև ճանապարհներին ծանօթ, նրա առաջն ընկած ճանապարհ էր բաց անում. իսկ միւսներն Այայդմանի թիկունքը պահում էին: Մի ակնթարթում նրանք հրեղէնի նման անյայտացան անտառում:

Հարայն ընկաւ. բինան չարժուեց, ամեն կողմից

խումբ-խումբ մարդիկ ընկան փախչողներին ետևից, միւսները վազեցին գիւղի դիմացի բլուրը և այն տեղից սրտապատառ աղաղակներով հարայ տուին:

— Էհէյ, Գիւլլականց տղերանցն ասեցէք Սաթենիկին էլի տարան, էլի տարան հա... փախցըրին... — անդադար կանչում էին աղիկտուր ձայները:

Գիւղի կողմից, Գալին, Մուսին ու Խեչոն և շատ շատերը Գիւլլականցից, կապակոտոր եղած՝ ձիով, հրացաններով դուրս թափեցին դէպի կապքարը, այնտեղ աննպատակ հրացաններ շատ արձակեցին, բայց իզուր, Սաթենիկին արդէն տարել էին...



ա. Զահանայի ընտրութիւնը գիտում:

բ. Ոսկէսէրի պատկը.

գ. Հովիւ Զատինի սէրը:



ՀՀ Ազգային գրադարան



NL0338543

